

CLV

ՎԻԼՔԵԼՄ ԲՈՒՇ

**ՀԻՍՏՈՒՄԸ՝
մեր ճակատագիրը**

Դասախոսություն՝
ճայմերիթից

CLV

Christliche
Literatur-Verbreitung e.V.
Postfach 11 01 35 · 33661 Bielefeld

Բովանդակություն

© Քննադիրը by Aussat-und Schriftenmissions-Verlag GmbH, Neukirchen-Vluyn Բնագրի անվանումը. Jesus unser Schicksal	
© Հայերեն հրատարակություն. 2004 ISBN 3-89397-531-4	
1. Auflage 2004	
© der deutschen Ausgabe Aussat Verlag D-47506 Neukirchen-Vluyn Originaltitel: Jesus – unser Schicksal	
© der armenischen Ausgabe CLV • Christliche Literatur-Verbreitung Postfach 110135 • D-33661 Bielefeld Internet: www.clv.de Druck und Bindung: C.H. Beck, Nördlingen	
Աստված, այո՛, քայց ինչո՞ւ Հիսուս-----	7
Ինչո՞ւ եմ ես ապրում -----	22
Ես ժամանակ չունեմ-----	35
Ուշադրություն, վտանգավոր է կյանքի համար-----	49
Ի՞նչ ենք ամերու -----	63
Ինչո՞ւ է Աստված լռում-----	77
Միղե՛լու մեղ իրափո՛ւմը-----	92
Կարելի՞ է խոսել Աստծու հետ -----	103
Ինչպե՞ս անալ կանգուն, երբ այլևս չենք կարողանում հավա- տալ-----	115
Ինչպե՞ս հաշտվել կյանքի հետ, եթե մեզ ամբողջատ ողբեցում են զանցանքներն ու քացթողումները-----	130
Ինչպե՞ս վարվենք, երբ մարդիկ նյարդայնացնում են մեզ---	144
Անեն ինչ պետք է փոխվի, քայց ինչպե՞ս -----	157
Առանց ինձ -----	170
Կարո՞ղ ենք պարզեցնել կրոնական հարցեր-----	181
Քրիստոնեությունը անճանակա՞ն գործ է -----	197
Ե՞րբ կվերանա աշխարհը -----	213
Ի՞նչ ենք վատասկում մեր կյանքը Աստծուն նվիրաբերելու՞-----	230

ՀԻՍՏՈՒՄԸ՝ մեր ճակատագիրը

Հիսուսը՝ մեր ճակատագիրը: Ես եմ հոգեւոր հովիւի Վիլհելմ Բուշի քարոզչութեան հիմնական թեման:

Վիլհելմ Բուշը մեծ խանրակառոյթայանք աշխատել է Գեղմանիայի Էսենը քաղաքում՝ որպէս երիտասարդութեան հոգեւոր հովիւ: Վիլհելմը ժամանակ, լինելով բանաստեղծ, բազմաթիւ գրքերի հեղինակ, Ալեհարարանի ճակարակ քարտիչ՝ բազմազան երկար շրջագայել է:

Հազարավոր մարդիկ էին հետեւում նրա քարոզներին:

Նա համոզուած էր, որ Հիսուս Քրիստոսի Ալեհարարանք ամենախրատարիչ լուրն է:

Յանկանու՞ծ եք լսել այդ լուրը:

Դա հնարավոր է:

Պատկերացրեք՝ նստած եք լսարանում ու լսում եք նրա քարոզը: Չատ շուտով կհամոզուեք, որ մարդկութեան համար ամենակարեւոր թեման սա է. «Հիսուսը՝ մեր ճակատագիրը»:

Կարդէ՛ւնեց Էրինգ

ԱՍՏԿԱՆՈՒՆ, ԱՅՈՒՆ, ԲԱՅՅ ԻՆՉՈՒՆ Ի ՀԻՍՏՈՒՄ

Ես մի ծեր հոգեւոր հովիւ եմ: Իմ ամբողջ կյանքը սպառել է աշխատել նման ծեր քարոզարան, որի բնակիչները հաճախ էին ինձ հարցնում. «Ինչո՞ւ է Աստուած այս անձինք թող տալիս», «Կայենն ու Աբելը եղբայրներ էին, ինչո՞ւ Կայենն սպանեց Աբելին», «Որտեղի՞ց է Կայենն իր համար կին գտել»: Իսկ ավելի հաճախ հարցնում էին. «Պատկերի՛, Դուք միշտ խոսում եք Հիսուսի մասին, բայց չէ՞ որ դա ֆրանստիզն է: Ի՞նչ տարբերություն՝ թե մարդը որ կրոնին է պատկանում. կարեւորն այն է, որ մենք Ամենաբարձրիւյալ Աստուծու առաջ շնորհ ունենանք»:

Տարօրինակ է ինչո՞ւ, ճիշտ չէ՞: Այս ցույց կարծիքն է ունեցել նաև իմ հայրենակից Գլոբեն, որը նույնպէս Ֆրանկֆորտից էր. «Կարեւորը զգացնումն է, իսկ անունը միայն ձայն է ու ծովս: Ալլահ ենք ասում թե Բուդդա, ճակատագիր թե բարձրիւյալ՝ մի էակ է, տարբերություն չկա, կարեւորն այն է, որ մենք, ընդհանրապէս, հազար տոննամք, իսկ թե ինչպէս կկոչվի դա, կարեւոր չէ»: Այսպէս են մտածում նաև ձեզանից շատերը. այդպէս չէ՞: Հիշում եմ մի տարեց կնոջ, որն ինձ ասում էր. «Ա՛յ, պատկերի, ինչո՞ւ եք անդադար Հիսուսի մասին պատմում, մի՞թե Ինքը՝ Հիսուսը չի ասել. «Իմ Հոր տան մեջ բազում օրեաններ կան. այնտեղ բոլորի համար էլ տեղ կգտնվի»: Բարեկամներ, սա մեծ շփոթություն է:

Մի անգամ, Բեռլինի «Տեմպելգրիֆեր» օրանախախայանում, բռնիքից առաջ ստուգում էին մեր անձնագրերը: Իմ առաջ կանգնած էր մի բարձրահասակ պարոն, որը, բխում է՝ վիճչաւ հիմա էլ աչքերիս առաջ է. անդառա մի մարդ՝ պայտասակը թեատակին: Նա մեկնեց իր անձնագիրը: Հսկիչը, գննելով այն, ասաց. «Ներողութիւն, Ձեր անձնագրի ժամկետը անցել է»: Պարոնը սկսեց առարկել. «Դա ի՞նչ նշանակություն ունի, կարեւորն այն է, որ ես անձնագիր ունեմ»: «Ո՛չ,՝ առարկեց հսկիչը. -կարեւորն այն է, որ Ձեր անձնագիրը ու՛ժի մեջ լինի»:

Ճիշտ այդպէս էլ հազարներ է: Կարեւորը այն չէ, որ ես

ինչ-որ հավատ ունենաւ: Աննն մեկս ինչ-որ հավատ ունենք: Վերջերս մեկը ինձ ասաց. «Ես հավատում եմ, որ երկու յիսուս միեկը կարելի է լավ ապուր եկել»: Սա էլ է հավատ՝ քեզ ետ քակակամին հասարակ: Կարեւորը այն չէ, քե ղոյք ինչ հավատ կունենաք, այլ այն, որ ձեր հավատը ճշմարիտ լինի: Այնպիսի մի հավատ, որով կարողանաք հարթահարել կյանքի փորձությունները բոլոր իրավիճակներում: Այնպիսի մի հավատ, որ մոյհիսկ մահը ապրասփելի չլինի: Մանը մեր հավատի փորձության ամենալավ միջոցն է:

Գոյություն ունի միայն մեկ ճշմարիտ հավատ, որով, իրոք, այս աշխարհում արժե ապրել ու մեռնել: Դա Աստծու Որդու՝ Տեր Հիսուս Քրիստոսի նկատմամբ ունեցած հավատն է: Այո, Հիսուսը Ինքն է ասել, «Իմ Հոր տանը բազում օրեամներ կան...»: Սակայն գոյություն ունի այդ օրեամները տանող միայն մեկ դուռ: Նա նաև ասում է. «Ես եմ դուռը. քե մեկը Իմ միջով մտնի, կփրկվի...» (Հովհ. 10,9): Այդ դուռը Հիսուսն է: Ես գիտեմ, որ մարդիկ այդ մասին չեն ուզում լսել: Աստծու քեմայով կարելի է ժամերով վիճարանել: Մեկը Աստծուն մի տեսակ է պատկերացնում, մյուսը՝ մեկ այլ: Սակայն Հիսուսը մեզ համար չի կարող վիճարանության քեմա լինել: Թույլ տվեք ասել. «Միայն ես միայն Հիսուսի հավատն է փրկարար, ես միայն Հիսուսի հավատով է, որ արժե ապրել ու մեռնել»:

Պատմեմ մի դեպք նրանց մասին, ում այսպիսի հավատը ծիծաղելի է քվում: Տարիներ առաջ, երբ քայլում էի Էստեն քաղաքի մի փողոցով, հանդիպեցի երկու հանքագործ քանփորներին: Նրանցից մեկը բարեկեց. «Բարի՛ օր, պատվելի»: «Մի՞քե մենք ծանոթներ ենք», զարմացած հարցրի ես: Նա սկսեց բացատրել ընկերոջը. «Մա պատվելի Բորն է, մի շնորհալի տղա»: «Շնորհակալ եմ», ասացի: Հետո նա շարունակեց. «Լավ տղա է, բայց խեղ չունի»: «Այսինքն, ինչպե՞ս քե խեղը չունեմ», վրդովվեցի ես: «Իսկապես, պատվելին լավ տղա է, բայց մի քերություն ունի. անընդհատ Հիսուսի մասին է խոսում»: «Մի ղուպե, -որակությամբ բացակայանջեցի ես, -դա բոլորովին այլ բան է: Հարցող տարուց հետո դուք հավիտենականության մեջ պետք է լինեք, ես այնտեղ պիտի որոշվի ձեր ճակատագիրը, այսինքն, ամեն ինչ պետք է կախված լինի նրանցից, քե դուք ճանաչե՞լ եք արդյոք Հիսուսը:

սին: Միայն դրանցից հետո պետք է որոշվի, քե ուր եք գնում՝ դուս՞խտ քե՞ ղերիլք: Իսկ դուք Հիսուսին ճանաչու՞մ եք»: «Այ, տեսա՞՞ր, -զարծյալ ծիծաղեց՝ դիմերով ընկերոջը, -նա մորից մույնն է կրկնում»:

Ես հիմա էլ եմ ուզում այդ մոյհը կրկնել: Աստվածաշնչում կա մի հատված, որը կուզեի մեջբերել այստեղ. «Ով ընդունում է Որդուն, ընդունում է նաև կյանքը. ու ով չի ընդունում Աստծու Որդուն, չի ընդունում նաև կյանքը» (Ա. Հովհ. 5.12): Հավանաբար, դուք լսել եք Հիսուս Քրիստոսի մասին, բայց «Աստծու Որդուն ընդունող...», լսու՞մ եք, ընդունողը կյանք ունի՝ այստեղ ես հավիտենականության մեջ: Իսկ Աստծու Որդուն չունեցողը կյանք չունի, ես դա մեզ ասում է Աստծու Խոսքը՝ Աստվածաշունչը: Ժողովրդական ասացվածքը ասում է. «Ով ունի, նա ունի»: Այս մոյհ միտքն է արտահայտում նաև Աստվածաշնչի վերոհիշյալ հատվածը: Համենայն դեպ, ես կուզեի դրանում ձեզ հանձնել՝ ձեր իսկ բարօրության համար, որպեսզի ընդունեք Հիսուսին ես ձեր կյանքը Նրան հանձնեք, քանի որ առանց Հիսուսի՝ կյանքն անհիմնա է:

Իսկ հիմա ես ուզում եմ ձեզ պատմել, քե ինչո՞ւ է Հիսուսը ամեն բան՝ ամեն ինչում, ես ինչո՞ւ է Հիսուսին հավատալը համարվում եզակի ճշմարտություն: Թույլ տվեք հավաքել մտքերս ու ամեն ինչ ինձ վրա առեկող՝ բացատրել, քե ինչո՞ւ է Հիսուսն ինձ այդքան անհրաժեշտ ես ինչո՞ւ եմ հավատում Նրան:

1. Հիսուսը Աստծու հայտնությունն է

Եթե որեւէ մեկը ինձ ասի. «Ես հավատում եմ Աստծուն, Հիսուսն ինձ հարկավոր չէ», ես նրան կպատասխանեմ. «Ինչպիսի՞ անմտություն, չէ՞ որ Աստված անտեսանելի է, ես առանց Հիսուսի՝ մենք Աստծու մասին ոչինչ չէինք կարող իմանալ»:

Ծիշտ է, մարդիկ կարող են իրենց համար տարբեր աստվածներ ստեղծել, օրինակ՝ այնպիսի մի աստծու, որը չի արգելում ամեն օր հինգ շիշ գարեջուր ընկել: Բայց դա բոլորովին էլ Աստված չէ: Ալլահ, Բորդուս՝ որանք մարդկանց ցամաքությունների էկրանավորումն են: Իսկ Աստված՝:

Առանց Հիսուսին ճանաչելու՝ Աստծու մասին մենք ոչինչ չենք կարող իմանալ: Աստված բացահայտվում է Հիսուսի մեջ: Աստված Հիսուսի միջոցով հայտնվեց մարդկությանը:

Ուզում եմ ասվածը բացատրել հետևյալ օրինակով. պատկերացրեք բանձր ծիլի մի գանգված, որի հետևում Աստված է: Մարդիկ առանց Նրա չեն կարողանում ասրել եւ, ահա, սկսում են փնտրել Աստծուն: Նրանք փորձում են սպրդելով ու սողոսկելով ճեղքել այդ ծիլի գանգվածը: Դա կրճի ճիգն է: Բոլոր կրոնները համարվում են Աստծուն որոնելու մարդկային ձգտումներ: Եվ դրանց բոլորին միասնորոշում է այն, որ նրանք մոլորվում են այդ ծիլի գանգվածում եւ չեն կարողանում գտնել Աստծուն, քանի որ Աստված անհասանելի ու անտեսանելի է: Այդ գաղափարը ճիշտ հասկանալով՝ Եսայի մարգարեն ամբողջ սրտով արարակել է. «Տեղ իմ, մեզ չենք կարող Քեզ հասնել: Ախ, եթե Դու ճեղքելի երկիւնքը ու իջնեիր...»: Եվ պատկերացնու՞՞՛ք: Աստված լսեց նրա ձայնը: Աստված ճեղքեց ծիլի գանգվածը ու հանձնեց Հիսուսին՝ մեզ մոտ եկալ: Դա պատահեց այն ժամանակ, երբ հրեշտակները Բեթլեհեմում հայտարարում էին. «Այսօր Դավթի քաղաքում ծեղ հանար ծնվեց մի Փրկիչ, որ օծյալ Տեղն է. փառք Աստծուն բարձունքներում...» (Լուկ. 2.11,14): Եվ ինձա Հիսուսն ասում է. «Ով որ ինձ տեսնում է, նա Հորն է տեսնում»:

Առանց Հիսուսի՝ ես ոչինչ չեի կարող իմանալ Աստծու մասին: Նա է այն Միակը, Ուժից եւ կարող եմ Աստծուն վերաբերող ստույգ տեղեկություններ ստանալ: Այսքանից հետո ինչպե՞ս ասել, թե ես կարող եմ դեկավարվել առանց Հիսուսի:

Ես պետք է համառոտ խոսեմ այս մասին, որտեղ, ստիպված եմ շատ բաներ քայքայել: Ես կարող եմ հնարավորինս շատ պատմություններ պատմել Հիսուսի մասին, բայց առաջին անգամ պահանջվում եմ կարեւորագույն օրինակներով, որոնք պարզաբանում են, թե ինչի՞ համար է Հիսուսը:

2. Հիսուսը Աստծու փրկարար սերն է

Վերջերս հարցազրույց էի տալիս մի լրագրողի, որը հարցրեց. «Ընդհանրապես, Դուք ինչու՞ եք այդպիսի դաս-

սակասություններ կարդում»: Ես պատասխանեցի. «Որովհետեւ չեմ ուզում, որ մարդիկ դժոխք ընկնեն»: Նա ծպտալով ասաց. «Այդպիսի բան չի կարող պատահել»: Ես էլ իմ հերթին առարկեցի. «Սլյանեք, հարյուր տարի հետո կիմանաք. թե ո՞վ է ճիշտ, դու՞ք թե՞ Աստու խոսքը: Ասացե՛ք, դուք երբեւէ վախեցե՞լ եք Աստծուց»: «Ո՛չ, -պատասխանեց լրագրողը, -գթալիրտ Աստծուց պետք չէ վախենալ»: Այդ ժամանակ ես ասացի. «Այ, հենց դա է Ձեր սխալը: Ով որ թեկուզ մի փոքր պատկերացում ունի Աստծու մասին, նա պետք է հասկանա, որ չկա ավելի սարսափելի բան, քան սեփական մեղքերի համար Սուրբ Աստծու կործից դատալիքը: Դուք կարծում եք, թե Նա հավանությու՞ն է տալիս մեր մեղքերին: Դուք խոսում եք գթալիրտ Աստծու մասին, իսկ Աստվածաշունչը բոլորովին այլ բան է ասում. «Ահափոր է ընկնել կենդանի Աստծու ձեռքը»:

Երբեքից Աստծու երկյուղը կրե՞լ եք ձեր սրտում: Եթե ոչ, ապա դուք բոլորովին չեք ըմբռնել Աստծու անհանդուրժողականության չափը ձեր սեփական մեղքերի նկատմամբ: Երբ մարդը Աստծուց վախենում է, նա ինքն իրեն հաճախ հարց է տալիս. «Ինչպե՞ս պիտի ներկայանամ Աստծու առաջ»: Իմ կարծիքով՝ Աստծու բարկությունից չեղյալները մեր ժամանակի ամենամեծ անհեթեթությունն է: Աստծու բարկությունը ժողովրդի հանդեպ՝ սուկալի սահմանափակումների նշան է: Պրոֆեսոր Կարլ Հեյնը մի անգամ պատմում էր իր Չինաստան կատարած ճամփորդության մասին: Այնտեղ նրան ուղեկցել են մի բարձր կեռ, որը «երկնքի գոհաստեղան» էր: Չինացիները նրան բացատրել էին, որ «հաշտեցման գիշերը» գույնզգույն լազարներով հազարավոր մարդիկ այստեղ են գալիս՝ հաշտվելու Աստծու հետ: Կայսրը (այն ժամանակի դեռ Չինաստանը դեկավորում էին կայսրերը) անձամբ բարձրանում էր այդ կեռան գագաթը, որպեսզի ժողովրդի համար Աստծուն գոհ մատուցեր: Պատմելով այս մասին՝ պրոֆեսոր Հեյնը ասաց. «Այդպիսով հեթանոսները որոշ գաղափար էին կազմում Աստծու բարկության եւ այն մասին, որ մարդ պարտաձը Աստծու հետ հաշտվելու կարիք ունի»:

Իսկ ահա կրթված եվրոպացիներ կարծում է, որ հարկավոր չէ վախենալ գթալիրտ Աստծուց, որը, իբր, «երջանիկ է», որ մարդիկ ազնվորեն վճարում են եկեղեցական հարկե-

րը: Միրելի՛ բարեկամներ, եկեք վախենանք Աստծուց, չէ՞ որ մենք բոլորս մեղապիտոներ ենք: Դուք՝ ո՞չ: Չեմ կարծում:

Երբ մենք տիրեր ենք վախենալ Աստծուց, փառացներք. «Ինչպե՞ս կարող ենք փրկվել Աստծու բարկությունից: Որտե՞ղ է փրկությունը: Եվ այդ ժամանակ մեզ համար կբացահայտվի Հիսուսը՝ Աստծու փրկարար սերը: Աստված ուզում է, որ մարդիկ փրկվեն: Սակայն՝ Նա անարդար լինել չի կարող: Նա չի կարող անտարբեր լինել մեր մեղքերի նկատմամբ: Եվ ինչն այս է պատճառը, որ Նա Իր սիրածին Որդուն տվեց, որպեսզի մեզ փրկի ու հաշտեցնի Իր հետ:

Եվ եք մտքով տեղափոխվենք Երուսաղեմ: Դեռ քարաքին չհասած՝ մի գազար ենք տեսնում: Տեսնում ենք հազարավոր մարդկանց, որոնց գլխավերեւում երեք խաչ է կանգնեցված: Ձախ ու աջ կողմերի խաչերին գանձված մարդիկ մեզ պես մեղապիտոներ են, իսկ մեջտեղի՞նը...: Նայե՛ք Նրան, Որի գլխին փշեպսակ է դրված: Դա կենդանի Աստծու Որդին է. «Դու՛ ազնվաբար, Դու՛ լուսավոր մի կեղտաբանք, ինչի՞՞ համար եմ թեզ այդպես անպատիվ արել»: Այդ խաչը համարվում է Աստծու գոհասերլանը, իսկ Հիսուսը՝ Աստծու Գառը, Որի վրա ծանրացած է ամբողջ աշխարհի մեղքը: Այդպիսով մարդկությունը պետք է հաշտվի Հայր Աստծու հետ:

Տեսնո՞ւ՞մ եք՝ եթե դուք Հիսուսին չգտնեք, կննջեք Աստծու բարկության տակ: Միայն նա է ստանում Աստծու խաղաղությունը, ով գալիս է Հիսուսի մոտ. «Մեր աշխարհի պատիճը Նրա վրա էր»:

Թո՛ւյլ տվեք մի հասարակ օրինակ բերեմ: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ես հրետանավոր էի: Մենք վախճանավոր գնդացիորներ ունեինք: Մի անգամ, երբ հետևապլավորի առջևում էինք, թշնամու տանկերը գրոհեցին մեզ վրա: Գնդացիորների փամփուշտները կարկուտի պես խփում էին մեր վախճաններին: Վախանները այնքան ամուր էին, որ նրանց հետևում մեզ զգում էինք կատարյալ անվտանգության մեջ: Այդ պահին ես մտածում էի. «Եթե հիմա ձեռքս վախճանի հետեւից դուրս հանեմ, գնդակի հարվածից անմիջապես կփշրվի, ես ես կմեռնեմ»:

Դուք հասկանո՞ւմ եք: Հիսուսը ինձ համար այդպիսի մի վախճան է դարձել: Ես գիտեմ, որ Աստծու դատաստանի ժամանակ առանց իմ Հիսուսի՝ կյործանվեմ: Առանց

Հիսուսի՝ իմ սրտում խաղաղություն չի լինի: Առանց Հիսուսի՝ ես չեմ կարող մեռնել: Առանց Հիսուսի՝ ես կգնամ հավտենական կործանում: Իհարկե, հափտենական կործանում գոյություն ունի, բայց եթե ես կանգնած եմ Հիսուսի խաչի հետևում, այս կատարյալ անվտանգության մեջ եմ (ինչպես վախճանի հետևում): Ես գիտեմ, համոզված եմ, որ Նա ինձ հաշտեցրել է Հոր հետ: Նա իմ Փրկիչն է, իմ Հիսուսը՝ Աստծու սիրո Փրկիչը:

Դուք լսո՞ւ՞մ եք. Աստված ուզում է, որ բոլոր մարդիկ փրկվեն, առա թե ինչու Նա Իր սիրելի Որդուն տվեց մեր փրկության համար:

Չհանգստանաք այնքան ժամանակ, մինչև չգտնեք Աստծու խաղաղությունն ու փրկությունը:

Ինչի՞՞ համար է Հիսուսը:

3. Հիսուսը միակն է, որ կարող է հաղթանարել մեր կյանքի ամենամեծ հոգսը

Գիտե՞ք, թե որն է մեր կյանքի ամենամեծ հոգսը: Ծերերը, իհարկե, մտածում են իրենց լսողի, երիկամների, մի խոսքով՝ իրենց առողջության մասին: Երիտասարդները ջանիլ աղբիկների մասին են մտածում ու հավատակալ: Այսփնքն, յուրաքանչյուր մարդ ինչ-որ հոգս ունի, սակայն, հավատացե՛ք ինձ, որ մեր կյանքի ամենամեծ հոգսը մեր մերթերն են Աստծու առաջ:

Տասնյակ տարիներ շարունակ ես աշխատել եմ որպես երիտասարդության հոգևոր հովիվ: Ես միշտ փնտրել եմ վառ, պատկերավոր օրինակներ, որպեսզի կարողանամ բացահայտել Աստծու առաջ գործած մեր մեղքերի էությունը: Այդ օրինակներից մեկը հիմա ուզում եմ ձեզ ներկայացնել: Պատկերացրեք, թե ձեր ծնված օրից ձեր վզին երկաթյա շրթա է անցկացված: Ամեն անգամ, երբ դուք մեղք եք գործում, այդ շրթային մի օղակ է ավելանում: Օրինակ, եթե իմ գլխում մի անմաքուր միտք է ծագում, ապա մի օղակ վզիս ավելանում է: Եթե, ասենք, կոպիտ վարդեցի ծնողիս հետ՝ ես մեկ օղակ: Մարդկանց հետ սիրավոր շխտեցի՞՛ր դարձյալ մեկ օղակ: Մի օր Աստծուն չարոթեցի՞՛ էլի մեկ օղակ, մի տեղ անազնվություն կամ խաբեբայություն՝

խնդրեմ, նորից օրակ եւ այդպէս շարունակ:

Դուք հիմա պատկերացնում եք, թե ինչքան երկար շղթա ենք մեզ հետ քարշ տակիս: Դու մեր պարտքերի շղթան է, հասկանում եք: Աստծու առաջ մեր պարտքերը կամ մեղքերը իրական են համարվում: Այդ շղթան, թերեւս, անտեսանելի է, սակայն, չսփազանց երկար է եւ մեզ ամեն օր այն քարշ ենք տակիս մեզ հետ: Ես հաճախ ինքս ինձ հարց եմ տակիս. ինչու մարդիկ չեն կարողանում եղջանիկ լինել: Ասացեք, խնդրեմ, դուք մեզ երջանի՞չ եք գտնում: Դուք չեք կարող երջանիկ լինել, քանի դեռ քարշ եք տակիս մեր մեղքերի շղթան: Այդ ծանր շղթայից մեզ ոչ քահանաները, ոչ պատգեղները, ոչ էլ նույնիսկ հրեշտակները ազատել չեն կարող: Աստված նույնպէս չի օգնի, քանի որ Նա քարեպաշտ է. «Մարդը ինչ որ ցանի, այն կհեճի»:

Եվ, ահա, Հիսուսը: Նա եւ միայն Նա՝ Միակը, Եզակին, միայն Աստծու Որդին կարող է հաղթել մեր կյանքի ամենամեծ իրագործը: Նա մեր մեղքերի համար է մեռել: Նա Իր մտնով վճարել է մեր մեղքերի վարձը, ուստի, միայն Նա կարող է արձակել մեր մեղքերի շղթան:

Ես ուզում եմ դա բացատրել իմ սեփական փորձով, այն համոզմունքը, որ մեղքերս ներված են, ես ազատություն եմ համարում: Ես դիմում եմ ծերերին «Դուք հնարագիտություն ունեք մեռնելուց առաջ բարություն խնդրել մեր մեղքերի համար: Մեղքերով հավիտենականություն մտնելը անապարհ է»:

Ես ճանաչում եմ մարդկանց, ովքեր միշտ պնդում են. «Ես քարի եմ, ես արդար եմ», իսկ մահվան շեմին գիտակցում են, որ կյանքում քվալացյալ հարթությունները պղտոր հոտանքով լրդում են դեպի հավերժություն՝ Աստծուն ընդառայ: Բացի մեղքերից՝ գրանք իրենց հետ ոչինչ չեն կարող տանել. ոչ տուն, ոչ էլ դրամարկրի գրքոյի: Այս վիճակում կանգնել Աստծու առաջ: Մարտափեփ է, սակայն այսօր շատ մարդիկ են այդպէս մեռնում: Իսկ դուք չպետք է այդպէս մեռնեք, որովհետեւ Հիսուսը կարող է ներել մեր մեղքերը: Եվ դա համարվում է ազատություններից մեծագույնը, որն ընդհանրապէս գոյություն ունի:

Ես տասնութ տարեկանից գիտեմ, թե ինչ քան է մեղքերի ներումը: Իմ շղթան վարդուց փշրվել, կործանվել է: Ես ուզում եմ, որ մեր շղթան նույնպէս փշրվի ու կործանվի:

Հենց այսօր եւեթ մտեցեք Հիսուսին: Նա մեզ ապատմ է: Այսպէս դիմեք Նրան. «Տե՛ր իմ, կյանքս լի է մեղքերով ու արատներով: Մի՞ճե՛ր հիմա ես լռել եմ այդ մտայն, բայց հիմա Քո առաջ եմ դնում իմ արած տարիները ու հավատում, որ Քո արյանք Դու լվացել ես իմ մեղքերը: Ների՛ր ինձ՝ մեղավորիս»: Ինչ հրաշալի բան է, երբ մարդը մեղքերի բողոքում է ստանում:

17-րդ դարում Անգլիայում մի մարդ էր ապրում, ազգանունը՝ Բուցյան: Այս մարդը իր հավատի պատճառով երկար տարիներ ձերբակալված է եղել: Այդպիսի դեպքեր պատահել են բոլոր ժամանակներում: Աստու խոսքից հետո հասարակության մեջ իրագործվող անենտիաստատուն հայտնությունները ստեղծագործվել են բանտերում: Ահա Բուցյանն էլ բանտում մի հրաշալի գիրք է գրում, որը այսօր նույնպէս կարդում ենք մեծ հետաքրքրությամբ: Նա գրում է մի քրիստոնյա մարդու մտայն, որը ներկայացվում է որպէս վտանգների ու արկածների միջով անցնող մի ճանապարհորդ: Այդ գիրքը այսպէս է սկսվում. «Մի մարդ ապրում էր Խաղարություն անունով մի քաղաքում: Մի օր այս մարդը սկսում է հոգվել ու կնոջն ասում է. «Ինչ-որ բան արտուկ չէ, ես հանգիստ չունեմ, ես երջանիկ չեմ, ես պիտի հեռանամ այս քաղաքից»: Կինն ասում է. «Դու նյարդայնացնում ես, քեզ հանգիստ է հարկավոր»: Նրան, սակայն, ոչինչ չի օգնում, ու մի օր էլ նա հեռանում է այդ քաղաքից: Հանկարծ ճանապարհին նկատում է, որ ինչ-որ ծանր բեռ կա մեջքին: Ուզում է ազատվել դրանից, բայց չի կարողանում: Ինչքան շատ է հեռանում, այնքան բեռը ավելի է ծանրանում: Ի վերջո, նա այլեւս չի կարողանում շարժվել, ու հանկարծ դիմացի իսալմեղուկում նրա առաջ մի խաչ է կանգնում: Համարյա գիտակցությունը կորցրած՝ նա ծնկի է զալիս ու մի վերայ խաչից կաշռելով՝ վերեւ քարճրանում: Հենց այդ պահին գիտակցում է, թե ինչպէս է մեջքի բեռը արդիվում ու շրմիտողով անդունդը գործվում:

Աս հիրանալի պատկերն է այն քանի, թե ինչպէս է մարդը վերածնվում եւ վերանորոգվում Տեր Հիսուս Քրիստոսի խաչով: «Ես հայացքս քարճրանցի խաչին: Իմ առջեւ կանգնած էր Աստծու Գառը, Որը թափելով Իր սուրբ արյունը՝ մեռել էր ինձ համար: Անորով պիտի խոստովանեմ, որ այդ ժամանակ ինձ միանգամից երկու հրաշքներ հանդիպեցին»:

մեկը՝ Աստուծու սիրտ շնորհիւ, սյուղը՝ մեղքերի ծանրությունը, որոնց համար արդեն Հիսուսը վճարել էր: Միայն Հիսուսը կարող է մեղքերին բողոքություն տալ»:

Ինչի՞ համար է Հիսուսը: Ես դեռ պետք է պարզաբանեմ, թե ինչու եմ հավատում Հիսուսին :

4. Հիսուս՝ Բարի Հովիվը

Մենք՝ ամեն մեկս, գտնե մեկ անգամ մեր կաշվի վրա զգացել ենք, թե ինչ է մեռափոխությունը. կյանքը մեզ թվում է դատարկ, ու զգում ենք, որ շատ կարեւոր մի բան մեզ պակասում է: Իսկ ի՞նչ: Ես ունեմ այս հարցի պատասխանը. մեզամից պակասում է կենդանի Փրկիչը:

Ես հենց մոր պատմեցի, որ Հիսուսը խաչի վրա մեռավ, որպեսզի վճարի մեր մեղքերի գինը: Ուշադրություն դարձրեք հետեւյալ բառերի վրա. «Աշխարհի պատիճը Նրա վրա էր»։ Նրան դրել էին ժայռի մեջ փորված մի գերեզմանում, իսկ մուտքը փակել մեծ ու ծանր մի քարով: Ապահովության համար հռոմեացի ղեկավարը քարի վրա կնիք էր դրել ու զինվորներին պատվիրել հսկել գերեզմանը: Իմ կարծիքով՝ այդ զինվորները քաջ մարտիկներ են եղել ու կռվել են տարբեր երկրներում, ինչպես, օրինակ, Գալլիան (այսօր՝ Ֆրանսիա), Գերմանիայում կամ այլ երկրներում: Եվ այսպես, խաչելության երդրոյ օրը, դեռ լույսը չբացված, անհավանական են զինվորները՝ վահաններով ու նիզակներով զինված, սարավարտները՝ գլխներին: Համկարծ լուսավորվում է ժայռի շրջակայքը: Աստվածաշունչը մեզ պատմում է. «Տիրոջ հրեշտակը իջավ երկնքից ու քարը հեռացրեց գերեզմանի մուտքից»։ Հիսուսը գերեզմանում վերակենդանացնում է: Այս հրաշք-իրողությանը ավանատես զինվորները անից սարսափած՝ ուշագնաց գետնին են ընկնում: Այս դեպքից մի քանի ժամ հետո Հիսուսը հանդիպում է Մարիամ Մագդալենային: Աստվածաշունչը մեզ պատմում է, որ Հիսուսը նրա միջից յոթ դեմ է հանել, իսկ հիմա նա լաց է մի՛նում: Հիսուսը մտնեցնում է նրան, ու նա որդակոտորմից քսացականում է. «Ռեաբրի», բարբառանաբար՝ վարդապետ: Այստեղ մենք տեսնում ենք, որ Մարիամը արդեն միտիթարված է, որովհետեւ գիտի, որ Հիսուսը՝ Բարի Հովիվը, կեն-

դակի է ու իր մտա է գտնվում:

Գիտե՞ք՝ Հիսուսը ինձ հարկավոր է նաեւ իմ ձեռքից բռնելու համար: Մի անգամ, նորից իմ հավատի պատճառով, բանտարկիկել էի նազիստական բանտում: Մեր ընդ մերթ ինձ թվում էր՝ ես մեկ քայլ, ու ես կընկնեմ խելացմորության խակար բազափոխությունը, որտեղից հետդարձի ճանապարհ գոյություն չունի: Հենց այդ պահին հայտնվեց Իվըը՝ Տեղ Հիսուս Զրիստոսը, եւ իմ ներսում ամեն ինչ հարթվեց: Այլ կերպ ես դա ձեզ չեմ կարող բացատրել:

Այնտեղ ես ասլրեցի մի այնպիսի երեխա, որը նման էր իսկական դժոխքի: Այդ օրը բանտի տարածք մտավ մի ակտունեքենա, որը պետք է բռնափորներին տեղափոխել համակենտրոնացման ճամբար: Դրանք հույսները կարած մարդիկ էին. մի քանիսը՝ քրեական հանցագործներ, մյուսները՝ ամենեղ հրեաներ: Բանտը լցվել էր այնպիսի բառաշյուններով ու վայնատուններով, որ դժվար է նկարագրել: Պահպները նյարդայնացում էին, ատրճանակներով կրսկում առատադիրն, հետ ու առաջ վազում, բորբոխ մի տեղ կրտապում...: Ես այդ պահին իմ խցիկում նստած մտաժամ էի. «Ծիշտ այսպես էլ դժոխքում պետք է լինի»։ Բառեր չեմ գտնում այդ մարդկային սարսափելի քառուղ ակելի պարզ նկարագրելու համար: Հենց այդ իրարանցման պահին իմ գլխում մի միտք է ծագում. «Հիսուսը, չէ՞ որ Նա այստեղ է»։ Այն, ինչ հիմնա պատմում են ձեզ, ճշմարիտ իրականություն է: Ըստ ցածր ձայնով սկսեցի կանչել. «Հիսուս, Հիսուս, Հիսուս...»: Իմ կանչելուց մտա երեք բույե հետո հանկարծ բանտում քար լռություն տիրեց: Դուք հասկանո՞ւմ եք, ես միայն կանչեցի Նրան: Բացի Տիրոջից՝ ոչ ոք չլսեց իմ ձայնը: Դեռերը իսկույն չբվեցին, ու ես սկսեցի բարձրաձայն երգել, ինչը իստոիկ արգելված էր. «Հիսուս, Դու իմ որդակություն, Դու իմ հոգու ողորմություն, Դու իմ հպարտություն, ինչքան եմ երազում հավիտյան Բեզ հետ լինել»։ Բողոք բանտարկյալները լսում էին իմ երգի ձայնը: Նույնիսկ պահակները: Անգամ նրանք ինձ չսատեսցին, եւ ես շարունակեցի երգել. «Եթե նույնիսկ դաժան մորիկն էլ աշխարհը ցնցի, իմ օգնականը Հիսուսն է...»: Հարգելի՛ բարեկամներ, այն ժամանակ ես, իրոք, զգացի, թե ինչ է նշանակում կենդանի Փրկիչ ունենալ: Չէ՞ որ մենք բողոք էլ մի օր լքելու ենք այս աշխարհը:

Մի անգամ մեկը ինձ ասաց. «Դուք՝ հոգեւորականներդ, միշտ մարդկանց մահով եք վախեցնում»: Ես հանրեղությանը պատասխանեցի. «Ես ոչ մեկի վախեցնել չեմ ուզում, բայց մեզը բոլորս եզը մահից սարսափում»: Եվ այն ժամանակ, մահիկան շեմին, ողբան հրաշալի կլիմի շոշափել Բարի Հովիվի ձեռքը: Ինձ ասում են. «Ժամանակակից մարդը մահից ավելի քիչ է վախենում, քան կյանքից, որովհետեւ կյանքը մահից սարսափելի է»: Բարեկամների, կարելի է նաեւ այս կյանքում Հիսուսին ունենալ:

Ես հիմա ուզում եմ մի օրինակ բերել, որը, միգուցե, ձեզ անհավատալի թվա, բայց, այնուամենայնիվ, իրականությունը սա է: Էստեն քաղաքում ես ծանոթացա մի այդյունաբերողի, որը մի բարյացակամ մարդ էր: Նա ինձ ասաց. «Պատվելի, ինչքան սիրավոր եք, որ մեր երեխաներին կյանքի ճիշտ ճանապարհն եք սովորեցնում, ահա Ձեզ հարյուր մարդի Չեր բարեգործության համար»: Ես հարցրի. «Իսկ Դուք ի՞նչ եք մտածում»: «Ո՛չ, ո՛չ, պատվելի, ես իմ սեփական աշխարհայացքն ունեմ»: Հավիանում եք, մարդը բարի է ու սիրավոր, սակայն Լստծուց այնքան է հեռու, ինչքան Լուսինը՝ Միդիոսից:

Տարիներ առաջ մեծ ու կիսադատարի մի եկեղեցում պատվադրություն էի կատարում: Հարս ու փեսայի հետ եկեղեցի էին եկել ես մի 10 հոգի, իսկ մարդը ում մասին քիչ առաջ պատմեցի, հանդես էր գալիս որպես վկա: Պարզ երևում էր, որ նա չէր կորննորոշվում, թե ինչպես պետք է պակսի իրեն. ո՞ր դնել գլխարկը, ի՞նչ անել ձեռքերը: Նկատեցի, որ գլխարկը ձեռքերում պինդ սեղմած՝ լուռ ու լարված կախել է գրովը: Ո՞վ գիտե, գուցե նույնիսկ մտածում էր, թե որ կողմից պիտի սկսի խաչակնքել: Կարդալով նրա մտքերը՝ ես գլխարկը վերցրեցի ձեռքից ու դրեցի կողքի նստարանին: Հետո սաղմոս երգեցինք: Իհարկե, նա սաղմոսի մասին գարավար շուներ (ուսենայն դեպս՝ տեքսից այդպես էր երևում): Եվ հանկարծ պատահեց զարնանալին. քանի որ հարսնացուն երեխա ժամանակ մասնակցել էր եկեղեցու ժամերգություններին, նրա պատվին սրահում սկսեցին երգել մոտ երեսուն արջիկ-երեխաներ: Նրանք բարակ, քարցր ձայներով հնչեցնում էին մանկական հասարակ մի սարմուս, որը, հավանաբար, դուք էլ եք լսել. «Ես գառնուկն եմ Քրիստոսի, սիրտս լի է ուրախությամբ, իմ Հո-

վիվը հոգ է տանում ինձ համար...»: Ես նկատեցի, որ այս մարդու հետ մի ինչ-որ արտատարի բան է կատարվում. գուցե վա՞տ էր զգում: Նա բոլորովին գունատվել էր, ձեռքերով ծածկել էր դեմքը ու դողացնում էր: Արդեն պատրաստվում էի բժիշկ կանչել, բայց հանկարծ նկատեցի, որ նա արտասպան է: Իսկ երեխաները շարունակում էին երգել. «Իմ Հովիվը ինձ համար հոգ է տանում, ես Նրա հետ որդախ եմ վնում, Նա սիրով է ինձ կանչում, Նրա սուրբ մակնի մեղքը ես ոչ մի բանի կարիք չեմ զգում...»: Իսկ նա դեռ շարունակում էր հեկեկալ: Ես գլխի ընկա, թե վերջապես ինչ է կատարվում նրա ներքում: Երեխաները ունեին այն, ինչ ինքը չուներ: Նա իրեն զգում էր միայնակ ու կրաված:

Բարեկամների, ձեր կյանքի ամենավորոշող նվաճումը այն կլիմի, որ դուք էլ այս երեխաների նման խոստովանեք, որ պատկանում եք Բարի Հովիվի հոտին: Կրկնեք այդ մի քանի բառը: Ինչո՞ւ եմ հավատում Հիսուսին: Որովհետեւ Նա իմ Բարի Հովիվն է, իմ ամենազավ Ընկերը, իմ կենդանի Փրկիչը: Ինչի՞ համար է Հիսուսը: Կուզեի մի քան էլ պատանել ձեզ:

5. Հիսուսը՝ կյանքի տիրակալը

Մրանից մի քանի տարի առաջ մի խումբ երիտասարդների հետ հանգստանում էինք Բոռնեմյան անտառում: Երկտասարդները քաղաք վերադարձան ինձանից մեկ օր շուտ, իսկ ես սպասում էի մեքենայի, որի գարու մասին պայմանավորվել էինք նախապես: Այնպես ստացվեց, որ ստիպված պիտի գիշերեի մի հին որսորդական ողջակում, որը ժամանակին պատկանել էր մի իշխանի, իսկ հիմա այստեղ միայն անտառապահն էր ապրում: Տունը կիսաքարե էր, էլեկտրականություն չկար, ու սենյակում մի մեծ օջախ էր վառվում: Ինձ մոտ մի նավթի լամպ դրեցին, բարի գիշեր մարդեցին, ու ես մենակ մնացի: Հակառակի նման՝ հետո կարդալու ոչինչ չէի վերցրել, ու ես օջախի մոտ մի գրքույկ գտնեի՝ լամպի լույսի տակ սկսեցի կարդալ: Պետք է խոստովանեմ, որ դրանից ավելի սարսափելի բան չէի կարդացել: Դա պատմություն էր մի բժշկի մասին, որը անգուսպ ցատումով ընթրատանում էր մահիկան դեմ. «Օ, մահ, դու՛

մարդկության թշնամի: Ես մի ամբողջ շաբաթ պայքարեցի մի հիվանդի կյանքի համար ու կարծում էի, թե արդեն փրկել եմ, բայց դու ծարրելով մեկնեցիր քո անհիճյալ ձեռքը ու նրան խլեցիր ինձամիջ: Ի՞նչ բոլոր ջանքերը ապարդյուն անցան: Թեպետ ես ջանում եմ օգնել մարդկանց, սակայն գիտեմ, որ պայքարս իզուր է: դու կգաս ու քո ոսկորտ ձեռքերով կիրպցործես քո չարաբաատիկ ամեկնքը: Օ՛, անծոված՝ դավաճան մահ, դու՛ մարդու հավերժական թշնամի»:

Էջերը լի էին մահվան նկատմամբ ատելությամբ: Հետո գալիս է ամենասարսափելին. «Օ՛, մահ, դու վերջակետ ես, դու՛ բացականգնական նշան: Օ՛, անհիճյալ, երանի թե բացականգնական նշանը նման լինեիր մշտապես. երբ տեսնում եմ քեզ, դու հարցական նշան ես դառնում, ու ես հարցնում եմ. «Միթե՞ դու վերջն ես ամեն ինչի»:

Ես հավատացնում եմ, որ մահը դեռ ամեն ինչի վերջը չէ: Հիսուսը, որ այդ հարցի պատասխանը բոլորից լավ գիտի, ասում է. «Լայն է ճանապարհը, որ դեպի կործանում է տանում, եւ նեղ է դեպի կյանք տանող ճանապարհը»: Ես երջանակի եմ, որ ունեմ Փրկիչ, Որը այստեղ՝ երկրի վրա ինձ կյանք է տալիս եւ հետո դարձյալ դեպի կյանք է տանում: Դրա համար էլ հիմա հաճոքով վկայում եմ Նրա մասին:

Գլխու՞ք՝ երկրորդ հանաշխարհային պատերազմի ժամանակ ես շաբաթներ էի անցկացնում Վերդենի շրջակայքում, որտեղ այն ժամանակ ահեղ մարտեր էին մղվում: Երկու թշնամի բանակների դիակները կիտված էին իրար վրա: Մինչեւ այսօր էլ դեռ ինչում եմ այդ դիակների տիան հոտը...: Եվ միշտ, երբ պատերազմի գոհերի նիշատակը հավերժացնող հուշարձան եմ տեսնում, թվում է՝ նորից եմ զգում այդ հոտը: Եվ ընդհանրապես, երբ ես մտածում եմ, որ մոտ հայրույր տարի հետո մենք բոլորս այստեղ չենք լինելու, զգում եմ մահվան շունչը: Իսկ դուք երբեմնից ունեցե՞լ եք այսպիսի զգացողություն:

Մահվան աշխարհում կա Մեկը, Որը հարություն է առել մեռելներից: Ուշադրություն դարձրե՛ք, թե ինչ է ասում Նա. «Ես ասքում եմ, եւ դուք էլ պիտի ասքեք: Հավատացե՛ք Ինձ, եկե՛ք Ինձ մոտ, դիմե՛ք Ինձ: Դարձե՛ք դեպի Ինձ, եւ Ես ձեզ դեպի կյանք կտանեմ»: Մի՞թե՛ հրաշալի չէ: Եվ ինչպե՞ս կարելի է այս մահվան աշխարհում ապրել առանց Փրկչի,

Որ հենց Ինքը կյանքն է, ու մեզ էլ հավիտենական կյանքի է կանչում:

Մի քանի օր առաջ ես մի նամակ կարդացի, որը տպագրել էր պոռֆեսոր Հեյնը: Նախակի հեղինակը երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ Ռոսատտանում գտնված քրիստոնյա մի գիւղիկ էր: Նա գրել էր. «Մեր շուրջը մե՛ծականց է: Երբ ռուսները գողժի են դնում իրենց իրանոթները, բոլորս խուճապի ենք մատնվում: Իսկ ճյուղը, սառնամանիքը աննկարագրելի անհավոր են: Բայց ես չպեղոք է վախենում: Ինձ համար ավելի լավ կլինի, եթե գոհվեմ ու մի ակնթարթում հայտնվեմ երկնքում: Այն ժամանակ իմ կյանքի փոթորիկը կհանդարտվի, ու ես իմ դիմաց կտեսնեմ Տիրոջը ու վերջապես կմիխթարվեմ Նրանով: Ես չեմ վախենում այստեղ գոհվելուց»: Նամակը գրելուց հետո նա գոհվել էր: Այն կարդալուց հետո մտածեցի. «Ինչ լավ է, որ Հիսուսին ճանաչելու շնորհիվ երկուսսաարդը չի վախեցել մահից»:

Այո, Հիսուսը կյանքի տիրակալն է ու Իր հետնորդների՛ն հավերժական կյանք է պարգևում:

Մի անգամ, Լալայցիգի քաղաքապետարանում, եկեղեցական տոնի ժամանակ հանդիպել էին կառավարության եւ եկեղեցու ղեկավարները: Նրանք արտասանում էին չպարտավորեցնող ճառեր, որպեսզի խուսափեն վիճարկությունից: Վերջում ելույթ ունեցավ այն ժամանակվա ավետարանական կոմիտեի գլխավոր քարտուրար Հեմրիխ Գիզենը: Երբեք չեմ մոռանա նրա խոսքերը. «Պարոնա՛յք, դուք ուզում եք իմանալ, թե ինչ մարդիկ ենք մենք: Ես ուզում եմ ձեզ պատասխանել միայն մեկ նախարարությամբ. մենք այսպես ենք արդթույն. «Հա՛յր Աստված, հեզոթյուն տոր ինձ, որ իմ պսակը երկնքում կատարվի»: Նա նորից նստեց իր տեղը: Պատասխանող ուղղակի ցնցեց հավաքվածների: Պատի Գեորհարդը երեսնամյա պատերազմի ընթացքում գրել է. «Աշխատում եմ սրբորեն ասքել աշխարհում, գնում եմ իմ ճանապարհով, որը ինձ երկինք է տանում: Հայրը ինձ համար այնտեղ միտիթարանք է պատրաստել»:

Ինչի՞ համար է Հիսուսը. իմացե՛ք, որ ի վերջո դա ձեզանց է կախված, դուք ընդունո՞ւմ եք Նրան:

ԻՆՉՈՒԿ ԵՍ ԱՊՐՈՒՄ

Եվ այսպես, ինչո՞ւ եմ ես ապրում, ի՞նչ եմ անում այս աշխարհում կամ ո՞րն է իմ կյանքի իմաստը:

Մի անգամ Էստեմոն լսափողի մեջ լսեցի դեկավար մի աշխատողի հուզումնալից ձայնը. «Պատվելի՛, շտապ մեզ մոտ հատե՛ք»: Ես շտապեցի նրանց տուն: Դեռ շեմքում ինձ դիմապիղծով՝ նա դողողալով ասաց. «Իմ դողին ինքնասպան է եղել»: Ես ճանաչում էի այդ պատանուն, նա ուսանող էր, ամեն ինչով ապահովված, առողջ, հարուստ ու գեղեցկաբեմ: Դեռ պատանի հասակում արդեն սեփական ավտոմեքենա ուներ, բայց ահա մի գեղեցիկ օր՝ այս երիտասարդը, ատրճանակը ճակատին դնելով, վերջ է տվել կյանքին՝ բողնելով այսպիսի մի երկտող. «Ես հեռանում եմ կյանքից, որովհետեւ ապրելու իմաստը չեմ տեսնում»:

Ինչպես տեսնում ենք՝ կյանքի իմաստը գտնելը շատ կարեւոր հարց է: Շատ կարեւոր է այն հասկանալի պատճառով, որ կյանքը մեզ միայն մեկ անգամ է տրվում: Երբեմն ել խորապես մտածե՞լ եք, թե ինչ է նշանակում միայն մեկ եզրակի կյանք ապրելը:

Դպրոցում մաթեմատիկայի իմ գործերն այնքան էլ քսրեհաջող չէին ընթանում: Իմ լուծած խնդիրները ծածկվում էին ուսուցչի կարմիր գրիչով: Նման դեպքերում ես տեսոս դեմ էի շարտում ու մի նոր, մաքուր տեսողում նորից էի սկսում գրել լուծված խնդիրը: Ախ, եթե կյանքի հետ էլ այսպես վարվելու հնարավորություն ունենայի: Հավատացած՝ եղեք, որ միխոնափոր մարդիկ մահվան շեմին այսպես են մտածում: «Ախ, եթե կարողանայի կյանքս նորից սկսել, միանգամայն այլ կերպ կապրեի»:

Նոր դպրոցական տեսող կարելի է գնել ու նորից սկսել, բայց կյանքը ոչ: Կյանքը մեզ միայն մեկ անգամ է տրվում: Ուրբան ծանր կլինի գիտակցել, որ մենք փչացրել ենք մեր կյանքը կամ ճիշտ չենք ապրել: Եթե կյանքը խաբարվում է, ապա այն կորած է հավիտյան, ես դա ասում եմ ամենայն լիցուրթյամբ:

Այսօր առափոտյան իմ հյուրանոցի մոտով կովերի մի

նախիր էր անցնում: Ես պատրաստվում էի այսօրվա դասախոսությանն ու կովերին նայելով՝ ակամա այսպես մտածեցի. «Ինչքան բախտավոր պետք է լինեն այս կովերը, որ չեն մտածում կյանքի իմաստի մասին: Նրանց մոտ ամեն ինչ պարզ է: Ուր պիտի կար տան, իսկ հետո միս: Դուք հասկանո՞ւմ եք՝ անատմը կյանքի իմաստի մասին մտածելու անհրաժեշտություն չունի: Մարդը անատմից բանականությունը է տարբերվում: Սակայն տարրիմակ է, որ շատ մարդիկ ապրում ու մեռնում են եւ ոչ մի անգամ իրենք իրենց չեն հարցնում՝ ինչո՞ւ: Բանականությունը նրանք անատմից համարյա չեն տարբերվում: Իսկ ի՞նչն է մարդուն մարդ դարձնում: Հարցնե՛ք ինքներս մեզ. «Ինչո՞ւ ենք ապրում, ո՞րն է մեր կյանքի իմաստը»:

1. Մակերեսային եւ հարցնեպ պատասխաններ

Եվ այսպես, բարեկամներ, այն հարցին, թե ինչի՞ համար ենք մենք ապրում, տրվում են հարցնեպ եւ մակերեսային պատասխաններ: Շատ տարիներ առաջ ես միաժամանակ ատացա այդ երկու պատասխանները: Դա պատահից Հիտլերի դիկտատորայի շրջանում, երբ Սյունտերը քաղաքի ուսանողները ինձ հարցազրույցի էին հրավիրել՝ «Ո՞րն է իմ կյանքի իմաստը» թեմայով: Նրանք նախազգուշացրին, որ ուզում են ոչ թե իմ դասախոսությունը լսել, այլ միայն վիճարկել թեմայի շուրջ: Քանի որ վիճարկությունը տեղի էր ունենում Հիտլերի դիկտատորայի ժամանակ, նրանցից մեկը տեղից վեր ցատկեց ու բացակայեց. «Ես իմ ժողովրդի համար՝ ինչպես ծանր ու տեղեղ: Տեղեղ ոչինչ արեի, իսկ ծառը՝ ամեն ինչ»: «Լավ, - ասացի ես, - իսկ ո՞րն է ծառի (այսինքն՝ ժողովրդի) գոյության իմաստը»: Լռություն տրվեց: Պատասխանը ոչ մեկին հայտնի չէր: Հասկանա՞մ եք, բուն հարցը մնաց անպատասխան: Այդ ժամանակ ես ասացի. «Թանկագիններս, դուք պետք է խոսակի՛ք հարցերը շրջանցող պատասխաններից: Եվ այսպես, ո՞րն է իմ կյանքի իմաստը, ինչո՞ւ եմ ես ապրում»: Մի ուսանող այսպես պատասխանեց. «Ես ապրում եմ, որպեսզի կատարեմ պարտքս»: «Ընկե՛ր, հենց հարցն էլ դա է. ո՞րն է իմ պարտքը: Օրինակ, ես իմ պարտքն եմ համարում Աստծու խոսքը

ձեզ հարորդել: Իսկ, ասենք, Մաթիթըս Լորենցուրֆը իր պարտքն է համարում հերքել Աստծուն: Ընդհանրապես, ի՞նչ է նշանակում պարտք», -հարցը ճշտեցի ես:

Մի անգամ մի բարձրաստիճան ծառայող ասաց. «Պատվեի, մեր մեջ ասած՝ ես ամեն օր փաստաթղթեր եմ լրացնում, բայց եթե համկարծ մի օր դրանք այրվեն, կյանքը նորից կշարունակվի, այրվես չէ՞: Ես տանջվում եմ, որովհետեւ գտնո՞ւմ եմ, որ անիմաստ աշխատանք եմ կատարում»:

Ի՞նչ է պարտքը: Հազարավոր էսեսականներ հարյուրհազարավոր կյանքեր են գոհարբեղև, բայց երբ մի օր նրանց կանգնեցրին դատի առաջ, բոլորն էլ նույն բանն էին ասում. «Մենք մեր պարտքն էինք կատարում, դա էր մեզ հրամայված»: Մի՞թե դուք հավատում եք, որ մարդու պարտքը կարող է մենել իր նմանին կյանքից զրկելը: Ես դրան չեմ հավատում: Եվ այսպես ես նորից հարցրեցի ուսանողներին. «Հարցը դա է, ո՞րն է իմ պարտքը: Տեսնո՞ւմ եք, որ մենք խորվում ենք ցեխի մեջ»: Երկուսսաքող պարոնները սկսեցին պատասխաններ դրո՞նել, ես նրանցից մեկը կանգնեց ու սկսեց հուլարա պարզաբանել. «Ես մի հին ազնվական տոհմից եմ: Կարող եմ մեկ առ մեկ թվարկել իմ նախնիների անունները՝ նույնիսկ մինչև 16-րդ սպուրպալը: Դա մի մեծ տոհմածառ է, ես մի՞թե կյանքի իմաստը ժառանգությունը շարունակելու մեջ չե՞ս»: Ես նրան կարող էի միայն այսպես պատահաբանել. «Տղսւ, եթե չգիտես, թե ինչու եմ ապրել քո տասնվեց սպուրպալերը, արժե՞ այդ թվին 17-րդն էլ ավելացնել»:

Տեսնո՞ւմ եք, թե որքան հուպճեպ ու մաներեսային պատասխաններ կարող են տրվել: Մեր քերթերում հաճախ ենք հանդիպում այսպիսի մահախոսականների. «Միայն աշխատանքն էր կյանքի իմաստը: Դու, բոլորովին մոռանալով քո մասին, ամբողջ կյանքում աշխատեցիր հարազատներիդ համար՝ դա համարելով քո սրբազան պարտքը»: Մա ծանոթ է ձեզ: Նման հայտարարություն կարողարժ՝ ես ամեն անգամ սարառում եմ ու մտածում. «Այս հայտարարությունը ճիշտ մասին է...»: Ճիշտ չէ՞: Ամբողջ կյանքում միայն ճիշտ կարող է աշխատել: Մակայն ես չեմ կարծում, թե մարդը այս աշխարհում ապրում է ամբողջ կյանքում անդադար աշխատելու համար: Այդ ժամանակ ավելի ճիշտ կլիներ տալը տարեկանում վերջ տայինք մեր կյանքին, քան թե

միայն աշխատելու մեջ տեսնեինք մեր կյանքի իմաստը: «...Միայն աշխատանքն էր քո կյանքի իմաստը...»: Դա տակալի է: Ո՛չ, դա չէ կյանքի իմաստը:

Հետո մեկ ուրիշ ուսանող խոսք խնդրեց. «Գիտե՞ք ինչ, ես դողել եմ բժիշկ դառնալ: Մի՞թե հրաշալի չէ փրկել մարդկանց կյանքը»: Սակայն ես նրան էլ առարկեցի. «Եթե Դուք չգիտեք, թե ինչու է մարդը ապրում, ի՞նչ իմաստ ունի փրկել նրա կյանքը»: Խնդրում եմ, ինձ ճիշտ հասկացե՛ք, թե չէ՛ համկարծ կտարածե՛ք՝ իբր պատվելի Բուշը ասաց, որ բժիշկները իզուր են փրկում մարդկանց կյանքը: Ես պարզապես ուզում եմ նկատել, որ դա մեր հարցի պատասխանը չէ: Այդտեղ ինձ ապշեցնում էր այն միտքը, որ նույնիսկ կրթված մարդիկ (նրանք բոլորն էլ ուսանողներ էին) ապրում են մեր օրերում ու չգիտեն թե ինչու:

Երեսուն է՝ ձեզ գրգռում է իմ ճառածելը: Ես, ինչպիսի, կարող էի արտասահմանյան բառեր մեջբերելով՝ «զարդարել» իմ դասախոսությունը, բայց դուք, հավանաբար, կքննիք: Հենց դրանից խուսափելով՝ ես ձեզ հետ խոսում եմ այնպես, ինչպես մարդիկ գրուցում են իրար հետ առօրյա կյանքում: Պա՞րզ է:

Այ, տեսնո՞ւմ եք, երբ խորանում ենք այս քեմայի մեջ, ստանում ենք ճիշտ Մյուստեր քաղաքի ուսանողների պատասխանները. «Ընդհանրապես, կյանքը խոր իմաստ չունի: Ինձ ծնունդը մի հասարակ պատահականություն է, ես այդ իսկ պատճառով էլ պետք է կյանքից վերջնեմ այն ամեհը, ինչ կարող եմ»:

Շատ հնարավոր է՝ մարդու ամենամեծ փորձությունը նրա այս տեսակետն է. «Իմ կյանքը իմաստ չունի, նպատակ չունի: Եթե իմ ծնողները չամուսնանային, ես էլ չէի ծնվի: Ես այս աշխարհում պատահականորեն եմ ապրում ես, ըստ էության, իմ կյանքը անիմաստ է»: Իսկ ում կյանքը համեմատաբար ծանր է, նա ավելի մոտ է ինքնասպանությանը. «Հանուն ինչի՞ շարունակեմ կյանքս, երբ այն համարվում է պատահականություն ես դատարկություն: Ավելի լավ չէ՞ ամեն ինչին վերջ տալ»: Գիտե՞ք, որ Արեմտյան Գեղնամիայում ինքնասպանների քիվը ավելի շատ է, քան ակտիվաբարների քանակը: Գիտե՞ք, որ ինքնասպանների հիսուն տոկոսը կազմում են մոտ երեսուն տարեկան երիտասարդներ: Մեր ժամանակներում դա ցնցող ցուցանիշ է.

մենք այլևս ապրելու իմաստը չենք տեսնում: Ես հաճախ եմ գրուցել մարդկանց հետ, ովքեր սատոմ էին, քե կյանքը այնքան անիմաստ է, որ պետք է այն վերջացնել զվարճավիթմերով և հաճույքներով, իսկ եթե պետք է՝ նաև ինքնապստոբյանք: Այն ժամանակ ես հարցնում էի. «Իսկ եթե կյանքը իմաստ ունի, ես դուք ապրում եք անիմաստ, ողբեմ, ինչպե՞ս պետք է ներկայանաք Աստծուն»: Աստվածաշունչը այս քեմայով ստում է. «Մարդուն պատշաճ է մի անգամ մեռնել, իսկ հետո ներկայանալ Աստծու դատին»: Սրանից հետևում է, որ հայրկափոր է իմանալ այդ պատասխանը, որպեսզի կարողանանք լրջորեն հարցնել, քե ինչու՞ ենք ապրում: Ինչպե՞ս կարող ենք ներկայանալ Աստծու դատաստանին, երբ կորցրել ենք մեր կյանքի իմաստը:

Այս հարցը պա՞րզ է:

Շարունակե՛նք:

2. Ո՞վ կարող է պատասխան տալ

Վերջապես, ո՞վ կարող է պատասխան տալ այն հարցին, քե ինչու՞ է ինքն ապրում»: Ո՞վ: Ելեղեցի՞ն, ոչ: Քստուսնա՞ն, ոչ: Պրոֆեսորներ՞ը, ոչ: Փիլիսոփաներ՞ը, ոչ: Մարդկանցից՝ ոչ ոք: Այդ հարցին կարող է պատասխանել միայն Նա, Ով մեզ ստեղծել է, այսինքն՝ Տեր Աստված:

Թույլ տվեք մի հասարակ օրինակ բերել. մի անգամ մտա մի բնակարան. այնտեղ մի երիտասարդ էլեկտրալավերից ու հաղորդալարերից ինչ-որ բան էր շինում: «Այս ինչ դժոխսային մեքենա ես պատրաստում», - հարցրի նրան: Նա ինձ բացատրեց: Թեպետ ես ոչինչ չհասկացա, բայց մտածեցի, որ բացի վարպետից՝ ոչ մեկը չի հասկանա, քե ինքը ինչ է շինում եւ ինչի համար:

Ճիշտ այդպիսին է նաև մեր կյանքը: Միայն Նա, Ով մեզ ստեղծել է, միայն Նա կարող է ասել, քե ինչի համար ենք ստեղծվել: Դա նշանակում է, որ այն հարցի պատասխանը, քե ինչու ենք ապրում, կարող ենք գտնել միայն հայտնության ճանապարհով, այսինքն, դա պետք է Ինքը՝ Աստված մեզ ասի: Եթե ես մի՛նչեմ հիմա Աստվածաշունչը կարողացած չլինեի, այդ հարցը պետք է ողորել Աստվածաշունչին: Ես այլևս չեի կարող համբերել, եթե չիմանայի, քե

ինչու եմ ապրում այս անիծյալ աշխարհում: Երեի ձեզ շատ դժժան է բխում իմ «անիծյալ աշխարհ» արտահայտությունը, բայց այդ բառերը Աստվածաշունչից են: Մեր երկրագունդը գտնվում է սալսափելի անեծքի տակ: Ես չեի կարող այս աշխարհում ապրել, եթե չիմանայի Աստվածաշունչի հայտնությունը՝ Աստծու Խոսքի միջոցով:

Աստվածաշունչը հստակ պատասխան է տալիս մեր կյանքի իմաստի հարցին: Ես ճանաչում եմ մարդկյանց, դրոք անբարոյակներն ստում եմ. «Միեւնույնն է, մենք Աստվածաշունչ չենք կարբալու»: Նրանց ես վստահորեն կարող եմ ասել. «Համոզված եմ, որ դուք երբեք լրջորեն չեք մտածել, քե ինչու եք ապրում: Անխտեծությունը տարածված հիվանդություն է, իսկ եթե այն նաև ցավիտ լիներ, ապա անբող աշխարհը ցավից կտնջար: Ես ուզում եմ մի նախարարություն մեզ փոխանցել Աստվածաշունչի պատասխանը՝ մեր հարցերին. «Աստված մեզ ստեղծել է, որպեսզի Նրա երեխաները դառնանք»:

Ինչպես ամեն հայր, այդպես էլ Աստված ուզում է, որ մենք նման լինեք Իրեն: Նա մեզ ստեղծել է Իր պատիվերով եւ նմանությամբ: Աստված ուզում է, որ մենք Իր երեխաները լինեք ու գրուցեք, հաշիվ տանք Իրեն: Այդ ժամանակ Ինքն էլ կխոսի նրանց հետ, ում սիրում է, եւ ովքեր Աստծուն են սիրում: Իսկ դուք արթա՞նք: Ընդհանրապես, ինչքան են տխրում մեր երկրային հայրերը, երբ զավակները տարիներով չեն խոսում իրենց հետ: Ճիշտ այդպես էլ տխրում է մեր երկնային Հայրը, երբ մենք Իրեն չենք արթալ: Տեսնու՞մ եք՝ Աստված ուզում է, որ ում Ինքը սիրում է, եւ ովքեր Իրեն են սիրում, Իր երեխաները դառնան: Ահա քե ինչու ենք ապրում այս աշխարհում: Խնդրում եմ՝ ինձ ճիշտ հասկանա, ես չեմ պատմում եկեղեցու, կրոնի կամ նման բաների մասին, այլ պատմում եմ կենդանի Աստծու մասին, իսկ Նա ստեղծել է մեզ, որպեսզի մենք Իր զավակները լինեք: Իսկ դուք Աստծու զավակներ համարվու՞մ եք: Դժբախտաբար՝ ոչ: Մենք մեր բնությանը Աստծու զավակներ համարվել չենք կարող: Աստվածաշունչի սկզբում գրված է. «Աստված մարդուն ստեղծեց Իր կերպարանքով»: Հետո Աստվածաշունչը մեզ հայտնում է մեծ արեւտի մասին: Մարդը ստեղծվել է կատարյալ ազատության մեջ ու հանկարծ Աստծուն չինազանրվելու որոշում է կայացրել: Նա ուտում

է արգելված ծառի պտուղը, ինչը նշանակում է: «Ես ուզում եմ անկախ լինել: Ես կարող եմ ապրել առանց Աստծու»: Հավանա՞մ եք, Ադամը երբեք չի կապվածել Աստծու գոյության մասին, այնուամենայնիվ Աստծուց բաժանվելու որոշում է կայացրել. «Ես իմ կյանքը ապրում եմ ըստ իմ հայեցողության»:

Այս աշխարհում ուզում եմ ձեզ մի կարճ պատմություն պատմել: Վերջերս մի մարդ մտաբացվեց ինձ ու հարցրեց. «Պատվելի, Դուք միշտ խոսում եք Աստծու մասին, բայց ես Նրան չեմ տեսնում, ասացեք ինձ, ինչպե՞ս կարող եմ գտնել Աստծուն»: Ես պատասխանեցի. «Ուշադիր ինձ լսեք. պատկերացրեք, թե իբր գոյություն ունի ժամանակի մեքենա, որի միջոցով ես կարող եմ հազարավոր տարիներ արագ կամ հետ գնալ: Այդպիսով, այդ ժամանակի մեքենայի օգնությամբ ես գնում եմ դեպի մարդկության ստեղծման ժամանակաշրջանը եւ մի երեկո քայլում եմ դրախտի այգում: Ծանոթ եք մեղազործության մասին պատմությանը: Այնտեղ՝ քվեերի հետևում, հանդիպում եմ առաջին մարդուն՝ Ադամին: «Բարի երեկո, Ադամ»- արջում եմ նրան: «Բարի երեկո, պատվելի Բուշ»,- պատասխանում է Ադամը: «Դու զարմանո՞ւմ ես մեր հանդիպման համար»,- հարցնում եմ ես ու սկսում նրան բացատրել, որ մեր ժամանակի մարդկությունը այնքան է զարգացել, որ նույնիսկ ժամանակի մեքենան եմք ստեղծել, եւ ես պատահականորեն հայտնվել եմ եղենակյան այգում: «Բայց ինչո՞ւ ես այդքան տխուր»,- հարցնում է Ադամը, ու ես իսկույն պատասխանում եմ. «Գիտես՞ ես հիմա մտածում եմ մի մարդու մասին, որը ինձ հարցրեց, թե ինչպես կարելի է Աստծուն գտնել»: Քահ-քահ ծիծաղելով՝ Ադամը սկսում է ինձ բացատրել. «Դժվար բան չէ Աստծուն գտնելը, Նա այստեղ եւ ամենուր է: Խոհեմ եղիր, պատվելի, եւ ավելի լավ է մտածես, թե ինչպես Նրանից ազատվել, քանի որ, դա, իրականում, հնարավոր չէ»:

Ծիշոտ չե՞ Ադամը: Աստված ամենուր է, կարելի է Նրան գտնել, սակայն անհնար է Նրանից բաժանվել: Ոստանմա-սիրելով վերջին 300 տարիների իրզեւոր պատմությունը՝ մենք տեսնում ենք, թե մարդկությունը որքան ջանքեր է քսվել Աստծուց ազատվելու համար, սակայն ապարդյուն: Բարեկամներ, միգուցե էությունը դուք հավատում եք Աստծու գոյությանը, բայց Նրան չեք պատկանում: Միգուցե

շատ-շատերի նման դուք էլ եք ձգձգում Աստծուն մոտենալու հարցը (ուրբեր Նրան չեմ արհամարհում, բայց չեմ էլ պատկանում): Միգուցե Աստված ձեր քշումն է, բայց չե՞ որ Նա ձեր ընկերն էլ չէ: Ուրեմն, ձեր կյանքի ամենամեծ խնդիրը մնում է չլուծված:

Շվեյցարացի մի բժիշկ իր գրքում հաստատում է, որ եթե մարդը չի լուծել իր կյանքի կարեւոր հարցերը, ապա նա հոգեպես կիվանդ է. «Մեզը այստեղ՝ արեւմուտքում, Աստծու եմք հիվանդ: Մեզը Նրան չեմք միտում եւ չեմք էլ պատկանում: Մեզը ուղղակի չեմք ուզում Աստված ունենալ, դրա համար էլ Աստված համարվում է մեր հիվանդությունը»:

Այո, ես համաձայն եմ այդ բժշկի հետ:

Երբ ասում եմ, թե ժամանակակից մարդը Աստծու չի հետաքրքրվում, ես հասկանում եմ, որ ժամանակակից մարդու գործերը լավ չեն ընթանում: Ես էլ եմ ինձ ժամանակակից համարում, բայց չե՞ որ հետաքրքրվում եմ Աստծով: Եթե ժամանակակից մարդը լքորեն չի հետաքրքրվում սեփական փրկության հարցով, ապա նրա գործերը վատ են: Ուզում եմ մի հասարակ օրինակ բերել: Մի անգամ մի ռեստորանի ավագ խոհարար բողոքում էր իր աշակերտից. «Նա խոհարարական հարցերով բողոքվին չի հետաքրքրվում»: Ես հարցնում եմ. «Իսկ ինչո՞վ է նա հետաքրքրվում»: «Չայնասկավառակներով ու արջիկներով»,- պատասխանում է ավագ խոհարարը»: «Ի՞նչ արած,- ասում եմ նրան,- ուրեմն, նրա հետ խոսեք միայն ճայնակավառակների ու արջիկների մասին»: «Ո՛չ, ո՛չ,- առարկում է նա,- եթե այս տղային չեմ հետաքրքրում խոհարարական գործերը, ապա նա սխալ մասնագիտություն է ընտրել»:

Հիմա դուք հասկանո՞ւմ եք մեր կոչումը՝ լինել Աստծու երեխաներ: Եթե ժամանակակից մարդը դրանով չի հետաքրքրվում, ապա նա սխալվել է, որ մարդ է կոչվել, ու այլևս իմաստ չունի նրա հետ խոսել հնարավոր կամ անհնարին այնպիսի բաների մասին, որոնք, թերեւս, հետաքրքրում են նրան: Ես, սակայն, ասում եմ ձեզ, «որ դուք միայն այն ժամանակ մարդ կլինեք, երբ դառնաք Աստծու զավակը»:

3. Աստծու պատասխանը հարցերի հարցին

Ես կրկնում եմ, որ մենք մեր բնությանը Աստծու երեխաներ չենք համարվում, բայց այս աշխարհում ապրում ենք Աստծու երեխաները դառնալու համար: Ուստի, ամիրածնշտ է ձեռափոխել մեր կյանքը: Ի՞նչ դասախոսության նպատակը ձեզ օժանդակություն ցույց տալն է: Ես այստեղ դասախոսություն եմ կարդում, որ ձեզվանց գոնե մի քանիսի սրտերը բացվեն, ու կյանքը իմաստալից դառնա: Այի, երանի թե ես կարողանայի օգնել ձեզ:

Եվ այսպես, մենք Աստծու երեխաները չենք, մենք Աստծուն չենք սիրում, մենք խախտում ենք Նրա պատվիրանները, չենք արդարանում երբևիցե Աստծուն միայն այն ժամանակ, երբ հայտնվում ենք որեւէ փորձության կամ ներության մեջ: Այստեղ էլ ծնվում է հարցերի հարցը. ինչպե՞ս դառնալ կենդանի Աստծու զավակը: Հիմա ավելի լավ կլինի, եթե բոլորիդ թուրք ու գրիչ բաժանել ու խնդրեի գրել հարցի ձեր պատասխանը: Ձեզվանց մի քանիսը կգրեին, որ հարկավոր է քարի գործեր կատարել, ուրիշները՝ պետք է հավատալ Տեր Աստծուն եւ այլն: Մակայն այդ ամենը դեռ բավական չէ:

Ինչպե՞ս դառնալ Աստծու զավակը. այդ հարցի պատասխանը ես կարող եմ ստանալ միայն հայտնության միջոցով. Աստված Ինքը պետք է ասի, թե որպես Աստծու զավակ ինչպես պետք է ընդունի ինձ: Աստվածաշունչը մեզ հատակ պատասխան է տալիս. «Միայն Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով»: Բարեկամներ, երբ խոսքս Հիսուսին է վերաբերում, այսինքն, երբ խոսում եմ իմ կյանքի զվիարկող թեմայով, սիրտս սկսում է տակնուվրա լինել, զարկերակիս սրտփյուրնը հաճախակի է դառնում: Ես կարող եմ Աստծու զավակը դառնալ միայն Հիսուսի միջոցով:

Աստվածաշնչում կա մի նախադասություն, որը քառասուն այսպես է քարգնանվում. «Հիսուսը Աստծու աշխարհից եկավ այս աշխարհը»: Այսօր հաճախ կարելի է գրույցներ լսել այն մասին, որ Աստվածաշնչում հին աշխարհն է պատկերված. վերելք՝ երկինքը, մեղքերը՝ երկրագունդը: Դա, իհարկե, բյուրեղանցություն է, Աստվածաշնչում այդպիսի նկարագրություն գոյություն չունի, այլ ճիշտ հակառակը՝ Աստված ամենուր է: Դուք համակամո՞ւմ եք: Եթե ես նույնիսկ

ուզենայի քաբնվել գետնի տակ, Նա ինձ այնտեղ էլ կցտնդ: Մենք ապրում ենք երեք չափումների աշխարհում՝ երկարություն, լայնություն եւ բարձրություն: Մակայն գոյություն ունեն ավելի մեծ չափումներ, եւ Աստված գտնվում է մեկ այլ չափում մեջ: Նա մեզ շատ մոտ է, մա քայլում է մեզ հետ, Նա մեզ տեսել է մեր անաստիվածային ճանապարհներում: Մենք չենք կարող քանդել այդ չափումն պատղ ու մտնել Աստծու մոտ: Դա կարող է անել միայն Աստված. Նա քանդեց այդ պատղ եւ մեզ մոտ եկավ Հիսուսի մեջ:

Հիսուսի մասին Նոր Կտակարանում գրված է. «Եկավ յորայինների մոտ, բայց յորայինները Նրան չընդունեցին...»: Այս նախադասության վերջում կարելի է վերջապետ դնել, քանի որ միշտ չէ, որ Աստծու հետ մարդու հարաբերությունը դրական է: Ողբան էլ տարօրինակ է, շարունակությունը հետեւում է. «...իսկ ովքեր Նրան ընդունեցին, նրանց իշխանություն տվեց Աստծու զավակները լինել»: Այսպիսով, Աստծու զավակը դառնալու համար հարկավոր է ընդունել Հիսուսին: Իսկ որք ձեր սրտի դուռը բացե՞լ եք Հիսուսի առաջ:

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ես երիտասարդ սպա էի, Աստծուց շատ հեռու: Բայց հետո եկա այն եզրակացության, որ ինձ Հիսուսին սիրի հանձնեմ եւ ընդունեմ Նրան: Եվ իմ այդ քայլը արձատարեց փրկեց կյանքս, ու չեմ փորձանել: Հանուն Հիսուսի, ես շատ խոշորությունների հանդիպեցի իմ կյանքում: Հիսուսի հավատի պատճառով ինձ բանտ են նստեցրել: Հանուն Հիսուսի՝ ես ինձ գրիել եմ քազմաթիվ երկրային վայելքներից: Իսկ եթե հազար կյանք ունենայի, ապա հենց իմ խելահաս տարիքում կառաջնորդվեի այս քառերով. «Իսկ նրանց, ովքեր ընդունեցին Նրան, իշխանություն տվեց Աստծու զավակները լինելու»: Իմ կյանքը միայն այն ժամանակ իմաստ ունեցավ, երբ Աստծու զավակ դարձա: Բնավ տարբերություն չկա, թե ով եմ ես՝ հոգևոր հովիվ թե՞ դոնասպան, դիկտատոր թե՞ փակնագործ: Իմ կյանքը իմաստ է ստացել միայն այն ժամանակ, երբ Աստծու զավակ եմ դարձել: Այսպիսով, երբ դուք Հիսուսին ընդունեք, միայն այն ժամանակ ձեր կյանքը իմաստ կունենա:

Շատ հետաքրքիր է այս առիթով դիմել Նոր Կտակարանին: Օրինակ, այնտեղ մենք հանդիպում ենք մի կնոջ՝ Մա-

րիան Մազդարեանացուն, որը սկզբում գտնվում էր սարսափելի փեճակում. քանի որ նրան յոթ չար ոգիներ էին բռնել, ու դրա հետևանքով էլ նրա կյանքը խեղաբյուրովել էր: Եվ, անու, Հիսուսը մտնում է նրա կյանքի մեջ: Փրկիչը Լստծու Որդին՝ Հիսուս քրիստոսը, չար ոգիներին դուրս է հանում այդ կնոջից: Նա կարող էր այդ անել եւ ամուսն է: Հենց այդ պահից Մազդարեանը պատկանում է Հիսուսին, ու նրա կյանքն արդեն իմաստ է ստանում: Հետո մենք նրան համընդհանուր ենք Հիսուսի իսպառնակները: Նա վախենում է, թե կարող է նորից սկսվել իր առաջվա անհիմնապես կյանքը: Երրորդ օրը, վաղ առավոտյան, նա ծնկի է գալիս Հիսուսի գերեզմանի մոտ ու արտասպառնակ, որովհետև գերեզմանի քարը մի կտրվել էր տարված, ու նա չգիտեր, թե ուր է անհետացել Հիսուսի մարմինը: Եթե նա էլ այսօր կորցնեի Հիսուսին, ապա դա ինձ համար կնշանակեր ընկնել անհիմնապես կյանքի անդունդը: Ես Մազդարեան լավ եմ հասկանում. «Փրկիչը չկա: Հիմա իմ կյանքը նորից է սկսում կորցնել իր իմաստը»: Բայց հանկարծ նա իր հետեւից մի ձայն է լսում. «Մազդարեան»: Նա հետ է նայում ու տեսնում է հարություն առած Հիսուսին: Կարծես նա հիմա տեսնում եմ նրան. երջանկության արցունքները իտուսն են նրա աչքերից. «Ռաբբի, Տե՛ր իմ...»:

Այդ կնոջ օրինակով ինձ պարզ է դառնում, որ հարկաւոր չէ շատ փիլիսոփայել՝ ստանալու համար կյանքի իմաստին վերաբերող հարցի ճիշտ պատասխանը, դա պարզ է նույնիսկ անհնազանդաբանի մարդուն: Այն պահին, երբ Մազդարեան Մազդարեանացին ընդունեց Հիսուսին, նրա կյանքը իմաստավորվեց: Նա դարձավ կենդանի Լստծու երեխան:

թողնի բոլոր նրանց, ովքեր հեռու են Իրենից: Եթե ես այն-
պես եմ ապրում, կարծես, Աստված գոյություն չունի, այ-
սիցք, խախտում եմ Նրա պատվիրանները, կիրակի օրը
չեմ պահպանում կամ շնորհում եմ անում, Աստծուն չեմ
պաշտում ու ծնողներին չեմ հարգում, ապա ավելի ու ավելի
եմ հեռանում իրականությունից: Սակայն իմ կյանքում այս-
պես կանգուն մնալ չեմ կարող: Նայեք ձեր չորս բոլորը: Էյս
աշխարհում մարդիկ (նույնիսկ նրանք, ովքեր շատ փող են
վատարկում), ուղղակի չեն կարողանում ծայրը ծայրին
հասցնել: Մարդու հոգու խորքում բազմապիսի են դժգոհու-
թյունը: Թե ընտանեկան, թե անճանաչան կյանքում խարիչ-
ված դրություն է: Ինչպե՞ս կարող ենք կանգուն մնալ կյան-
քում, եթե այնպես չենք հավատում: Չէ՞ որ կյանքի հետ մենք
հաշտվել չենք կարող, ուր մնաց՝ մահվան հետ: Հարցուր
տարի հետո մեզանից ոչ մեկը այստեղ չի լինելու, մենք քո-
լորս մեռնելու ենք:

Հնարավոր է որեւէ մեկը ասի. «Մահից հետո ոչինչ չկա:
Մենք գնում ենք դեպի ոչնչություն»: Բայց ինքնեղ որոշեք,
թե ինչին եք վստահում. Աստծու Խոսքի՞ն թե՞ սեփական
սրտին: Ինչպես դիմավորեմ մահը, եթե համկարծ պարզ է
դառնում, որ ոչինչ չեմ կարող հետս վերցնել այս աշխար-
հում կուտակածից: Հնարավոր է՝ դուք տուն եք կատարել,
իսկ ես մի հրաշալի գրադարան ունեմ: Դրանցից, ինչպես
նաեւ այն ամենից, որ քանկ է եղել այս կյանքում, նույնիսկ
մարդկանցից, որոնց սիրել եմ, ես չեմ կարող հետս վերցնել:
Միայն մի բան կարող ենք վերցնել՝ մեր մեռելիքը Աստծու
առաջ: Պատվերացրե՛ք, թե պատկած եք մահվան շեմին ու
գիտակցում եք. «Ես ամեն ինչ պետք է այստեղ բողոճեմ, մի-
այն իմ հանցանքներն ու մեղքերը ինձ հետ միասին կկանգ-
նեն տուրք ու արդար Աստծու առաջ»: Ինչպե՞ս կանգնե՞ք
Աստծու դատի առաջ՝ առանց հավատարու Նրան, Ով ար-
դարացնում է անաստվածներին: Տեր Հիսուսը մի անգամ
ասել է. «Մի՛ վախեցե՛ք մարմինը սպանողից, նա չի կարող

հոգին սպանել: Վախեցե՛ք նրանից, ով կարող է սպանել եւ՝
մարմնը, եւ՝ հոգին»:

Մի քանի տարի առաջ Նորվեգիայում ապրում էր նշա-
նավոր պրոֆեսոր Հալեքսին՝ հարզված ու անկանի մի
մարդ: Շարքաբվա ընթացքում նա քարոզում էր ռադիոյով:
Ես դեռ հիմա էլ պատկերացնում եմ, թե ինչպես է նա կանգ-
նում բարձրախոսի առաջ ու ասում. «Գուցե դուք այսօր
հանգիստ պառկեք անհողմում, իսկ առափնայան արթնա-
նաք դժողւքում: Ես կուզեմայի նախազգուշացնել ձեզ»: Դա
անկարողների հոգեմուտք էր առաջացրել ժողովրդի մեջ,
որովհետեւ նորվեգացիները նույնպես իրենց դասում են
«Ժամանակակից մարդկանց» շարքը. չէ՞ որ մեր օրերում
դա շատ կարեւոր է: Օսլոյի կենտրոնական թեոթի մի լրագ-
րող այդ առիթով այսպիսի մի հոդված էր գրել. «Մենք միջ-
նադարում չենք ապրում, անթույլատրելի է, որ այնպիսի
ժամանակակից լրատվամիջոց, ինչպիսին ռադիոն է, նման
դատարկություններ դուրս տա»: Չէ, եթե կենտրոնական
թեոթը տպագրել է, ուրեմն, մյուս մանր-մունք թեոթերն էլ
պիտի նույնը կրկնեին: Եվ ահա բոլոր թեոթերում նույնն է
տպագրվում. «Մենք միջնադարում չենք ապրում, մի՞թե
թույլատրելի է, որ պրոֆեսորը խոսի դժողիցի մասին»: Իրա-
վիճակը պարզաբանելու համար Օսլոյի ռադիոն դիմում է
պրոֆեսոր Հալեքսին: Նա նորից կանգնում է քարձրախո-
սի առաջ ու ասում. «Ես պարտավոր եմ պարզաբանել իմ
ասածները. Շատ հնարավոր է, որ այսօր երեւոյան դուք
հանգիստ պառկեք ձեր անկողիններում, իսկ վարն առա-
փոյան արթնանաք դժողւքում: Ես կցանկանայի ձեզ նա-
խազգուշացնել...»: Հետո ի՞նչ է սկսվում: Դիմում են Նորվե-
գիայի բոլոր եպիսկոպոսներին ու հարցնում՝ գոյություն
ունի՞ դժողւքը: Նույնիսկ «Շափեզել» անագիրն է միջան-
տում այդ վիճարանությանը՝ «Վիճարանություն Նորվեգի-
այի դժողւքի մասին» վերնագրով մի հոդված տպելով իր
էջերում: Այդ արձուկից մոտ մի տարի հետո ես պիտի դա-
սախոտություն կարդայի Օսլոյի ռասանորոքյան համար:
Միզքում անցկացվեց մասնուրի աստուխ: Հուրանոցում հա-
վարվել էին բոլոր թեոթերի ներկայացուցիչները: Եվ, ա՛յ
քեզ զարմանալի բան, իմ աչք կողմում նստել էր այն լրագրո-
ղը, ով սկսել էր արձուկը, իսկ ձախ կողմում՝ պրոֆեսոր Հա-
լեքսին՝ որպես ավետարանչական մասնուրի ներկայացու-

ցիչ: Եվ, ասիս, քրագրողը սկսում է իր հարձակումը. «Պատվելի՛ Բուշ, մեր եւ պրոֆեսոր Հաբեյրիի միջեւ հակադրություն է առաջացել: Դուք ժամանակակից մարդ եք: Ի՞նչ եք կարծում, գոյություն ունի՞ դժոխք»: «Այո՛, պատասխանեցի ես, -անընշտ գոյություն ունի»: «Եւ չեմ կարողանում հասկանալ, ինչպե՞ս կարող եք Դուք դա հաստատել», - առարկեց քրագրողը: «Հաճույքով կբացատրեմ», - պատասխանեցի ես: - Եւ հավատում եմ, որ դժոխք գոյություն ունի, որովհետեւ այդ մասին ասել է Բժըն՝ Հիսուսը: Իսկ Հիսուսի բոլոր ասածներին ես հավատում եմ, որովհետեւ Նա ավելի շատ գիտեր, քան բոլոր խելացի մարդիկ»:

Աստծու խոսքը ասում է. «Աստված ուզում է ճշմարտության իմացություն»: Դրա համար էլ մենք խոսում ենք հավատի մասին, որովհետեւ Աստված մեզ ցույց է տվել արդարության, կյանքի ու մահվան ճանապարհները:

Ինչպե՞ս կանգուն մնանք կյանքում, երբ այլեւս չենք կարողանում հավատալ: Առանց հավատի չենք կարող կանգուն մնալ: Թ՛ույլ տվեք դա հիմնավորել մեկ այլ տեսակետով: Պատկերացրեք՝ դուք մի փոքրիկ ու շքեղ ոսկե ձկնիկ ունեք ու գրան ասում եք. «Խեղճ ձկնիկ, դու անընդհատ այս սառը ջրում ես, արի՛ ես քեզ համար հարմար պայմաններ ստեղծեմ»: Հանում եք գրան ջրից, սրբում ու դնում մի ոսկյա վանդակում...: Դուք գրան տալիս եք անհնախմեղ ոտերիքները, (ես չգիտեմ, թե ոսկե ձկնիկներն ինչո՞ւ են սնվում, միգրացի, միջուկների ձվիկներով կամ այս կարգի այլ բաներով) եւ վերջապես ասում եք գրան. «Ի՞նչ քնքրուշ ոսկե ձկնիկ, հիմա դու քեզ լավ ես զգում, դու շքեղ ոսկե վանդակ ունես, միջուկների ձվիկներ, մաքուր օդ»: Եվ ի՞նչ եք կարծում, ինչպե՞ս կարող է նա ձեզ երախտապարտ լինել, պիտի սրոյը շարժելով «շնորհակալություն» ասի: Ընդհակառակը, նա շնչակտոր կլինի վանդակում ու, եթե խոսել իմանա, կսալի. «Ինձ պետք չէ ոչ ոսկե վանդակը, ոչ էլ քո միջուկների ձվիկը, ես իմ տարերքն եմ ուզում, իմ ջուրը»: Իսկ մեր տարերքը համարվում է կենդանի Աստվածը, որ ստեղծել է երկինքը, երկիրը եւ մեզ բոլորիս: Շվեյցարական ազգային հիմնը այսպես է սկսվում. «Կյանքի բոլոր արթյունները՝ քեզ»: Աստված տարերք է համարվում: Ու մինչեւ եւ Աստծու հետ խաղաղություն չունենան, հոգիս ոսկե վանդակում պիտի բազմականություն գտնի: Հասկանո՞ւ՞մ եք:

Ժամանակակից մարդը ամեն ինչ անում է հոգու համար, օրինակ, ճանապարհորդություն, համեղ կերակուրներ, գինի, մի խոքով՝ ամեն ինչ, բայց հոգին թալանում է ու ասում. «Այս բոլորը ինձ հարկավոր չեմ, ինձ հարկավոր է իմ տարերքը, ես իմ տարերքն եմ ուզում, ես խաղաղություն եմ ուզում Աստծու հետ»: Ողբեմ, դաժան մի՛ եղեք ինքներդ ձեր նկատմամբ: Մեր սրտերը ճնշվում են մեր սեղանով, եթե խաղաղություն չենք գտնում Աստծու հետ: Ինչպես ճուկն է ձգտում դեպի իր տարերքը, այնպես էլ մեր հոգին է ձգտում դեպի Աստված, Ողբ համարվում է մեր տարերքը:

Ինչպե՞ս կանգուն մնալ կյանքում, եթե այլեւս չենք կարողանում հավատալ: Այդ հարցին ես պատասխանում եմ այսպես՝ ոչ մի կերպ: Ոչ կյանքում, ոչ մահվան, ոչ էլ հավիտենականության մեջ: Իսկ եթե դուք առարկիք ու ասեք, թե մարդիկ առանց հավատի էլ շատ ճոխ են ապրում, այստեղ ես կասեմ, որ դա միայն մակերեսային ճոխություն է, այդպես չէ: Վերցնենք, օրինակ, Գլոբիլին, նա գերեզման էր, հարուստ, խելացի, նախարարի պաշտոն էր զբաղեցնում, մի խոսքով՝ ուներ ամեն ինչ: Բայց, վերջ ի վերջո, խոստովանում է, որ եթե կյանքի հոգեւոր խաղաղության մեջ եղած պահերը գունձարեղ, հազիվ թե դրանք երեք ժամ կազմեն: Տագնապներով լի է այս կյանքը:

Չէ՛, առանց հավատի կյանքը չեւ քաղցրացնի: Մա ամենագլխավորն էր, որ ուզում էի ձեզ ասել: Հիմա անցնենք հաջորդ հարցին:

2. Կարևորը ճշմարիտ հավատն է

Վերջ ի վերջո, կարևոր է, որ դուք ունենաք ճշմարիտ, փրկարար հավատ: Յորաքանչյուր մարդ իր հավատն ունի: Երբ ես երիտասարդ ուսանող էի, մի անգամ մորս տեմբելու համար մի կին եկավ մեր տուն, բայց քանի որ մայրս տանը չէր, ես գրան հրավիրեցի նստել ու ասացի, որ ստիպված պիտի բավարարվի ինձ հետ գրուցելով: «Շատ հաճելի է, -ասաց նա, -իսկ ինչո՞ւ եք Դուք զբաղվում»: «Ուսումնասիրում եմ աստվածաբանությունը», -պատասխանեցի ես: «Ի՞նչ, -բացականչեց տիկինը,- աստվածաբանություն՞ն, ո՞վ է հիմա նման բաների հավատում, դա հնամա-

րավոր չէ»։ Եվ այդ պատակ տիկիրը, որպես հեղինակություն, իրեն օգնության է կանչում Գյոթեին (դա Ֆրանկֆորտում էր, որտեղ ապրել է Գյոթեն)։ Նա հպարտորեն ասում է. «Մենք հիմա հավատում ենք Գյոթեին։ Քրիստոնեությունը արդեն վարույց հնացել է»։ Քառյկի որ այդ գրույցը ինձ հաճելի չէր, ես շտապ փոխեցի բեմնան. «Հարգարժան տիրոտի, թույլ տվեք Ձեզ հարցնել, ինչպե՞ս եք ապրում»։ Եվ նա, թիկացնելով սեղանին, ասաց. «Թո՛ւ, թո՛ւ, թո՛ւ։ Մի՛թե կարելի է այդ մասին հարցնել»։ Ես շարունակեցի. «Նե՛րեցե՛ք, իսկ ի՞նչ է նշանակում «թո՛ւ, թո՛ւ, թո՛ւ»։ Նա պատահականեց. «Այդպես պաշտպանվում ենք դժբախտությունից»։ «Ախա թե ինչ, -ասացի ես, -որե՛նն, Դուք լքել եք կենդանի Աստծու հավատը, եւ հավատում եք «թո՛ւ, թո՛ւ, թո՛ւ»-ին կամ փայտին թիկացնելու՞ն, ա՛յ քեզ բան, «փայտուն» փոխանակում է»։

Տեսնու՞՞մ եք, որ ամեն ոք ինչ-որ բանի հավատում է։ Բոլոր դեպքերում էլ հարցը մեկն է. արդյո՞ք ճշմարիտ է իմ հավատը։ Մեր օրերում ասում են. «Կարեւորն այն է, որ հավատ ունեք»։ Եվ հաճախ կարելի է լսել. «Ես հավատում եմ Տեր Աստծուն», «Հավատում եմ բնությանը», «Հավատում եմ ճակատագրին», «Հավատում եմ նախախնամությանը»։ Ո՛չ, ո՛չ, բարեկամներ, կարեւորն այն է, որ ես ճշմարիտ հավատ ունեմ, այնպիսի մի հավատ, որը խաղաղություն է բերում, խաղաղություն Աստծու հետ, սրտիս, հոգուս հետ։ Ինձ անհրաժեշտ է այնպիսի մի հավատ, որը փրկում է դժոխքից, որը կարող եմ զգալ ցանկացած պահի եւ ամենուր, որը մոր կյանք է նվիրում։ Ուրիշ հավատ ինձ հարկավոր չէ։ Շատերն են հավատացել Գերմանիային, Ֆրյորերին, վերջնական հաղթանակին։ Եվ ի՞նչ, դուրս եկավ...։ Ինձ հարկավոր է ճշմարիտ, փրկարար հավատ, իսկ դա Հիտլերի հավատն է, կենդանի Աստծու Որդու հավատը եւ ոչ թե կրոնի առաջնորդներին, որ կան ամենուր եւ ինչքան ատեն։

Իսկ հիմա ես ձեզ պիտի բացատրեմ, թե ինչ է նշանակում հավատալ Հիտլերին։ Աստվածաշնչում նկարագրվում են հրաշալի պատմություններ, որտեղ արտացոլվում է Հիտլուս Քրիստոսի փրկարար հավատը։ Եվեք մտովի պատկերացնե՛ք այն ճանապարհը, որը երկու հազար տարի առաջ Երուսաղեմից տանում էր դեպի Գողգոթա։ Եվեք ուշադրություն չդարձնե՛ք այն մարդկանց վրա, ովքեր բարձրանում այն

գողգոթան էին։ Ուշադրություն չդարձնե՛ք նաեւ իռանական զինվորների վրա, որոնց որպես պահակ էին կանգնեցրել, եւ որոնք վրձակ էին զցրում Հիտլուսի պատմության համար։ Եվեք մի հայացք զցնե՛ք մեջտեղի խաչին զամբիված Աստծու Որդու վրա։ Նրա դեմքը ամբողջովն արյունառիկ էր զվիսից որված փշեպսակից։ Այնտեղ մեր Աստվածն է։ Նրա աչ ու ձախ կողմերի խաչերին կախված են երկու ավազակներ, որոնք նույնպես մահկան էին դատապարտվել։ Եվ համկարծ նրանցից մեկը բացակայում է. «Ասիի, Դու, որ մեջտեղում ես, Դու ասում էիր, որ իբր Աստծու Որդի ես։ Եթե Դու ճշմարիտ Աստծու Որդի ես, այլ ոչ թե խաբեբա, ապա իջի՛ր խաչից եւ օգնի՛ր ինձ»։ Նրան կարելի է հասկանալ։ Մահկան սարսափից մարդ կարող է ասել այնպիսի բաներ, որ երբեք մտքովի չի անցնի։ Հետո խոսում է մյուս ավազակը՝ դիմելով ընկերոջը. «Եվ դու դեռ չե՞ս վախճնում Աստծուց»։ Այս խոսակցությունից պարզվում է, որ երկրորդ դատապարտյալի համար Աստված տուրք է եւ ահավոր (Կարդա՛ Դուկ. 23. 32-43)։

Երբ մեր քաղաքներում պայթում էին ռումբերը, մարդկանց մեջ շփոթություն էր առաջանում։ Ելեղե՛ցին, գուցե, մեղավոր եր նրանով, որ չէր ասում. «Աստված կարող է նաեւ ահավոր լինել եւ զրկել քեզ իր հովանավորությունից։ Ու դու դեռ չե՞ս վախճնում Աստծուց»։ Այդ մասին պիտի արդարակենն այնտեղ, որտեղ մարդիկ շրջում էին դիակների մեջ, որպեսզի փող սարքեն...։ «Եվ դուք դեռ չե՞ք վախճնում Աստծուց»։ Այն երիտասարդներին, որոնք իրենց կյանքը վատնում են շնորհյալ մեջ, պիտի հարցնեին. «Եվ դուք դեռ չե՞ք վախճնում Աստծուց, ինչի՞՞ մասին եք մտածում, մի՞թե դուք կուրացել եք»։ Այսպիսով, ամեն ինչ սկսվում է սրության իմանցությամբ եւ Աստծու ցատուկից։ Եվ այդ հանցագործը հանրապարկ կերպով հայտարարում է. «Մենք արդարացիորեն ենք դատապարտված, մենք արժանի ենք»։ Մա երկրորդ պարագան է, որ փրկարար հավատի է բերում մեղքերի խոստովանությունը։ Ես հանդիպել եմ շատերին, ովքեր ասում էին, որ չեն կարողանում հավատալ։ Ես նրանց հարցնում էի. «Երբե՛տ մտածե՛ր՛ եք այն մասին, որ մեղավոր եք Աստծու առաջ»։ Ինձ պատասխանում էին. «Ո՛չ, ես ճիշտ եմ ապրում ու ոչ մի բանից չեմ վախճնում»։ Խոսում էի դարձյալ ես. «Քանի դեռ դուք շարունակում եք

ինքններդ ձեզ խաբեն, երբեք ճշմարտության չեք հասնի»:

Վեդյեդու հանդիպեցի մի մարդու, որն ասում էր, որ ճիշտ է ասվում ու ոչ մի բանից չի վախենում: Ես նրան իմ կողմից ավելացրի. «Շնորհակալորում եմ, սակայն ես այդպես չեմ կարող սանել: Ի՞նչ կյանքում անեն ինչ չէ, որ կարգվեն է»:
Նա պատասխանեց. «Այո, իհարկե, եթե անեն ինչին մակերեսորեն ամոքողաբանաց...»: «Այո, - ասացի ես, - քեզ ետևս աստված խստորեն է մտտենում, բայց դուք, միևնույնն է, ինքներդ ձեզ չեք խաբի»: Գիտե՞ք ինչ, դուք ճշմարիտ ես փրկարար հավատ կունենաք այն ժամանակ, երբ մեղքը մեղք կանգնանք: Երբ ձեր կեղտոտ սեռական հարաբերությունները շնորհյալ կանգնանք: Երբ ձեր դավաճանությունը դավաճանություն կանգնանք: Երբ ձեր սուտը կրդարանք խորամանկություն կոչեմք ու կսանք խելական անուրի՞ սուտ: Երբ դուք չեք այդպացնի ձեր եսասիրությունը, այլ կհիտառովանք, որ դրանով ինքներդ ձեզ անաստվածացնում եք: Այս ամենը ճիշտ հավանաբար՝ ես իմ մեղքը մեղք եմ անվանում ու դիմում եմ Աստծուն. «Տե՛ր իմ, ես արժանի եմ Քո դատաստանին»: Ինչքան անավոր է, երբ մեր ժամանակակիցները իրենց իրենց միխթարեղու համար ասում են. «Անեն ինչ շատ լավ է»: Բայց մի օր Աստված կպատռի մեր դեմքերի դիմակները:

Նույն ավագանի դիմում է Հիսուսին. «Դու ոչ մի վատ բան չես արել, ինչու՞ ես այստեղ կախված»:
Հետո փորձում է պարզել. «Չէ՞ որ Նա այստեղ ինձ համար է կախված: Նա էր վրա է վերցնում իմ մեղքերը»: Քիչ հետո նա կանչում է. «Հիշի՛ր ինձ, Տե՛ր, երբ գաս Քո քաղաքությունը»:
Դա էլ երբորդ պարագան է: Նա ամբողջովին հավատում է, որ Հիսուսը փրկություն է նվիրում, քանի որ մեռնում է ձեզ համար: Հիսուսը նրան պատասխանում է. «Ճշմարիտ եմ ասում քեզ, այսօր Ինձ հետ դրախտում կլինես» (Կարդա՛ Գուկ. 23. 32-43): Եվ այսպես, փրկարար հավատը բացահայտում է Աստծու սրբությունը, ես խոստովանում եմ իմ անցյալի կորուսյալ վիճակը, ես ընդունում եմ ինձ համար իսպի վրա մեռնող Հիսուսին՝ որպես իմ միակ փրկիչ: Միայն այսպիսի հավատով դուք կարող եք կանգուն մնալ, այսքանը կանան ձեզ: Շատերն ինձ կշտամբում էին, թե միակողմանի եմ կշտարատում, ես նրանց այսպես կպատասխանեմ. «Նե-րեցե՛ք, սակայն կյանքում տիրապետող լինելու համար գոյու-

թյուն ունի միայն մեկ եզակի ճանապարհ՝ մահ եւ դատ: Ուստի, ես գալիս եմ Հիսուսի մոտ, ապաշխարում: Խոստովանում եմ մեղքերս ու հավատում, որ Հիսուսի արյունը քափվել է իս-նից, Նրա դեմքից, Նրա ոտքերից: Ես բազմաթիվ մեղքերի մեջ էի, սակայն մաքրվել եմ այդ Սուրբ արյունով»: Ես կուգեմայի, որ դուք երբեք չմոռանաք այս նախադասությունը՝ ՀԻՍՈՒՍԸ ԻՆՉ ՀԼՍՄԸ Է ՄԵՌԵԼ: Երբ առավորեցին արքանաճում եք, ձեր մարմնը այս նախադասությունը: Աշխատակցի վայրում ես ձեր ոտքերում թող հնչի նույն միտքը՝ «Հիսուսը ինձ համար է մեռել»: Այն ժամանակ Աստծու գթոթյանը կծնկեք Նրա առաջ ու կսանք. «Նա ինձ համար է մեռել: Ինձ համար: Ուրեմն, ես կարող եմ հավատալ»: Հիսուսն ասում է. «Ես եմ դուք, ով իմ միջով մտնի, կփրկվի»:

Մարդիկ հաճախ են ինձ ասում. «Այո, պատվելի, այն, ինչ Դուք ասում եք, հենց դրան ես չեմ կարողանում հավատալ: Երբ ես Ձեզ լսում եմ, կարծես, ամեն ինչ լավ է լինում, սակայն հավատալ չեմ կարողանում»: Հենց այս խոսքին էլ հիմնա ոգւում եմ պատասխանել: Այսպես մտածողներին ես բաժանում եմ չորս խմբերի: Եվ այսպես.

3. Նրանք, ովքեր չեն կարողանում հավատալ...

ա) ...քանի որ կրոնավորներ չեն:
Առաջին խմբին պատկանողները ինձ այսպես են քա-ցատրում. «Պատվելի՛, Դուք կրոնավոր եք, ես՝ ոչ, ես չեմ կարող հավատալ»: Նրանց ես պատասխանում եմ. «Ես էլ կրոնավոր չեմ, զանգեղի դուրանը, խումկը եւ նման ծիսա-կատարությունները ինձ վրա ոչ մի ազդեցություն չեն գործում»: Ես շատ ուրախ եմ, որ վեդյին տարիներին դասա-վանքում եմ մի դառնիճում, որտեղ կա միայն հոգեառական մի նվազախումբ: Նորանցող զանգեղ չկան ու հարկավոր էլ չեն: Ես դրանց դեմ չեմ, բայց նաեւ ամիսաճշտության կա-ռուցումը չեմ զգում: Ասե՛ք՝ հիմա ես կրոնավոր եմ թե՞ ոչ: Երբ Աստծու Որդին մեր երկրում էր, կրոնական քաղաքակր-րություններ կային. փարիսեցիներ, օրենսգետներ. արանք կրոնի մարդիկ էին: Օրինակ, սարուկցիները ավելի վրեղալ կրոնավորներ էին: Նրանք այսօր կանեն. «Ես Աստծուն փնտրում եմ բնության մեջ»: Իսկ նացիստների ժամանակ

այսպես կհայտարարեն. «Մեր դրոշմերի վրա պատկերված է մեր Տեր Աստվածը»: Այսինքն, նրանք բոլոր ժամանակներում էլ կրոնավոր են եղել: Եվ հենց այդ կրոնավոր մարդիկ էլ խաչեցին Հիսուսին, դրովիտառի Հիսուսը նրանց կրոնը չէր համապատասխանում:

Կային նաև ոչ կրոնավորներ, ինչպես ամառակները, սպեկուլյանտները, մաքսավորները, արհեստավորները: Մրանք մեկրված էին իրենց գործին, քանի որ դրանով էին ապրելու միջոց վաստակում: Կար նաև հացրահանաչ մի մաքսավոր՝ անուկը Ջակքեռու, որը ուղիչներիցն թալաններով էր փող ձեռք բերում: Մրանք կրոնավորներ չէին, բայց ճանաչեցին Հիսուսին: Ինչպե՞ս: Նրանք գիտեին, որ մեղավորներ են և իրենց տրված կյանքը ճիշտ չեն ապրում: Եվ ասիա գալիս է Փրկիչը, Որը մեղավորներին Աստծու երեխաներ է դարձնում: Ու նրանք հավատացին Փրկչին:

Հիսուսը եկել էր ոչ թե կրոնավորներին ավելի կրոնական դարձնելու, այլ մահից ու դժիխքից մեղավորներին փրկելու և Աստծու երեխաներ դարձնելու համար: Եթե դեռ գոյություն ունեն այնպիսի մարդիկ, ովքեր ասում են, թե իբր կրոնական չլինելու պատճառով չեն կարողանում հավատալ, ապա ես նրանց հետևյալը կստան. «Դուք բոլոր էլ կարող եք Աստծու երեխաներ դառնալ»: Մենք գիտեցք, որ մեղավորներ ենք, սակայն Հիսուսը մեռել է մեզ համար: Ես կրկնում եմ. Հիսուսը եկել էր ոչ թե կրոնավորներին ավելի կրոնավոր դարձնելու, այլ մեռնող մեղավորներին Աստծու երեխաներ դարձնելու համար:

p) ... Մենք չենք կարող հավատալ:

Իրականում, եթե այս մարդիկ մինչև և վերջ ազնիվ լինեին, կասեին, որ չեն ուզում հավատալ: Եթե նրանք հավատային, ապա պիտի փոխեին իրենց ապրելու ձեռք: Հենց դա էլ նրանք չեն ցանկանում, քանի որ գիտեն, որ ճիշտ կյանքով չեն ապրում: Իսկ եթե նրանք Աստծու երեխաներ դառնային, ապա ամեն ինչ կբացահայտվեր: Սակայն՝ ոչ, նրանք այդ չեն ցանկանում ամեն, որովհետև շատերը վստիսենում են ընկերների ծաղր ու ծանակից: Իսկ ի՞նչ կսանն բարեկամները, եթե քրիստոնյա դառնան: Չէ, ավելի լավ է, պետք չէ: Իսկ եթե համոզվածք մարդկանց, ովքեր ձեռք կս-

տեն, թե չեն կարողանում հավատալ, ապա ուշադիր եղեք, ավելի ճիշտ չէ՞ր լինի, եթե նրանք ուղղակի ասեին, որ չեն ուզում հավատալ:

Աստվածաշնչում կա այսպիսի մի պատմություն. Աստծու Որդին՝ Տեր Հիսուսը, մտած էր Ջիթեմայաց Լեռան վրա: Նրա առջևում, արեւի ճաճանչների ներքո, փռված էր Երուսաղեմ քաղաքը: Հեռվում երեւում էր մի ուղիչ կեռ: Դրա վրա մի գերեցիկ տաճար էր կառուցված, որի մտակն հեթանոսներն ասում էին, թե կարելի է համաշխարհային հրաշքների թվին դասել: Այդ ամենը Հիսուսի առջևում էր: Եվ հանկարծ աշակերտները սարսափով տեսնում են, որ Հիսուսի աչքերից արցունքներ են գլորվում: Նրանք զարմացած ու տարակուսած մայրն են իրենց Ուսուցչին: Հիսուսն ասում է. «Երուսաղեմ, Երուսաղեմ... քանի անգամ կամեցա հավաքել թե՛ների տակ, ինչպես հավն է հավաքում իր ճագերին թե՛ների տակ, բայց դու չկամեցար: Եվ, ասիա, դուք արժանանում եք Աստծու դատրին: Այստեղ քարը քարի վրա չի մնար, ամեն ինչ ավերակ պիտի դառնա»: «Բայց դուք չկամեցաք», սա Աստվածաշնչի զարմանալի խոսքերից մեկն է: Երուսաղեմի բնակիչներն էլ էին ասում. «Մենք չենք կարող հավատալ», բայց նրանք ոչ թե չէին կարողանում, այլ ուղղակի չէին ուզում հավատալ (Կարդա՛ Դուկ. 13: 31-34): Պիտի ասեմ, որ ով չի ուզում հավատալ, թող չհավատա: Մինչև հիմա եկեղեցում գոյություն ունեն տարբեր տեսակի պարտադրանքներ, սակայն Աստծու Թագավորությունը բարկացած է միայն կանախներին: Ով ուզում է առանց Աստծու ապրել, թող այդպես ապրի: Աստված Ինքն է առաջարկում մեզ, իսկ մենք կարող ենք մերժել: Դուք ուզում եք առանց Աստծու ապրել: Ապրե՛ք: Դուք ուզում եք առանց արդթի ապրել: Ապրե՛ք: Ուզում եք առանց Աստվածաշնչի ապրել: Ապրե՛ք: Չե՞ք ուզում արթնանալ կիրակին, ուզում ե՞ք շնանալ, հարթե՞լ ստե՞լ, գործանալ: Խնդրե՛մ: Ով չի ուզում ընթրուել այս Փրկիչն, Որին Աստված ուղղակի էր մեղավորներին փրկելու, թող մերժի Տիրոջը: Ով ձգտում է դժոխք գնալ, կարող է գնալ: Աստված ոչ մեկին չի ստիպում, սակայն այդ մեղքերի հետևանքները դուք ինքներդ եք տեսնում: Աստված Հիսուսի միջոցով մեղքերի թողություն էր խաղաղություն է առաջարկում: Դուք, ինչպես, կարող եք միտել, դե՛, ուրեն այդպես էլ ապրե՛ք: Բայց չկարծե՛ք, թե մահից առաջ, ձեր կյանքի վեր-

ջին բուսեին քոքը կարող էր նվաճել այն, ինչ Տերն առաջարկել է ձեզ անբոյց կյանքի ընթացքում: Դուք կարող էք մերժել հաշտությունը Աստծու հետ՝ Տեր Հիսուսով, եւ այն ժամանակ դարեւոր պիտի ապրեք առանց խաղաղության, եւ հենց դա էլ դժոխքն է: Դժոխքը այնպիսի մի տեղ է, որտեղ քոքը, իրականում, լիովին ազատվում էր Աստծուց: Այնտեղ ձեզ արդեն ոչ ոք եւ ոչինչ չի առաջարկելու: Այնտեղից ձեզ ոչ ոք չի կանչելու: Շատ հմուտավոր է, որ քոք ուզենաք այնտեղ աղոթել, բայց չեք կարողանալու: Հնարավոր է, որ ցանկանաք կանչել Հիսուսին, բայց դարձյալ ձեզ մտա ոչինչ չի ստացվի: Դուք կարող եք հիմա չընդունել այն հրավերը, որը եւ ձեզ առաջարկում են: Կարող եք Հիսուսին չընդունել, բայց բոլոր պարզ միջոցով, որ այս ամենի արդյունքում քոք ընտրում էք դժոխքը: Դուք ազատ իրավունք ունեք ընտրություն կատարելու: Հիտուղ Երուսաղեմի բնակիչներին ասաց. «...Դուք չկանեցաք»: Նա ցրանց ոչինչ չէր ստիպում, բայց այն, ինչը նրանք նախընտրել էին, սարսափեցրեցին:

զ) ...Չեն կարողանում հավատալ:

Այս խնդիրն պատկանողները իրենց կյանքում շատ վիշտ ու տառապանք են կրել: Այստեղ հիմնականում տղամարդիկ են: Նրանք տարօրինակ փաստարկ են բերում: Կանանցից եւ նման բան չեն լսել: Իսկ փաստարկն այս է. «Պատվեի՜, եւ այնքան վիշտ եմ կրել, որ չեմ կարող հավատալ»: Եւ հարցնում են. «Այդ ի՞նչ վիշտ էր քոքը կրել: Ի՞նչ կյանքն էլ այնքան հանգիստ չի եղել»: Ինձ ասում են. «Այո՛, եւ այնքան վիշտ եմ կրել, որ այլեւս ոչ մի բանի չեմ հավատում»: Եվ այդ միտքը, ինչպես տեսիլք, տատանվում է աշխարհի բազմաթիվ տղամարդկանց ուրեղներում: Նման դեպքերում ծաղրում են նրանց՝ ասելով. «Չէ՞ որ քոք հավատում էր ավտորուսների շարժման կարգաօրհանին եւ ուստիկանատան տեղեկություններին»: Դրանք պատասխան ատանալուց հետո՝ շարունակում են. «Դե՛, էլ ինձ մի ասե՛ք, թե քոք ոչ մի բանի չեք հավատում, այլ ասե՛ք, որ հավատում էք միայն ավտորուսների մեկնելու կարգաօրհանին եւ ուստիկանատան տեղեկություններին: Տեսնո՞ւ՞մ եք՝ ի՞նչ տխուր կյանքը՝ լի մեղքերով, անմաքություններով, խափարով ու մոլորվածությամբ: Բայց Հիսուսն ի՞նչ կյանքը

մտավ, ու եւ հասկացա, որ Նա Աստծու Որդին է՝ ուղարկված Աստծուց: Այն ժամանակ եւ իմ կյանքը հանձնեցի Նրան, Ով ինձ համար այնքան շատ բարիք էր գործել: Եվ եթե քոք, իրոք, ոչ ոքի եւ ոչ մի բանի չեք հավատում, ապա հավատացե՛ք Նրան, Ով Իր կյանքը տվել է ձեզ համար, եւ միայն Նրան կարող եք հավատալ: Այո, քոք կարող էք Նրան հավատալ: Դուք շատ բաների եք հավատում, բայց Նրան՝ Եզրակիին, Ում կարելի է լիովին վստահել, եւ Ումից երբեք ոչ ոք չի հրապարակիլ, քոք «ոչ» եք ասում: Դա ծիծաղելի է: Հետո էլ ասում եք, թե շատ վիշտ էր կրել: Ո՛չ, քոք դեռ շատ քիչ եք տառապել:

դ) Չորրորդ խնդրում նրանք են, ովքեր չեն կարողանում հավատալ, որովհետեւ ինչ-որ բան խանգարում է նրանց:

Դրանք հանգստանալիս մարդիկ են եւ, իբր թե, չեն կարողանում հավատալ, որովհետեւ եկեղեցին կամ եկեղեցական գիտությունը խոչընդոտներ է ստեղծում:

Մի օր մի ուսանողուհի դիմեց ինձ. «Պատվեի՜, լսելով Ձեր դասախոսությունը՝ որոշեցի հետեւել Ձեզ, բայց չեմ կարողանում հավատալ, որովհետեւ Ձեր անառարկելի պնդումները, ինչպես նաև՝ եկեղեցու կառուցման սկզբունքները, անընդունելի են ինձ համար: Ընդունել դրանք՝ կնշանակեր մի խորձ չոր խոտ կուլ տալ»: Ես՝ ծիծաղելով պատասխանեցի. «Ձեզ բողոքով եւ հարկավոր չե՛ խոտ կուլ տալ, ասացե՛ք, Դուք երբե՛ւ լսե՞լ եք Հիսուսի մասին»: Նա դրական պատասխան տվեց, ու եւ շարունակեցի. «Եթե եւ Ձեզ ասեի, թե Հիսուսը խաբերա է, փիսիկատայի՞՞ք»: «Ո՛չ, եւ դրան չեմ հավատում»,- պատասխանեց նա, ու եւ ասացի. «Իսկ Դուք դե՛րե մեկի մասին կարո՞ղ եք ասել, որ ստում է»: «Ո՛չ,- ասաց նա,- չեմ կարող»: «Ա՛յ, տեսնո՞ւ՞մ եք, չէ՞ որ Դուք հավատում եք: Հենց իհիմա արտահայտեցիք Ձեր վստահությունը Հիսուսին, դա հրաշալի է: Անե՛ն ինչ այստեղից էլ սկսվում է՝ Հիսուսը ճշմարիտ է»: Աստիվածաշարունակ մեզ ասում է, որ ով ընդունում է Աստծու ուղարկված Հիսուս Բրիտանիան, նա հավիտենական կյանք ունի: Ձեզ հարկավոր չէ մտածել անառարկելի պնդումների կամ եկեղեցու կառուցման սկզբունքների մասին, քանի որ կյանքի արդա-

մուրջից ձեզ դիմավորելու է գալիս Մեկը: Դուք շատ պարզ տեսնում եք մեխանիզմից հոտող ալյուրոնը ու փշեպսակի վերքերը, դրոմք վկայում են, որ Նա Էր փրկա է վերցրել ձեր մեղքերը եւ ձեզ այնպես է սիրել, որ այդպիսի սեր եղբեր՝ չեք ունեցել: Թող բացվեն ձեր աչքերը, որպեսզի նայելով Հիսուսին՝ կարողանաք ասել. «Ի՛ն՝ Փրկիչ, ի՛ն՝ Տեր եւ ի՛ն՝ Աստված»:

Հավատալ Հիսուսին՝ չի նշանակում ընդունել ինչ-որ անուշաբլիեի պնդումներ կամ չոր խոտ կոլ տալ: Հիսուսին հավատում ենք՝ Նրան որպես մեր Փրկիչ ընդունելով:

Մի անգամ մեկը ասաց. «Ես չեմ կարողանում հավատալ, որովհետեւ այդ պատվելիները, պատվելիները...»: Ես հոգեւորականների մասին տարբեր պատմություններ եմ լսել: Մեկը սիրային պատմություններ է ունեցել, մյուսը՝ մեկ ուրիշ բան. ամենուրեք հոգեւոր ծառայողների հետ ինչ-որ բաներ են կատարվում: «Այդ պատճառով էլ ես չեմ կարող հավատալ...»: Թեպետ ես ինձ լավ գիտեմ, միեւրոյան է, կարծիքում եմ, որովհետեւ սիրային պատմություններ ես, անձանք, չեմ ունեցել: Եթե մարդիկ ինձ չճանաչեին, գուցե ինձ էլ լրջությամբ չընդունեին:

Իսկ հիմա ուշադիր լսեք: Աստվածաշնչում ոչ մի տեղ գրված չէ. «Հավատա՛ր քո հոգեւոր հովիվն ու կիրիվես...»: Սակայն գրված է. «Հավատա՛՛ Տեր Հիսուս Քրիստոսի ու կիրիվես»: Իհարկե, ոչ բոլոր հոգեւոր հովիվներն են համապատասխանում այդ ծառայությանը, բայց նրանց կարելի է համեմատել ճանապարհային նշանի հետ, որը ցույց է տալիս Հիսուսի մոտ տանող ճանապարհը: Եթե ճանապարհային նշանը մի քիչ ծռված է կամ գունագիլված, ապա դա մեզ չի խանգարում կործնորշվել եւ շարժվել ճիշտ ուղղությամբ: Ես էլ չեմ լսի այն պատվելիին, որը չի առաջնորդում դեպի Հիսուսը՝ դեպի խաչված ու հարություն առած Աստծու Որդին: Ես չեմ վայրանա այն ուղեցույցի վրա, որը ինձ ցույց է տալիս ճանապարհը եւ նպատակը, այլ կեցտեմ հասնել իմ նպատակին: Իսկ նպատակը սա է. «Կգա Հիսուսը՝ շնորհալի արքայորդ»: Մի՞թե դուք ցանկանում եք դատաստանի օրը կանգնել Աստծու առաջ՝ ասելով. «Տե՛ր իմ, ես չընդունեցի Քո շնորհը, ես չընդունեցի մեղքերի թողությունը, որովհետեւ պատվելին անպիտանի մեկն եր»: Եվ այսպես, դուք կուզենայի՞ք մի օր կանգնել Աստծու առաջ: Ո՛չ, բարեկամներ, ճիշտ չեք ասում, թե չեք կարողանում հա-

վատալ: Մի անգամ Հիսուսը այնպիսի խոսքեր ասաց, որոնց պրոֆեսն ու իմաստը անզերպագանցելի են. «Ով ուզում է Աստծու կամքը կատարել, պետք է մտածի՝ արդյո՞ք իմ գիտությունը Աստծուց է»: Դու ցանկանո՞ւմ ես սկիզբ դնել հնազանդությանն ու կատարել այն, ինչ ես եմ գիտակցել իմ կյանքում: Իսկ հետո ինքս կարող եմ առաջ շարժվել:

4. Ի՞նչ անեք, եթե չեա կարողանում հավատալ

Մի երկու բառով փորձեմ պատասխանել այս հարցին

ա) Աստծուց Լույս խնդրեք:

Նա ձեր կողքին է, այսպես դիմե՛ք Նրան. «Տե՛ր իմ, Ինձ հավատի բե՛ր, թող ես տեսնեմ Քո Լույսը»: Վստահ եղե՛ք, որ Նա ձեզ կլսի:

բ) Ի մկատի ունեցեք Աստծու մշտական ներկայությունը: Հիսուսը միշտ ձեզ հետ է: Ըշուրով ասացե՛ք Նրան.

«Հիսուս, ես ուզում եմ իմ կյանքը Քեզ հանձնել»: Այդ նույնը ես արել եմ, երբ իմ անաստվածային դրության մեջ վախեցել եմ Աստծուց: Միայն դրանից հետո եմ իմացել Հիսուսի մասին:

գ) Կարդացե՛ք Աստվածաշունչը:

Օրական գոնե մի քառորդ ժամ անցկացե՛ք Հիսուսի հետ: Կարդացե՛ք Աստվածաշունչը եւ աշխատե՛ք ըմբռնել, թե Աստված ինչ է ուզում ձեզ անել: Կարդացե՛ք համալսարանում, հետո ձեռքներդ ծալեք ու արդթե՛ք. «Հիսուս, ես շատ բան ունեմ Քեզ ասելու, ես չեմ կարող հաշտվել իմ կյանքի հետ, օգնի՛ր ինձ»:

դ) Աշխատե՛ք շփվել քրիստոնյաների հետ:

Հարողորակցվե՛ք այնպիսի մարդկանց հետ, ովքեր նույնպես ցանկանում են իսկական քրիստոնյա դառնալ: Միայնակ մի՛ մնացե՛ք: Միայնակ ճանկորդներ երկինք տանող ճանապարհին չեմ լինում, ուստի, շփվե՛ք այնպիսի քրիստոնյաների հետ, ովքեր նույն ճանապարհով են ընթանում:

**ԻՆՉՊՈՒՍ ԿՐԾՏՎԵԼ ԿՅՈՒՔԻ ՀԵՏ, ԵՓԵ ՄԵՁ
ՍԵՆՆՈՒՆԱՆՈՒՄ ԵՆ ՁՄՆՅՈՒՔՆԵՐԻՆ ԱՌ
ԲԱՅԹՈՂՈՒՄՆԵՐԸ**

Դա շատ լուրջ հարց է: Իրականում, այդպիսին է մեր կյանքը, այդ պատճառով էլ ես երջանիկ եմ, որ կարող եմ ձեզ պատմել այն մեծ ու հրաշալի ճակատագրի մասին, որ մարդկանց է՛ր երջանկացնում է, է՛ր հարըստացնում: Այդ ճակատը ոչ մի տեղ, ոչ մի երկրում չի կարելի գնել, եթե նույնիսկ միևնույնը վճարեք: Այսօր շատ բաներ ձեռք են բերվում ծանրների միջոցով, սակայն բոլոր նույնիսկ ծանրի միջոցով չեք կարող այդպիսի ճակատներ ունենալ: Մի խոսքով՝ այդ հրաշալի ճակատը երբեք ինքնուրույն գնել չեք կարող, այն կարելի է միայն ստանալ: Այդ ճակատը կոչվում է մեղքերի բողոքություն: Ես գիտեմ՝ հիմա շատերը հիասթափված մտածում են. «Մեղքերի բողոքություն»-ն, ես անմիջապես հարց է ծագում.

1. Իսկ դա ինձ անհրաժեշտ է

Ես համոզված եմ՝ ձեզանց շատերը կասեն, որ իրենց մեղքերի բողոքություն պետք չէ ընդհանրապես: Վերջերս մի երիտասարդ բացատրում էր. «Մեր ժամանակներում ամեն քայլափոխի հանդիպող, օրական մի քանի անգամ հեռուստատեսությամբ ցուցադրվող գովազդները գրգռում են մեր նյարդերը: Օրինակ, մեր նախնիները ծանոթի կամ սիգարետի մասին գաղափար չունեին, մինչդեռ այսօր, հեռուստացույցով ու ռադիոյով ձեզ համոզում են, որ առանց այդ հստատեսության կյանքը անիմաստ է: Սկզբից գրգռում են մարդկանց պիտոժաղը, հետո՝ վաճառում»:

Երիտասարդը շարունակում է. «Եվ ճիշտ այդ նույն ձեռքով էլ եկեղեցին է վարվում, սկզբում մարդկանց հայտարարում է, թե հարիպաղող է մեղքերի բողոքություն ստանալ, հետո դրանով առևտուր է անում: Հասկանո՞ւմ եք, մենք դրա պահանջը չունենք, սակայն այդ պահանջը բոլոր երեք գրգռում մեր մեջ, որպեսզի հետո կարողանաք վաճառել ձեր ապրանքը»: Արդյո՞ք այդպես է դա: Եթե դուք հիմա փորձում

կանգնեցնեք առաջին պատահած մարդուն ու հարցնեք. «Մտե՛ք, խնդրե՛մ, դուք ձեր մեղքերին բողոքություն տալու պահանջ ունե՞ք», նա ձեզ, հավանաբար, այսպես կպատասխանի. «Ի՞նչ հիմնություն, ինձ հարիպաղող է ոչ թե մեղքերի բողոքություն, այլ երկու հազար մարկ»: Գե՞ որ դա այդպես է: Մի՞թե հնարավոր է գրգռել այն պահանջը, որը տվյալ պահին բողոքվին գոյություն չունի, ես հետո պատասխանել Աստվածաշնչի միջոցով:

Պիտի ասեմ, որ դա մի ահավոր մոլորություն է, շատ ահավոր, քանի որ ձեզ համար առավել անհրաժեշտ բան չկա, քան մեղքերի բողոքությունը: Ով կարծում է, թե մեղքերին բողոքում տալու պահանջ չունի, նա չի ճանաչում Սուրբ, միածանմանակ երևալի Աստծուն: Աստծու սիրտ մասին այնքան շատ է ասվել, որ չգիտե՞ք նույնիսկ, թե որքան ահավոր է Աստված (ինչպես ես գրված է Աստվածաշնչում): Ես մի անգամ իմ կյանքում արթնացել եմ մեղքերի մեջ ու հավակցել, որ Աստծուց հարիպաղող է վախենալ: Ով ասում է, թե մեղքերին բողոքություն տալու կարիք չունի, նա կենդանի Աստծու մասին ոչ մի գաղափար չունի, ու չգիտի, որ Աստված կարող է նրա մարմնին ու հոգին դժիշտ շարտել: Այո՛, իրոք, կարելի է հավերժ կործանվել: Դա չիտույն է ասում, ես Նա գիտի: Իսկ եթե ողջ աշխարհն ասի, թե դրան չի հավատում, ուրե՛նք, կկործանվի ողջ աշխարհը: Հիսուսը գիտի այն ամենը, ինչը ձեզանց գաղտնի է պահվում: Նա համառորեն ձեզ նախազգուշացնում է կործանման մասին: Իսկ մենք մնում ենք մեր մեղքերի մեջ ու ասում, թե բողոքում իմնողելու կարիքը չունենք, թե իբր եկեղեցին գրգռում է մեզ: Ի՞նչ հիմնություն: Ոչ մի բան մեզ այնքան անհրաժեշտ չէ, որքան մեղքերին բողոքում տալը:

Լսե՛ք՝ մի բան պատմե՛մ ձեզ: Մի անգամ ես պիտի հավարտյա անցկացնեի Յյուդիկա քաղաքի համազումարների պալատում: Դա մի մեծ միջոցառում էր: Շատերը նստելու տեղ չունեին ու ստիպված կանգնել էին պատերի տակ: Նրանց մեջ ես ուշադրություն դարձրի երկու ջենտլմենների, որոնք ուրախ-ուրախ գրոցում էին: Իսկույն մկատվում էր, որ լոկ հետաքրքրության համար են եկել: Նրանցից մեկը գեղեցիկ մոլորք ունեւ: Նա ուշադրություն գրավեց, որովհետեւ ինքն այդպիսի մոլորք չէր կարող ունենալ: Սկսելով դասախոսությունս՝ որոշեցի բոլորի հայացքները գրավել

ին կողմը: Նրանք մեծ հետաքրքրություն էին լսում ինձ: Եվ, ահա, ես առաջինը պատմեցի մեղքերին բողոքյուն տալու մասին ու այդ նույն պլակին նկատեցի, թե ինչպես մտորքով պարզվեց քննիչի տվեց եւ ինչ-որ բան շշուկաց ընկերուց ավանդին: Ես, ինչպիսի, չլսեցի, թե նա ինչ ասաց, բայց դեմքի արտահայտությունից գլխի ընկա. «Մեղքերի ներքին»: Դե՞ որ դա միայն հոգեւորականին հատուկ գառանցանք է»: Նա նաև մտածում էր. «Ես հանցագործ չեմ, հետեւաբար, մեղքերի բողոքյուն կարիք չունեմ»: Խոստովանեք, որ դուք էլ եք այդպես մտածում: Ես ճիշտ եմ:

Այստեղ ես սկսեցի զայրանալ: Գիտեմ, որ Աստծո առաջ զայրանալ չի կարելի, բայց զայրուքը այնպես էր ինձ համակել, որ չընկնայեմ ու ասացի. «Մի բույն, ուշադրություն, ես իրնա ընդմիջում եմ հայտարարում, իսկ դուք փորձեք պատասխանել հետեւյալ հարցին. «Դուք մեղծում եք մեղքերի համար բողոքյուն խնդրելու անհրաժեշտությունը, որովհետեւ դա ձեզ հարկավոր չէ՞, այո՞»: Եվ այդ մեծ, լեզվեցուն դահլիճում հանկարծ լռություն տիրեց: Մոլորաբար պարզվեց, վախից գունատված, հեմվեց պատին եւ, հավանաբար, ուզում էր ասել. «Ես հանցագործ չեմ, բայց եթե գործին լրջորեն մոտենամ, կուզենայի մեղքերիս բողոքյունն ստանալ: Ես դրանից չեի հրաժարվի»: Իսկ դու՞ք: Թե՞ դուք հրաժարվում եք:

«Ես ճիշտ եմ ու ոչ մի բանից չեմ վախենում», ես հաճախ եմ լսում այս արտահայտությունը: Պատկերացրեք, որ այսպես ասում են հատկապես միջին տարիքի մարդիկ: Երկուսուսուրդ ստույգ գիտի, որ իր կյանքը լի է արատներով, հետեւաբար, նման կերծ համոզմունք կարելի է արտահայտել միայն սեփական խիղճը անհիմա սպանելով: Եթե ես դրեմ մեկից լսում եմ. «Ես ճիշտ եմ եւ ոչ մի բանից չեմ վախենում», իսկույն առաջիկում եմ. «Դու արդեն քառասունն անց ես ու սկսեցիք ունենալ, դրա համար էլ այդպես ես խոսում, դու անհիմա սպանել ես քո խիղճը»: Քանի դեռ խիղճը սպանված չէ, մեներ շատ լավ ենք հասկանում, որ մեղքերի բողոքյունը մեզ համար պարզապես շատ մեծ անհրաժեշտություն է:

Մրանից մի քանի տարի առաջ Էստենում ելույթ էր ունենում նշանավոր երաժիշտ Բիլ Հեյլին կամ, ինչպես նրան անվանում են «Ծուռը»: Նրա համերգը լսելու համար վիթխարի դահլիճում հավաքվել էին հազարավոր պատանիներ

ու արջիկներ, որոնք համերգի հենց առաջին երգից հետո սկսեցին ավերել դահլիճը: Հասցված վնասը կազմում էր մոտ վաթսուս հազար մարկ: Այդ դեպքից հետո մի երկուսուսուրդ ուստիկան ինձ պատմեց. «Ես նստել էի աջեիում եւ անբուրք ուժով բռնել արթից, որ նրանց չմիանամ»:

Հաջորդ օրը, երբ քայլում էի քաղաքի փողոցներով, տեսա երեք տղաների եւ խիստի հասկացա, որ նրանք երեկվա ավերողներից են: Մոտեցա ու ասացի. «Ես գիտեմ, որ երեկ երեկույան դուք էլ եք մասնակցել Բիլ Հեյլի համերգին, այդպես չէ՞»: «Ճիշտ է, պատկերի»: «Ուրեմն, քանից պարզվում է, որ մեներ ճանաչում եք միմյանց, հրաշալի է: Ասացեք, ինչո՞ւ երեկ ավերեցիք դահլիճը, ես չեմ հասկանում», - հարցրի ես: Եվ լսում եմ պատասխանը. «Ախ, պատկերի Բուշ, դա միայն փաստությունից էր»: «Ի՞նչ, ասում եմ, - փաստություն՞: Ինչի՞ համար»: «Դե, դա մեներ ինքներս էլ չգիտեմք», - հետեւեց պատասխանը:

Դա՛նիսցի նշանավոր աստվածաբան եւ փիլիսոփա Կիրեզգարը պատմում էր, որ երեխա ժամանակ հաճախ էր գրոսնում հոր հետ: Հայրը մերք ընդ մերք կանգ էր առնում, նայում դրոսն ու ասում. «Տղա՛ս, դու թախծոտ ես երեխում, ինչ-որ բան, կարծես, ճնշում է քեզ»: Ի՞նչ քառասուն տարվա հովակման ծառայության ընթացքում ես շատ եմ համոզվել թախծոտ ու ճնշվածության զգացողություն ունեցող մարդկանց: Իսկ իրնա հարցնում եմ. «Ծանո՞թ եմ ձեզ այդ մեղքին թախծոտ ու ճնշված իրավիճակը»:

Հիմա կպատմեմ, թե ինչից է դա առաջանում: Երբ աշխատում էի Բուր քաղաքի շրջաններում, հաճախ էի հանքերն իջնում: Դա շատ հետաքրքիր էր, հազում ես հաստիկ հագուստ, գլխիդ դնում սարավարտ ու վերելակով սուզվում երկրի ընդերքը, օրինակ, մինչեւ ութերորդ հորիզոն կամ, գուցե, ավելի խորը: Այո՛, բայց դրանից խորը, սովորաբար, չեն իջնում, որովհետեւ, ինչպես ասում են, այնտեղ արդեն «ճահիճ» է: Այդ «ճահիճում» հավաքվում են բնախորային ջրերը, եւ դրա համար էլ հանքափորները այդ անունն էին տվել: Հիշում եմ, երբ ասքրում էի Էստենում, առաջիկ մի դեպք պատահեց, ճուշանը կտրվել էր ու վերելակը հայտնվել էր «ճահիճում»: Դա սարապիտի էր:

Ես կուզեի գուզահեռների վրա դնել հանքերը եւ մարդկանց: Մեներ գիտեմք, որ մեր կյանքում գոյություն ունեն մի

քանի մակարդակներ: Այսինքն, մենք կարող ենք ցույց տալ, թե ուրախ ենք, սակայն, իրականում, տխուր լինենք: Կարող ենք ծղտալ, իսկ ներսում՝ բախժել: Կարելի է նույնիսկ ցույց տալ, թե մեր կյանքում ամեն ինչ հարթ է, անգամ թաքցնելով, որ հոգու խորքում բույն է դրել հիասթափություն: Սա հաստատում են բժիշկները, փիլիսոփաները, հոգեբանները, հոգեբույժները: Մի անգամ մի հոգեբույժ ինձ ասաց. «Դուք չեք էլ կարող պատկերացնել, թե երիտասարդների ինչ բանակ է դիմում մեզ: Յապն այն է, որ ցրանք չեն հետաքրքրվում, թե որտեղից են առաջանում իրենց հիասթափությունն ու վախը: Սովորաբար, այսպիսի դեպքերում ցրանք ելքը գտնում են միայն հարբեցողության մեջ: Իսկ ավելի լավ չէ՞ր լինի, եթե նայեինք իրականության այլ-քերին: Այնպիսի տպավորություն ես ստանում, կարծես, իրողությունը, որ մարդու սրտում բույն է դրել հիասթափությունը, հենց մեր դարում արված բացահայտում է:

Չարձանալին այն է, որ Աստվածաշունչը դա հայտնաբերել է ավելի քան երեք հազար տարի առաջ: «Խարդախ է մարդու սիրտը... ու փչացած»,- գրված է այնտեղ: Նշված են նաև դրա պատճառները: Աստվածաշունչը ներկայացնում է մի քանի պատճառ: Մեկը, օրինակ, այն է, որ մեղանչելու օրվանից ի վեր՝ մենք հեռացել ենք Աստծուց, քանի որ այդուհետ էլ մենք հեռացել ենք Աստծուց: Իսկ մեր սրտերում բուն դրած խորը հիասթափության հիմնական պատճառը մեղքն է: Մեղքը՝ Աստծու առաջ: Հենց մեղքն է համարվում արեւտ, եւ դրա դեմ մենք անկարող ենք պաշտպանվել: Մեր անկարողությունն էլ առաջ է բերում այն խորը հիասթափությունը, որը ճնշում է մեր սիրտը:

Հարկավոր է մեզ մեղքերի ներում: Իհարկե, հարկավոր է: Դրանից ավելի անհրաժեշտ ոչինչ չկա: Իսկ ի՞նչ է իրենից ներկայացնում մեղքը. դա մարդու բաժանումն է Աստծուց: Մենք ծնվում ենք այսպես մեղավոր: Թո՛ւյլ տվեք մի օրինակ բերել: Երեխան, որը ծնվել է, ասենք, Անգլիայում, պատերազմի ժամանակ, մե՛ր՝ գերմանացիներիս դեմ, իհարկե, ոչ մի ՔՁնամոթյուն չի ունեցել, սակայն նա ծնվել է ՔՁնամու ճանքարում: Այսպես էլ մենք. մենք ծնվում ենք մի ճանքարում, որը ՔՁնամոթյուն է անում Աստծու դեմ: Ահա այսպես, աստիճանաբար հեռանում ենք Աստծուց՝ ավել-

լացնելով մեր հանցանքների ու մեղքերի թիվը: Աստծու պատվիրանների ամեն մի խախտում յուրօրինակ մի քար է՝ դրված մեր զանցանքների պատին: Այսպիսով, մեղքը դառնում է չարագուշակ իրականություն:

Հիմա ես ձեզ կպատմեմ, թե ինչպես առաջին անգամ հասկացա, որ մեղքը չարագուշակ իրականություն է, եւ ոչ մի մեղք հնարավոր չէ ուղղել: Իմ հայրը հոյակապ մարդ էր, ու մենք իրանալի հարաբերություններ ունեինք: Մի անգամ, երբ պատրաստվում էի քննության, ներքեից լսեցի անունս՝ «Վիլիելմ»: Կանչողը իմ սիրելի հայրն էր: Ես պատռուհակից գլուխս հանեցի ու ասացի. «Ի՞նչ է պատահել, հորե՞՞ր է»:
Հայրս ասաց. «Ես գնում եմ քաղաք, չե՞ս ուզում ինձ հետ գալ, միասին ուղախ կլինի»:
«Ա՛խ, հայրիկ, - ասացի վերեւից,- ես հիմա այնքան զբաղված եմ, որ չե՛ի ուզենա քուրս գալ: Ես պատրաստվում եմ քննության»:
«Այդ դեպքում ես մե՛նակ կգնամ»,- պատասխանեց հայրս:

Դրանից երկու շաբաթ անց՝ հայրս մահացավ: Մոլորութայն հասնածայն, գիշերը, դազալի կողքին պետք է հարսգատների լինելին: Խաղաղ գիշեր էր: Բոլորը քնած էին: Ես մե՛նակ նստել էի դազալի կողքին ու հանկարծ հիշեցի, թե ինչպես, երկու շաբաթ առաջ, երբ հայրս խնդրեց իր հետ քաղաք գնալ, ես մերժեցի: Նայում էի հորս ու մտրումս ասում. «Ա՛խ, հայրիկ, խնդրի՛ր ինձ ես մեկ անգամ, ու եթե դու ցանկանաս ինձ հետ թեկուզ հարյուր կիրոնետր քայլել, քեզ մե՛նակ չեմ թողնի»:
Սակայն դրա շրթունքները չէին շարժվում: Այդ ժամանակ ես հասկացա, որ իմ անտարբերությունը հենց այն չարագուշակ իրականությունն էր, որը այլևս ուղղել չէի կարող: Ի՞նչ եք կարծում, մեր կյանքում քանի՞ զանցանք ու բացթողում կա: Ինչպե՞ս հաշտվենք կյանքի հետ, երբ մեզ անընդմեջ ուրեկցում են զանցանքներն ու բացթողումները: Առանց մեղքերին թողություն տալու՝ մենք չենք կարող հաշտվել կյանքի հետ: Իսկ մտքի հետ ինչպե՞ս վարվենք: Մի՞թե որք ուզում եք մեղքներից ձեզ հետ հավերժություն տանել: Ես հաճախ եմ պատկերացնում, թե ինչպես է դա լինելու: Ես դեռ կարողանում եմ ձեռքս ամուր պահել մարմնիս վրա, բայց կզուս մի ժամանակ, երբ ստիպված կլինեմ թուլացած կախել ձեռքերս: Այնժամ իմ կյանքի նախը խարխուս կզցի Աստծու ատայանի առջեւ: Հավստագած երեք, որ մի օր էլ դուք պիտի կանգնեք Աստծու առաջ՝

ձեր բոլոր զանցանքներով ու բացթողումներով: Եվ պատկերացնում եմ, թե ինչքան ծանր է լինելու, երբ բացահայտեք ձեր մեղքերն ու բացթողումները, որոնք տարել եք հետևելու: Հարկափափո՞ր է մեզ մեղքերի բողոքություն: Այո, ինչպես կենսական հացը, մույսիսկ դրամից առափել:

2. Ինչպե՞ս ստանալ մեղքերի բողոքություն

Կարելի՞ է անցյալը մոռանալ: Եթե այո, ապա ինչպե՞ս: Ես ձեզ պատենցի հորս մասին: Ես իմ մեղքը երբեք չեի կարող ուղղել, դուք ինձ հասկանա՞մ եք: Ընդհանրապես, մեզ մեր զանցանքները ինքներս ուղղել չենք կարող: Լստծու արաչ մեր բոլոր գործողությունները տպագրվում են վարձքի սպասումով: Հուրա ամուսնով մի մարդ երեսուն արծաթով մատնեց Փրիչին: Հետո հանկարծ հասկացավ, որ սխալ է վարվել ու գնաց նորից այն մարդկանց մոտ, ում մատնել էր Հիսուսին: Նա վերադարձրեց փողը ու ասաց. «Ես չարիք եմ գործել, փողը ետ վերցրեք, ես ուզում եմ ուղղել իմ զանցանքը»: Նրանք, սակայն, թոթվում են ուները ու պատասխանում. « Դա մեր ի՞նչ գործն է, ինքը ուղղիր»: Ում էլ դիմեք, բոլորն էլ նույն պատասխանը կտան. «Ի՞նքը ուղղիր»: Այտախանդե՞րձ, ես ասում եմ, որ դուք հնարավորություն ունեք ոչնչացնել ու վերացնել ձեր զանցանքները եւ բացթողումները: Ինչպե՞ս: Ինչպե՞ս է տեղի ունենում մեղքերի ներումը կամ բողոքությունը:

Բարեկամներ, այդ հարցին խանդավառությամբ ու միաբերում պատասխանում են Լստվածաշունչը գրողները՝ սկզբից մինչևի վերջ: Սուրբ Գիրքը սկզբից մինչևի վերջ քսացատրում է մեզ, որ գոյություն ունի մեղքերի բողոքություն:

Իսկ դրսե՞ր զանե՞ք այդ բողոքումը:

Եկեք նորից մտքով ինձ հետ զնանք Երուսաղեմի դարպասներից ոչ հեռու գտնվող Գողգոթայի բլուրը: Պետք չէ ուշադրություն դարձնել ո՛չ բազմության եւ ո՛չ էլ կախված երկու ավազակների վրա: Մենք պետք է նայենք միայն դրանց մեջտեղում խաչված Մարտին: Ո՞վ է այդ Մարդը: Նա, ինչպիսի, նման չէ մեզ: Այդ մարդը մի անգամ իր ծորվորին ասաց. «Ո՞վ կարող է Ինձ մեղադրել մեղքի մեջ»: Ոչ մեկ ոչ մի մեղք չկարողացավ գտնել Նրա վրա: Այդ հար-

ցում, ինձ թվում է, մեզանից ոչ մեկ չի կասկածում, ու եթե հայտնվեինք այդ ժամանակներում, ոչ մեկ չէր համարձակվի հարցնել Նրան իր մեղքերի մասին: Համեմայնեցալ, Նրան մեղադրում էին ինչ-որ հանցագործության մեջ, իսկ հոռմեացի դատավորներն ու իրեական ծերակույտը սկսել էին հարցաքննել, միմյեռ Նա կատարյալ անմեղ էր: Այդ մարդը մեզակց մեկը չէր: Նրան մեղքերի ներում հարկավոր չէր, չնայած գամված էր մեջտեղի խաչին: Ո՞վ էր այդ Մարդը: Նա եկել էր ոչ թե մարդկանց, այլ Լստծու աշխարհից: Ես ձեզ պատմում եմ Հիսուսի՝ Լստծու Որդու մասին, Որը գամված էր խաչին: Ինչո՞ւ համար:

Բարեկամներ, Լստված Սուրբ է: Նա պիտի պատժի մեղքը: Այն ժամանակ Նա մեր մեղքերը բարձեց Իր Որդու վրա եւ մեր մեղքերի վարձքը ստացավ Հիսուսից: «Համայն աշխարհի տույժը Նրա վրա էր», -աս է Լստվածաշնչի բովանդակ բնութագրողը: Հիսուսը հանճնված է Հայր Լստծու դատին՝ մեր իաշտության համար: Անոս թե դատել է մեղքերի ներումը:

Որտե՞ր կարող եմ ազատվել մեղքերից: Որտե՞ր խաղաղություն գտնեմ Լստծու հետ: Հիսուսի խաչի մոտ: «Լստծու Որդու՝ Հիսուս Քրիստոսի արդյունը մեզ մաքրում է բոլոր մեղքերից»: Այո, եթե կարողանայիք դա ճիշտ հասկանալ, ինչքան լավ կլինել:

Հրատարակվել է ամերիկացի վիդյան Հուլիս գործերից բավական հետաքրքիր մի գիրք: Հուլյը եղել է հոգևոր հովիվ ու տասներեք անգամ այցելել է քանո՝ Ադոլֆ Այխմանին, որը սպանել էր միլիոնավոր մարդկանց: Պատվելին եղիար ժամանակ գրուցել է նրա հետ, լսել հետո հետևել, խոսքերը, որեկեցել մինչևի կախաղան, իսկ հետո հետևել, թե ինչպես են նրա մոխիրը բափել Միջերկրական ծովը: Այս ամենի արդյունքում պատվելի Հուլը մի գիրք է հրատարակում՝ «Պայքար իռգու հետ» վերնագրով՝ ներկայացնելով գրույցը Այխմանի հետ: Սկզբում կարդում ենք, որ նա շատ է ցանկացել այդ ախավոր հանցագործին ցույց տալ փրկության ճանապարհը, որպեսզի վերջինս դժոխք չընկնի: Ջարմանակին այն է, որ այդ մարդը, աշխարհին աղքատ վիշտ պատճառելով հանդերձ, մինչևի իր կյանքի վերջին պահը ասել է. «Ես ոչ մեկի գնորդության կարիքը չեմ գգում: Ինձ հարկավոր չէ մեղքերի բողոքություն»:

Դո՞ւք էլ եք ուզում գնալ Ալյխանի հեղեղով ու մեռնել նրա նման: Ո՞չ: Այդ դեպքում ամբողջ սրտով դիմեք Հիսուսին: Աստծու Որդուն: Միայն Նա կարող է ներել ձեր մեղքերը, քանի որ Նա դրա համար է մեռել, Նա դրա համար արդեն վճարել է: Հուլիս, Ալյխանի հետ զրուցելիս, չի ուզեցել նույնիսկ այդ «մարդ» կոչեցյալին Հիսուսի արյան միջոցով մեղքերի բողոքում առաջարկել: Այո՛, այո՛, Հիսուս Քրիստոսի արյունը մեզ մաքրում է ամեն մի մեղքից: Մեռում է՝ նա Նրան խոստովանեմ իմ մեղքերը, պատմեմ ամեն ինչ ու հավատով ընդունեմ, որ «Հիսուսի արյունը հոսում էր խաչից, Նրա մարմնից, Նրա գլխից: Ես անհամար մեղքերի մեջ էի, սակայն այդ արյամբ մաքրվեցի»: Աստվածաշունչը մեզ բազմաթիվ օրինակներ է բերում՝ ցույց տալու համար, թե ինչպես է խաչված ու համբարձված Հիսուսը ներում մեր մեղքերը: Դուք, երեկի, գիտեք, որ խաչվելուց հետո, երրորդ օրը, Նա հայտարարում է առել: Նա սպրում է:

Այսպես, օրինակ, Աստվածաշունչն խոսվում է երաշխավորության մասին: Երաշխավորողը պարտավորվում է ինձ պաշտպան կանգնել այն դեպքում, եթե ես չեմ կարողանում պարտքերս մարել: Հարկավոր է հաշվի նստել, կյանքում միշտ էլ այդպես է լինում, եթե մարդ պարտավորվում է մարել իր պարտքը: Հիշե՛ք, որ ամեն անգամ, երբ մեղք ենք գործում, ինչ-որ պարտականություն ենք զգում Աստծու առջև:

Աստվածաշունչն գրված է. «Մեղքի վարձքը մահն է»: Դա նշանակում է, որ Աստված մեզանից պահանջում է մահով վճարել մեր պարտքը: Բայց ահա եկավ Հիսուսը և մեռավ մեր մեղքերի համար, որպեսզի մենք կարողանանք ապրել: Նա մեր երաշխավորն է Աստծու առաջ: Եվ այսպես, կամ ձեր պարտքերը կհիսվեք ոժո՛ղիքով, կամ կմոտեցնաք Հիսուսին ու կստեք. «Ես ուզում եմ արժանի լինել այն ամենին, ինչի համար Դու վճարել ես»: Էռնստ Հոփլիք Վոլտերայդիֆը խոստովանել է. «Ես գիտեմ, անկասկած, որ եկել է իմ Պաշտպանը՝ կյանքի գնով Իր փրկ վերցնելով իմ մեղքերը: Նա իր գոյությանը վճարել է իմ զանցանքների համար այնպես, որ դրանցից ոչ մի հետք չի մնացել»:

Աստվածաշունչը շատ պարզ բացատրում է մեր փրկագրի մասին: Մի մարդ ընկել էր ստրկավաճառի ձեռքը: Եվ, ահա, մի բարի պարոն, տեսնելով նրան, խղճահարյվում է ու

հարցնում. «Ի՞նչ արժե այս մարդը, ես ուզում եմ գնել նրան»: Ընդհանրապես, ե՞րբ է ստրուկը ազատ լինում: Իհարկե, երբ նրա համար մինչև վերջին պիեմիճեզը վճարում են: Հիսուսը Գողգոթայում մեզ համար վճարել է մինչև վերջին պիեմիճեզը: Եթե ճիշտ ընդունեք այս միտքը, դուք իմնա կարող եք սակ. «Տե՛ր իմ Հիսուս, Քո ոտքերի առաջ եմ դնում իմ մեղքերը ու հավատում եմ, որ Դու կոչնչացնես դրանք»: Եվ Հիսուսը բողոքում է տալիս՝ ձեզ լիովին ազատելով մեղքի ստրկությունից: Ֆիլիպ Ֆրիդրիխ Հիլեդը այսպես է երգում. «Մեղքերից ազատվելը Հիսուսի հրաշալի անվան տակ նորացնում է մեր կյանքը...»:

Աստվածաշունչը պարբերաբար նորանոր օրինակներ է բերում: Օրինակ՝ հաշտությունը: Նույնիսկ տգետ հեթանոսը գիտի, որ իրեն հաշտություն է հարկավոր: Դուրս համար էլ շատ կրոնների բազմաթիվ քահանաներ հաշտության համար զանազան գոհաբերություններ են կատարում: Աստված, սակայն, այդ նպատակով միայն մեկ գոտ է ընդունել. «Ահա Աստծու Գառը, Որը Իր փրկ է վերցնում աշխարհի մեղքը»: Հիսուսը հենց Ինքն էլ մեծ Քահանա է, Որը գոտ դառնալով՝ մեզ հաշտեցնում է Հայր Աստծու հետ: Միայն Նա կարող է մեզ Աստծու հետ հաշտեցնել, որիշ ոչ ոք: Ալբերտ Քնապն ասել է. «Միշտ աչքերիս առաջ տեսնում եմ, թե ինչպես է Աստծու Գառը՝ գունատված, մարմինն արյունոտ, մեխերով գանձված՝ կախվել խաչից: Ես ավելի քան համոզված եմ, որ Նրա «կատարվեց» խոսքը իմ մեղքերի համար է ստված»:

Բացի այդ, Աստվածաշունչն օգտագործվում է մեղքերի մաքրման արարողությունը: Մի քրիստոնյա մեկ որիշ քրիստոնյայի գրում է. «Նա մեզ սիրեց, Իր սեփական արյունով լվաց եւ մաքրեց մեր մեղքերը»: Դուք, երեկ, գիտեք «Անառակ որդու» պատմությունը, որտեղ նա ընկավ այն աստիճան, որ ստիպված էր նույնիսկ խոզերի հետ ապրել: Այանքում հաճախ է մարդկանց հետ այսպես պատահում: Այդպիսի մարդիկ միայն ափսոսանքի են արժանի: Բայց ահա, անառակ որդին ինքի է զալիս ու վազում դեպի հոր գիրկը այնպես, ինչպես կար: Ինքն իրեն կարգի չի բերում, կոտորում կամ նոր կոշիկներ չի գնում: Այդ հարցերը նրան չեն հուզում: Այնուամենայնիսկ, հայրը մաքրում է նրան ու կարգաբարձում նոր հագուստ հագցնել որդուն: Շատ մարդիկ կարծում

են, թե քրիստոնյա լինելու համար նախ հարկավոր է բարի լինել: Դա մի արեւտալի մոդորություն է: Մենք կարող ենք Հիտուսի մտա գնալ ճիշտ այսպես՝ կեղտոտ ու փնթի: Ախ, ինչքան արտոտ ու խավար է մեր կյանքը: Եկե՛ք Հիտուսի մտայն տեսքով ու իռզով, որ ունեք այսօր: Նա ձեզ կմաքրի: Նա ձեզ կմեղի: «Հիտուս քրիստոսի՝ Աստծու Որդու այլունը մեզ մաքրում է ամեն մեղքից»: Այդ մասին վկայում է Հովիանենս առաքյալը: Մենք էլ կարող ենք դա հաստատել:

Ես հիմնա, դժբախտաբար, հնարավորություն չունեմ անդրադարձնալու Աստվածաշնչի բոլոր օրհնակներից: Բայց հույս ունեմ, որ ինքնեղ կսկսեք կարգալ Աստվածաշունչը եւ ավելի խորը կըմբռնեք մեղքերի բոլորության հրաշալի լուրը:

Ինչպե՞ս ասրենք կյանքում, երբ մեզ անընդհատ ուղեկցում են զանցանքներն ու բացթողանները: Մենք անգոր ենք մեր սեփական ուժերով հաղթահարել դրանք: Հաղթահարել կարող ենք միայն Հիտուսի մտա գնալով ու Նրանից մեղքերի բոլորություն իմնորելով: Դրանից հետո մեր մեղսում խնդուն կվերանան նեղքին վախն ու հիաքափությունը: Հիտուսին նվիրելը տգիտություն չէ, այլ ընդհակառակը, Աստծու շնորհով խավար գերեզմանից դուք անցնում եք զարմանալին արեւի շողերին: Ես այդ ցանկանում եմ ձեզ ավերող սրտով:

Եվ այսպես, մեզ հարկավոր է մեղքերի բոլորություն: Որտե՞ղ գտնել այն: Միայն Հիտուսի՝ Փրկչի մտա, Որը թեպետ խաչվել, բայց հաղորություն է առել:

3. Ինչպես հասնեմ դրան

Հնարավոր է՝ դուք հիմնա մտածում եք. «Մեղքերի բոլորություն ստանալը, անշուշտ, հրաշալի է, բայց ինչպե՞ս հասնեմ դրան»: Այս մասին չի գրվում թերթերում եւ չի ցուցադրվում ֆիլմերում, ուրեմն, ես ինչպե՞ս կարող եմ հասնել դրան:

Բանն այն է, որ այստեղ ոչ մեկ օգնել չի կարող: Շատ ավելի լավ կլինի, եթե այսօր դուք առանձնանալք ու կանչեք Հիտուսին: Չէ՞ որ Նա մեռելներից հաղորություն է առել ու կենդանի է: Աստվածաշունչը այսպես է ասում նրանց մասին,

ովքեր իսկատասցել են. «Անենքը, ովքեր կանչեն Հիտուսի անունը, կփրկվեն»: Առանց իսկալելու, հենց հիմնա, գործի անցեք եւ կանչեք Նրան:

Գիտե՞ք «կանչել» բառի նշանակությունը: Այն ուղիղ Հիտուսին է հասնում: Սակայն դուք այդ բառը վարդաց չեք գործածել: Դուք հնարավորություն ունեք Հիտուսի մտա անցնելու, եթե նույնիսկ միմչեւ հիմնա Նրա հետ չեք խոսել: Շատ ափսոս: Կանչե՛ք Նրան: Ձեզ հարկավոր չէ երկար ժամանակ բառեր փնտրել, միայն ասե՛ք՝ «Տե՛ր Հիտուս»: Իմացե՛ք, որ Նա արդեն լսում է ձեզ, ու հենց սա էլ արդք է կրչվում: Իսկ հետո՞: Հետո իմչի՞ մասին խոսել: Այն ամենի, ինչ դեռ պահում եք ձեր սրտերում: Օրհնակ, կարող եք բարձրոճայն ասել. «Տե՛ր Հիտուս, ես մեկի հետ վատ հարաբերություններ ունեմ, ու ինքս չեմ կարող այս դրությունից դուրս գալ, օգնի՛ր ինձ, քանի որ գիտեմ՝ մեղք եմ գործում»: Կամ՝ «Տե՛ր Հիտուս, իմ աշխատանքում դժվարություններ կան, հարկավճարները ժանանակին չեմ կարողանում մոծել, ինձ սնանկացում է սպասվում, օգնի՛ր, Տե՛ր իմ Հիտուս»: Կամ՝ «Տե՛ր իմ Հիտուս, ես դավաճանում եմ կնոջս ու այլ կերպ չեմ կարողանում, օգնի՛ր ինձ»:

Հակառակում եք, դուք կարող եք ամեն ինչ վստահել Հիտուսին, նույնիսկ այն, ինչը ոչ ոքի չեք պատմի: Ես ձեզ լսում է: Ամեն ինչ պատմեք Նրան: Ճշմարիտ խոստովանությունը կթեթևացնի ձեր իռզին: Ձեր բոլոր զանցանքները պատմե՛ք Տիրոջը: Հարցրե՛ք Նրան. «Տե՛ր Հիտուս, պատվելի Բուշն ասում է, որ Քո արյունը մաքրում է մեզ, դա ճիշտ է»: Այսօր եւեթ Հիտուսի հետ խոսեք հարորդակցության այն միջոցով, որը վարդաց ի վեր գոյություն ունի: Անընդհատ օգտագործե՛ք դա, որովհետեւ այն ձեզ կկապի Հիտուսի հետ:

Իհարկե, հետո, հնարավոր է, որ ասե՛ք. «Այո՛, ես Նրան ամեն ինչ պատմեցի, բայց ոչ մի պատասխան չստացա»: Հիմնա ասեմ, թե ինչպես է Նա ձեզ պատասխանում: Նա դա անում է Նոր Կտակարանի միջոցով: Վերցրե՛ք Նոր Կտակարանը: Հինը հետո կկարդաք, դեռ մի՛ սկսե՛ք, դա ձեզ համար դժվար կլինի: Նոր Կտակարանն սկսե՛ք կարդալ Հովհաննեսի Ավետարանից: Դրանից հետո կարդացե՛ք Դուկասի Ավետարանը: Կարդացե՛ք այնպես, կարծես ինչ-որ անսպազում ինչ-որ կարեւոր փաստի մասին եք կարդում: Այն ժամանակ կզգաք, որ Հիտուսը հենց ձեզ հետ է խոսում:

Դրանով Լստովածաշունչը տարբերվում է սյուս գրքերից, որովհետև Լստոված խոսում է մեզ հետ: Մի անգամ մեկն ինձ ասաց. «Երբ ես ուզում եմ խոսել Լստծու հետ, անտառ եմ գնում»: Ես նրան պատասխանեցի. «Ինչպիսի մոլորություն անտառում ես միայն բռնումների ծղկոց ու ծառերի խշշոց եմ լսում: Դ-ա, ինչպիսի, իրաշալի է, սակայն հարցիս՝ ներկա՞ծ եմ, արդյոք, իմ մեղքերը, անտառը չի պատասխանում: Լյոյ մասին Լստոված մեզ տեղեկացնում է միայն Լստովածաշունչի միջոցով»:

Օրական մի քառորդ ժամ հատկացրեք Հիսուսին: Կանչե՛ք Նրան ու ասե՛ք. «Տե՛ր իմ, ես այսօր շատ գործ ունեմ, մե՛նայ չեմ կարող հասցնել, օգնի՛ր ինձ»: Դուք ինձ հասկանո՞ւմ եք, պատենք Նրան ամեն ինչ: Հետո բացե՛ք Նոր Կտակարանը ու գտնե՛ մի կես գլուխ կարդացե՛ք ու կհանդիպե՛ք Լստծու այն հոյակին, որը գրված է հատուկ ձեզ համար: Դուք, պետք է որ, մտածե՛ք. «Լյս բանը անձանք ինձ համար է գրված»: Նշե՛ք այդ տեղը, ու ավելի լավ կլինի՝ գրեք նաև օրվա ամսաթիվը:

Երբ երկուստասարդ էի, մի օր, հյուր գնացած ժամանակ, տեսա որ դաշնամուրի վրա Լստովածաշունչ է գրված: Ջգոշ-որեն վերցնելով՝ նկատեցի, որ բերթերին կարծիր ու կանաչ գույններով բազմաթիվ նշումներ կան: Ինձ հետաքրքրեց, թե այդ ընտանիքում, իստիկապես, ո՞ւմ էր պատկանում Լստովածաշունչը: «Դ-ա Է՛մնա մորաքրոջն է՞», - հետեեց պատասխանը: Ինձ շատ դուր եկավ Է՛մնան, ես ես անուանացա նրա հետ: Ես ուզում էի այնպիսի կին ունենալ, ով կհավանար, որ Հիսուսը մեզ հետ խոսում է Լստովածաշունչի միջոցով: Երբ մարդիկ վիճում են Լստովածաշունչի մասին, ես ինձ շատ վատ եմ զգում: Նրանք ասում են, որ դա գրված է մեզ նման մարդկանց կողմից եւ այլն:

Լեռաչին համաշխարհային պատերազմի ընթացքում մի որոշ ժամանակ, ես հեռավորապես էի աշխատում: Լյն ժամանակ դեռ չգիտեինք առանց հարողորակարի հեռախոսների մասին: Մենք փոքր ասպարառներ ունեինք, որոնց վրա միացված էին հարողորակարերը: Մի անգամ, երբ գտնվում էի մի բարձր դիտակետում, հանկարծ նկատեցի, որ ինձ մոտ է գալիս վիրտակոր հետևակային զինվոր, ու գռռացի. «Պատվիր, մեզ նկատել են, հիմա մեզ վրա կրակ կբացեն»: Նա պառկեց գետնին, սողալով հասավ ինձ ու ասաց. «Ես այդ-

ձակարդ ունեմ, շուտով տուն պիտի գնամ: Լսիր, ինչքան հիմ է քո ասկարառը»: «Լյո՛ւ, - ասացի, - հին տեսակ է»: «Երեկ սերմակները խախտված են արդեն»: «Լյո՛ւ, - հաստատեցի ես, - երեկ սերմակները բուլացել են»: «Լիա, մի կտորն էլ կտորված է», - շարունակեց նա: Ես դուրս եկա համբերությունից. «Լսիր, ձայնը կտրի՛ր, ես քեզ լսելու ժամանակը չունեմ, ինձ հարկավոր է կապի մեջ մտնել»:

Ճիշտ այդպես էլ կատարվում է Լստովածաշունչի հետ. հենց որ ես ուզում եմ կապվել Հիսուսին, գալիս են մարդիկ ու սկսում հաստատել, որ Լստովածաշունչը մեզ նմաններն են գրել: Ես նրանց կարող եմ միայն այսպես պատասխանել. «Մո՛ւս մնացե՛ք, ես այնտեղ Հիսուսի ձայնն եմ լսում»: Դուք ինձ հասկանո՞ւմ եք, թույլ մի տվե՛ք, որ ուրիշները ձեզ շեղեն ճիշտ ճանապարհից: Եվ հետո աշխատե՛ք այնպիսի մարդկանց հետ հարողակցվել, ովքեր նույնպես ընթանում են այդ ճիշտ ճանապարհով: Տեսնո՞ւմ եք, երբ ես իմ գրույցներում խոսում եմ այս թեմայով, մարդիկ սկսում են առարկել. «Լյոյ ամենը տատիկներին է վերաբերում, միայն նրանք են եկեղեցի հաճախում»: Դրա համար էլ ես ինձ երջանիկ եմ զգում, որ երեսուն տարի շարունակ ծառայել եմ՝ որպես երկուստասարդության հոգեւոր իովիլ ու ճանաչել եմ բազմաթիվ երկուստասարդների, որոնք կարող են հաստատել, որ, իրոք, գոյություն ունի մեղքերի ներում, որ կարելի է Հիսուսի հետ գրուցել, որ Հիսուսը պատասխանում է մեզ: Աշխատե՛ք շփվել այնպիսի մարդկանց հետ, ովքեր Հիսուսի հետ կապվելու փորձ ունեն: Դուք, ինչպիսի, կարող եք գտնել մարդկանց, ովքեր ջանում են Տե՛ր Հիսուսի հետ դեպի երկինք պահալ: Եվ այսպես, Հիսուսը կանգնում է ձեր առջեւ ու ասում. «Եկե՛ք Ինձ մոտ, բոլոր հոգնածներդ ու ծանրաբեռնվածներդ, որովհետեւ ձեզ անդնորհատ ուրեկցում են ձեր զանցանքներն ու արատներդ: Ես կհանգստացնեմ ձեզ: Ես կարող եմ ձեր մեղքերին բոլորություն տալ»:

ԻՆՉՊԵՏ ՎԱՐՎԵՆՔ, ԵՐԲ ՍԵՐՈՂԻԿ ՆՅԱՐԴԱՅԻՆՆԵՐՈՒՄ ԵՆ ՄԵՉ

Թեմայի վերնագիրը այնքան էլ ճիշտ չէ: Նրանք մեզ ոչ թե նյարդայնացնում, այլ պարզապես գրգռում են: Միշտ ինչ-որ մեկը մեզ գրգռում է, այդպես չէ՞: Ես նույնիսկ համարձակվում եմ հայցնել: Թող ձեռք բարձրացնի նա, ում նյարդերի վրա երբեք ես ոչ մեկը չի ազդել: Այ, տեսնո՞ւմ եք, ոչ ոք ձեռք չի բարձրացնում: Որովհետև դա փաստ է: Ու ոչ մի «եթե», եթե դա ճշմարտություն է: Մի՞թե ես ճիշտ չեմ:

Այո, մարդիկ սաստիկ ազդում են միմյանց նյարդերի վրա, բայց ոչ բոլորը: Օրինակ՝ իմ կիճը ինձ չի նյարդայնացնում, բայց նրա փոխարեն կան մարդիկ, ովքեր նյարդերիս վրա ազդում են ամեն օր: Երեւի դուք էլ եք այս վիճակում: Ճիշտ չէ՞: Իհարկե: Դրա համար էլ միմյանց հետ զժողովում ենք ընտանիքում, աշխատավայրում, նույնիսկ, քրիստոնեական օրակներում: Ամենուրեք այդ մասին կարելի է լսել: Շատերն ասում են. «Ինձ հետ ամեն ինչ լավ կլինի, եթե չլինեի սա կամ նա: Այսպիսով, այդ «դռեւ մեկը» դառնում է մարդու ոչ միայն աչքի, այլ նաեւ կյանքի կեղտը: Այս մասին խոսեղ նույնիսկ անհրաժեշտ է: Ինչպե՞ս ապրենք, երբ ինչ-որ մարդիկ ազդում են մեր նյարդերի վրա:

Բարեկամներ, ես կուզեի մանրամասնորեն վերլուծել այս հարցի պատասխանը: Եթե ինչ-որ մեկը հազում է (իսկ իրականում, գուցե, բոլքերի բոլքերում ունի), հաճախ դեղերն էլ են անօգուտ լինում: Հարկավոր է բժշկական շտապ հետազոտում եւ այլ բուժումներ, հասկանո՞ւմ եք այս հասնեմատությունը: Այն, որ մենք նյարդայնացնում ենք իրար վրա, նշանակում է, որ մեր օրգանիզմը անառողջ է, եւ դա շատ ավելի խոր արմատներ ունի, քան, ասենք, անհաջող հարեւան ունենալու պատճառաբանությունը: Դրա համար էլ ես ուզում եմ հարցին ավելի քցորեն մոտենալ: Ես ձեզ կապստցուցեմ, որ գրգռվածությունը մարդկության անառողջության հատկանիշներից է:

1. Աշխարհը, դուտեղ մենք ապրում ենք

Ինչպես տեսնում եք, իմ աշխարհայացքը ինձնված է Աստվածաշնչի վրա: Ես գտնում եմ, որ սա միակ ճշմարիտ Գիրքն է, իսկ ձեր գրքերի մնացած մասը մի քան տարի անց դեմ պիտի շարտեք:

Աստվածաշունչը մեզ հայտնում է, որ Աստված մարդուն կատարյալ է ստեղծել: Այն ժամանակ ոչ Արամն էր Եվային նյարդայնացնում, ոչ Եվան՝ Աղամին: Գոյություն ունեւ ընդհանուր համեղաշխություն, մանավանդ, որ ոչ թե Աստված էր նյարդայնացնում մարդկանց, այլ մարդը՝ Աստծուն: Այնտեղ ամեն քան համաձայնեցված էր. Աստված մարդկանց հետ էր, մարդիկ՝ միմյանց հետ: Բայց, ահա, Աստվածաշունչը մեզ հայտնում է, որ մարդկության պատճառով այդ շարույսին տեղի է ունենում առաջին արեւտը: Աստվածաշունչը դա անվանում է մեղսագործություն: Պարզվում է, որ մարդ արարածը ենթակա է փորձության: Նա պիտի չուտեր արգելված ծառի պտուղը, քանի որ Աստված թույլ չէր տվել: Մարդուն տրված էր ընտրելու իրավունքը, եւ նա, ուտելով արգելված պտուղը, ընտրեց չարը՝ անհնազանդությունը: Հենց այն պահին, երբ կատարվում էր մարդկության առաջին մեղսագործությունը, խախտվում է համեղաշխությունը, եւ Աստված բաժանվում է մարդուց: Աստված մարդուն դուրս է վերցրում դրախտից եւ մուտքի առաջ քեղովքն (բարձրաստիճան հրեշտակ) կանգնեցնում: Ու մինչեւ օրս էլ մենք այսպես բաժանված ենք Աստծուց եւ նույնիսկ բարկացնում ենք Նրան: Փորձե՛ք մարդկանց հետ խոսել Աստծու մասին, ու նրանք իսկույն նյարդայնացնում են. «Մի՛ խոսեք դրանից»: Շատերը նույնիսկ չեն էլ ուզում լսել Աստծու գոյության մասին: Աստծու եւ մեր միջեւ ահափոր մի վիճակ, եւ այդ վիճակ է, որ մեզ բաժանում է Նրանից: Դա պարզ է դառնում Աղամի ու Եվայի երեխաներից: Այն ժամանակվանից մինչեւ այսօր՝ մարդիկ սկսել ու շարունակում են նյարդայնացնել իրար:

Ահա երկու եղբայրները՝ Կայենն ու Աբելը: Մեր կյանքում հաճախ է այնպես պատահում, որ եղբայրները ավելի շատ են ազդում միմյանց նյարդերի վրա, քան՝ օտարները: Կայենն ու Աբելը տարբեր մարդիկ էին, բայց ունեին ընդհանրություններ: Ինչո՞ւ էին տարբեր: Մի անգամ, երբ հողագործ

Կայենը աշխատում էր դաշտում, նրա մոտ է գալիս Աբելը: Ես պատկերացնում եմ, թե այդ պահին ինչպես է Կայենին ներսում ամեն ինչ շուտ գալիս: Հավանաբար, մա մտածում է. «Երանի շուտ հեռանար այս հեզ շողքերը, տեսել չեմ ուզում»: Աբելը գալիս է նրա մոտ ու սկսում գրուցել: Կայենը քարոլիս է Աբելի գլխին եւ սպանում եղբորը:

Բարեկամներ, մեր դպրը բավական առաջ է գնացել, ու մեզը մեկ մեկու քարոլի չեմք սպանում, սակայն թեքերում շատ եմք կարդում հանցագործների ու մարդասպանների մասին: Իսկ եթե վերոհիշեմք եղբորդ ռեյլիս խոշորագույն կտորածները, կտեսնեմք այն նույն Կայենի դատարարությունը, այսինքն, ատելություն մարդկանց նկատմամբ: Այս արիթոլ կործանվել կամ ոչնչացվել են հարյուր հազարավոր կյանքեր:

Կայենը ուշքի է գալիս միայն այն ժամանակ, երբ Աբելն արդեն մեռած է լինում: Նա մի քիչ վախենում է: Հետո փոս է փորում, դիակը դնում մեջը ու հողով ծածկում: Նա, իր շրտ կողմը նայելով, համոզվում է, որ վկաներ չկան ու ոչ ոք չի տեսել: Այսօր էլ մենք եմք այդպես մտածում, եթե մեր հանցանքը տեսնող չի եղել, ուրեմն, հաշվում եմք, որ հանցանք չի գործվել: Այն, եթե դուք իմանալիք, թե ինչպիսի խավար պատմություններ են ուրեցում մարդկանց:

Կայենը բողբում հեռանում է, քանի որ իրեն այնքան էլ լավ չի գգում: Եվ հանկարծ նա լսում է. «Կայեն»: Փշաքարփում է Կայենը: Նա գլխի է ընկնում, որ Աստված է իրեն կանչում: Աստված ամեն ինչ տեսել էր. «Կայեն, որտե՞ր է քո եղբայր Աբելը»: Կայենը վորդվում է. «Չգիտեմ, մի՞թե ես իմ եղբոր պահակն եմ»: «Կայեն, - ասում է Աստված, - քո եղբոր ձայնը հողից է Ինձ հասնում» (Կարդա՛ Ծն. 4.1-15):

Հիմա դուք, հավանաբար, ընթրնում եք այս պատմության ինչպես, մեղազործության ժամանակներից ամեն ինչ պարզաբանվում է, ու մարդիկ շարունակում են բաժանվել իրարից: Սակայն մենք չենք կարող բաժանվել մեր հարազատներից, մանավանդ՝ Աստծուց: Ահա, այսպիսին է այս աշխարհը, որտեղ մենք ապրում ենք:

2. Համոզվելն անօգուտ է

Այո՛, հիմա բացատրությունները օգուտ չեն տալիս: Օրինակ, ոչ մի գրույց գրության, Աստծու մասին մարդկանց, կարծես, չի օգնում: Աստծու եւ մեր միջև գոյություն ունի մի խոր անդունդ: Պատերազանի ժամանակ, երբ իմ տունը, ինչպես նաև՝ Էստեն քաղաքի կեսը վառվում էր, մի կին՝ ճշարտ մտեցավ ինձ. «Ձեր Աստվածը ինչպե՞ս է այս ամենը թույլ տալիս»: Ես պատասխանեցի. «Իմ Աստվածը կարող է թույլատրել: Միգուցե Աստված Ձեր թշնամի՞ն է»:
Մեղազործության պահին բաժանվում են ամեն ինչ, ինչպես բաժանվում են Աստված եւ մարդը: Մենք բաժանված ենք թե՛ Աստծուց, թե՛ մարդկանցից: Հենց սա է պատճառը, որ մարդիկ բողբում, նյարդայնացնում են միմյանց: Եթե ձեր հարեանունին նյարդայնացնում է ձեզ, մեղք է գործում, ու դրա արդյունքում քոք բանժանվում եք Աստծուց: Ահա թե՛ ինչու ցանկացած բացատրություն այս դեպքում անօգուտ է դառնում:

Վերջերս երև Շվեյցարիայի սահմանագծում ու կարդացի սահմանամերձ ուրեկալի վրա փակցված հայտարարությունը. «Միությունը շատ ավելի լավ է»:
Եվ ես ակամա մտածեցի. «Պարզ է: Միայն թե այդ հայտարարությունը անօգուտ է, եթե մարդիկ նյարդայնացնում են ինձ»:
Կամ մեկ այլ ասքազվիր, որը կարդացի մի քանի օր առաջ. «Միմյանց նկատմամբ սիրալիս եղեք»:
Ամերիկացիները ամեն մի անկյունում այսպիսի ասքազվիր են փակցնում. «Միմյանց ողորմելիս՝ ժպտացեք»:
Իրականում, դա ոչ մի օգուտ չի տալիս, մի՞թե ես ճիշտ չեմ: Չէ՛, համոզվելն անօգուտ է:

Հիշում եմ, երբ դեռ երիտասարդ աստվածաբան էի, հաճախ էի այցելում մի ընտանիքի, որտեղ բոլորը շարունակ վիճում էին: Անբոք հարազատությունը ապրում էր նույն բանում ու ամենապիտք առիթի դեպքում խռովում էին իրարից: Մի երեկո ես նրանց բողբին հավաքեցի ու փորձեցի հաշտեցնել: Այնքան շատ էի համոզվել, որ այդեն լեզվիս վրա կոշտովներ էին առաջացել: Ուշ երեկոյան վերջապես նրանք հաշտվեցին՝ իրար ձեռք սեղմելով: Ես ինձ շատ երջանակի զգացի ու մտածեցի. «Եթե սկիզբը այդքան քարեհաջող էր, ուրեմն, ասպագայում ինձանից գործունյա հոգևոր հովիվ կստացվի»:
Այդպես էլ ինքնագոհ գնացի քննելու: Հա-

շորդ առավուտյան ինձ հանդիպեց հաշտվողներից մեկը, եւ ես ասացի. «Ինչքան լավ տաացիկեց երեկ երեկոյան, չէ՞»: «Լա՛վ,- հեզմանքով առարկեց նա, -մի՛թե Դուք չգիտեք: Քե ինչ է եղել: «Ի՞նչ»,- գունատիված հարցրի ես: Պարզվեց, որ տոմրարձի ճանապարհին նորից վիճաբանել էին, նույնիսկ ավելի վատբար վիճակ էր ստեղծվել: Դուք ծիծաղո՞ւմ եք: Իսկ ես չէի ծիծաղում: Հանկարծ հասկացա, որ մեղսագործությունից հետո գործերը շատ ավելի լրջանում են, որովհետեւ մենք բաժանվում ենք Աստուծոց եւ մեր մտերիներից, այստեղ անենաբարի խոսքերով էլ արդեն օգուտ չեն տա:

Ես հաճախ եմ ստանում նամակներ, որոնց հեղինակները գրում են իրենց բարեկեամտների վեճերի մասին ու խնդրում են այցելել նրանց: Այդ խնդրանքները ես մերժում եմ, որովհետեւ գիտեմ, որ բարի խոսքերն անօգուտ են: Մի քուսն մտածեք այն մարդկանց մասին, ովքեր զայրացնում են ձեզ: Ես կարող եմ երկար ժամանակ համոզվել, բայց ամեն ինչ անօգուտ պիտի լինի, եւ հենց այստեղից է ծագում անբողք քառոց:

Ուզում եմ պատմել մի ընտանիքի մասին, որին հաճախ էի այցելում: Մի անգամ էլ, երբ նրանց մոտ էի, տուն եկավ տասնյոթ տարեկան տղան՝ թափփիված, կապույտ ջիմսը հազին, մազերը՝ քիզ-քիզ սանրած: Նկատեցի, որ հայրն սկսում է բորբոքվել. «Հապա մի սրան նայեք», -ասաց նա: Այդ մարդը կանոնավոր ու պատշաճ ծառայող էր: Պատկերացրեք, թե ինչպես էր հոր ներսում ամեն ինչ տակնուվրաս վնում, երբ որդուն տեսնում էր այդպիսի թափփիված վիճակում: Նույն անհանգիստ վիճակում հայտնվում էր ինձ ծանոթ քրիստոնյա մի կին, երբ տեսնում էր, որ արջիկը շրթներկ է օգտագործում: Նա չէր կարողանում զսպել իրեն ու ասում էր. «Ինչպես է այս արջիկը ազդում իմ նյարդերի վրա»: Մի՞թե ամենուրեք այդպես չէ: Երբ մի բաժանված տղամարդու ասացի, որ ինքը մեռք է գործում, նա առարկեց. «Վերցացրե՛ք, պատվելի՛, ինձ նույնիսկ նյարդայնացնում է այն, որ կինն ապուր ոտերիս չփչիացնում է»: Դուք գտնում եք, որ դա ծիծաղելի՞ է: Իսկ ես գտնում եմ, որ սուկալի է: Դուք ասում եք, որ դա մանրոք է: Մանրո՞ք: Դա չի՞ նշանակում, արդյոք, որ մեղսագործության ժամանակ աշխարհը ընկել է Աստծու ձեռքից, եւ մենք ապրում ենք ընկած աշխարհում՝ որպես անաստիված մարդիկ: Ջրագրգիռ վի-

ճակները հաճախ ցավալի վերջաբան են ունենում: Ես ճանաչում եմ Էստեցի մի քահեկ արջիկա, որը տառապում է ցրված կարծրախոտով՝ սկիերոզով: Հիվանդությունը պարզապես կաթվածահոսք է արել նրան: Նա ապրում է մի փոքրիկ բնակարանում: Այս արջիկա հարեւանը՝ հուսահատված մի տղա, պիտու է մի՛նչեւ ուշ երեկո քարձր ձայնով հեռուստացույց դիտել եւ, որպես կանոն, շատ քարձր ձայնով: Խեղճ աղջիկը աղիպված էր ամեն երեկո քարակ պատի միջով լսել այդ տիպաճ ձայները: Նա խնդրել էր, որ տղան մի քիչ ցածրացնի հեռուստացույցի ձայնը, իսկ սա ավելի էր քարձրացրել: Պատկերացրեք, որ այսպես շարունակվել է երկար տարիներ: Ողբան հրեշտակն, որքան ստոր պարտածներ կարող ենք լինել մեզ: Դուք պատկերացնո՞ւմ եք, թե այդ տղան տարիներ շարունակ ինչպես է ազդել իրվանդ հարեւանի ու վրա: Պատի երկու կողմերում պայքար էր մղվում, ու կյանքը դրանից ավելի տիպաճ ու դժվար էր դառնում:

Երբ դեռ երիտասարդ պատվելի էի, որոշեցի այցելել եկեղեցու անդամության թեկամբու 150 երիտասարդների: Նրանք բազմաբնակարանոց տներում էին ապրում: Առաջին այցելության ժամանակ տեսա, որ վիճաբանում են: Նույն տեսարանին հանդիպեցի նաեւ երկրորդ եւ երրորդ այցելությունների ընթացքում: Հետո խորհրդի ժամին խնդրեցի, որ նրանք, ովքեր բողոքովին չեն վիճում, ոտքի կանգնեն: Միայն երեք թե չորս հոգի ոտքի կանգնեցին, մյուսները վեճի մեջ էին: Ես հարցրի՝ ինչպե՞ս է, որ դուք բողոքովին չեք վիճաբանում, եւ մի հետապըքիդ պատասխան ստացա՝ միայնակ ենք ապրում:

Այ, այսպիսի դրություն է: Մենք պետք է եղջանիկ լինենք, պետք է հանգիստ աշխատենք, այցինչ քայքայում ենք մեր նյարդերը: Երբ դիւրե՛ ծանր բան է ընկնում մեր ոտքին, ցավ ենք զգում, բայց երբ մեկը ազդում է մեր նյարդերի վրա, դա շատ ավելի ծանր ենք տանում:

3. Աստծու միջանորությունը

Եթե ես այլեւս ձեզ ասեմու բան չունենայի ու քավա-րարվելի մի՛նչեւ հիմա ասվածով, այս թեմայով այլեւս չէի խոսի: Բայց մի շատ կարեւոր բան ունեմ ձեզ ասեմու՝ զար-

մանադրաչ սի տեղեկություն. անահանան գթասիրտ լինելով՝ Աստված միջամտում է այս ամբողջ խառնաշփոթին, ջրածգուններին ու զայրույթներին: Այս աշխարհը, որտեղ քառս է տիրում, դրված է Աստծու առաջ, եւ Տեղը մեզ սիջամտելու միջոցներ է փնտրում: Տիրոջ միջամտությունը հրաշալի է: Դա Աստվածաշնչի ամենաաբանիչ տեղեկությունն է: Աստված բանդում է այն պատը, որը մեզ բանանում է Իրեմից, ու աշխարհ է գալիս Իր Որդու՝ Հիսուսի մեջ: Այն, որ ժամանակակից կյանքը ակելի ու ակելի է հեռանում Հիսուսի Ավետարանից, վկայում է մեր ժամանակի անհետաճեղձության մասին, քանի որ Հիսուսն է մեր փրկության միակ աղբյուրը: Կա՞ ապելի մեծ բան, քան այն, ինչ կատարել է Աստված՝ քանդելով մեր միջուկայինություն ունեցող պատը: Նա Իր Որդուն ուղարկեց այս մեղքի աշխարհը, որը կտրված է Աստծուց, բողբոջված է ու զայրույթով լի:

Աստծու Որդու՝ Հիսուս Քրիստոսի աշխարհ գալը արմատային փոխում է մեր դրությունը.

ա) Հիսուսը մեզ հաշտեցնում է Աստծու հետ:

Իսկ հիմն, ես ուզում եմ ձեզ ցույց տալ, որ Հիսուսի մեջ ամեն ինչ միանում է: Հիսուսը բաժանված չէ Հայր Աստծուց, քանի որ Նա Աստծու Որդին է:

Վերջերս ինձ առաջին. «Հիսուսը մեզ նման մարդ է եղել, այն տարբերությամբ, որ հիմնել է կրոնը»: Ես պատասխանեցի. «Դուք, հավանաբար, ի նկատի ունեք մի այլ մարդու, իսկ ես խոսում եմ Նրա մասին, Ով երկնքից իջել էր, մինչդեռ մեզք ընդամենը այս երկրի բնակիչներն ենք»: Այո՛, ես խոսում եմ կենդանի Աստծու Որդու մասին, Որի անունն է Հրաշալի եւ Որի միջոցով Աստված թափանցել է մեր՝ անիծված ու կործանված աշխարհը: Ի տարբերություն մեզ՝ Նրան մարդկանցից ոչ ոք չի զայրացնում: Նրան չի զայրացնում նույնիսկ դավաճան Հուրան: Եթե որեւէ մեկը ինձ դավաճանում է, ես նյարդայնանում եմ, իսկ Հիսուսը մինչեւ վերջ տիրում էր Հորթային: Հիսուսի երկրային կյանքի պատմությունը պատմությունն է մի Մարդու, Որին ոչ մեկը չի կսրողացել զայրացնել: Ահա, մի հրաշալի օրինակ. խաչվելուց մի օր առաջ՝ երեկոյան, Նա աշակերտներին հետ ընթրիքի էր նստած: Արեւելյան երկրներում, այն օրերին՝ հասակապես, մարդիկ նստում էին ոչ թե արձաների, այլ բարձրի

վրա: Ես դժկարությամբ եմ պատկերացնում, թե այդ դիրքում ինչպես կարելի է ուտել: Ուտելուց հետո, ընդունված կարգի համաձայն, նրանք լվանում էին ոտքերը: Այդ օրը աշակերտները Հիսուսի հետ երկար ճամապարհ էին անցել եւ հիմա, հոգնած, հանել էին իրենց ոտնամանները ու նստուղեք բարձրեցին: Ես պատկերացնում եմ, թե ինչպես է Պետրոսը հավակցել Հովհաննեսին ջուր բերել ու լվանալ բոլորի ոտքերը: Հովհաննեսը աշակերտներից ամենաերիտասարդն էր: Պետրոսին զայրացնում էր այն, որ նա ամեն անգամ ձգտում էր խույս տալ իր պարտականությունից: Իսկ Հովհաննեսը, ուները թոթովելով, մտածում էր. «Ինչքան է Պետրոսը ազդու իմ նյարդերի վրա, ամբողջատ ինձ է մատնացույց անում: Չէ՞ որ Հակոբոսն էլ կարող էր ոտքերը վվանալու համար ջուր բերել»: Իսկ Հակոբոսը մտածում է, որ դա իր գործը չէ, ու քանի որ Հովհաննեսը Հիսուսի ամենապրեկի աշակերտն է, թող ինքն էլ բերի: Այդ պահին բոլորը լարված վիճակում էին, որովհետեւ բոլորն էլ խույս էին տալիս իրենց պարտականություններից: Ուռքի է կանգնում Հիսուսը: Աշակերտները գարնանում են. մի՞թե Նա գնում է ջուր բերելու: Հիսուսը վերցնում է սրբիչը, ջուրը լցնում լվացարանի մեջ ու լվանում բոլորի ոտքերը՝ Հուրայի, Հովհաննեսի, Պետրոսի, Հակոբոսի, Մատթեոսի... Քիչ էր մնում ասելի, նստե՛ իմ...:

Ահա, այդպիսին է Հիսուսը: Նրա մեջ է Աստված: Նա սիրեց մեզ՝ բոլորիս: Իմ մեջ ես Հիսուսին պատկերացնում եմ իմացի վրա գանձված, քանի որ այդպես Նա ինձ համար բանկ է ամեն ինչից: Այնքան շատ կուզեմայի այդ օրը, ձեզ հետ միասին, ներկա լինել այնտեղ՝ Երուսաղեմի դարպասներից դուրս, բլրի վրա, որտեղ արձնում է զազազած անքուխը, որտեղ նիզակները ձեռքներին՝ շարված են հռոմեական զինվորները, իսկ նրանց զինավերետում երեք իսաչոր են կանգնեցված: Ես, ինտրիկ, ի նկատի ունեմ մեջտեղի իսաչոր: Նրան, ով փշեպսակ ունի գլխին, ես ուզում եմ ձեզ ներկայացնել:

Բարեկամներ, Նա այնտեղ ձեզ համար է մեռնում, որպեսզի դուք դուրս գաք այս անելանելի թվացող իրավիճակից: Նա ուզում է ձեզ վերջապես հաշտեցնել Հայր Աստծու հետ: Եթե դուք ուզում եք, որ ձեր եւ Աստծու միջուկ վերականգնվի համերաշխությունը, գնացե՛ք Հիսուսի իսաչի մոտ:

Այն Հիսուսը, որ մեռել ու հարություն է առել ձեզ համար, Աստծո ուղարկված միջնորդն է: Թորեք ձեր բոլոր կապված-ները ու մտտեցեք ձեզ համար՝ Իր ձեռքերը խաչին փռած Հիսուսին: Նրա ոտքերի առաջ դրեք ձեր անցյալի մեղքերն ու սովորությունները: Դուք դա կարող եք անել, եթե լրջորեն վերաբերվեք Հիսուսի խաչին: Ձեռքներդ պարզեք Նրան ու ասեք. «Ես ուզում եմ Քեզ պատկանել»: Դա կլինի Աստծո հետ հաշտություն գտնելու համար արված ձեր առաջին քայլը:

Պողոս Առաքյալը հռոմեացիներին հասցեագրված թղթում գրում է. «Եվ այսպես, հավատով արդարանալով՝ մեկը Աստծու հետ խաղաղություն գտանք մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով»: Հիսուսին Աստված էր աշխարհ ուղարկել: Ընդունեք Նրան: Յավպի է, որ շատ-շատերը այդ մասին լսել են, սակայն Աստծու հետ հաշտության չեն հասել: Դա սարսափելի է: Ես կոզեմասի ներդրել իմ բոլոր ումեղք ձեր սրտերի, ձեր հոգիների համար, որպեսզի ընդունեք Աստծով աշխարհ Ուղարկվածին:

Այսօր ես գրույց ունեցա մի քանի լրագրողների հետ: Խոքը բացվեց այն մասին, թե ինչը կարելի է ներկա ժամանակում լրջորեն ընդունել: Ես նրանց պատահաբանեցի, որ երկու պատերազմներին մասնակցելուց եւ նազիզը տեսնելուց հետո չգիտեմ, թե ինչը կարելի է լրջորեն ընդունել: Աղոյթք այն ճառերը, որ մեզ առաջարկում են համաշխարհային քաղաքական գործիչները: Ոչ: Նրանք էլ դա լրջորեն չեն ընդունում, ես՝ նույնպես: Ես չգիտեմ, թե երկնքի եւ երկրի միջև ինչին կարելի է լրջությամբ վերաբերվել՝ բացի Աստծով ուղարկված Հիսուսից: Միայն Նրան կարող եմ լրջորեն ընդունել: Եվ եթե այստեղ կան երիտասարդներ ու ծերեր, որոնք կասեն, թե ոչ մի քանի լրջությամբ չեն վերաբերվում, ապա Ավետարանը հենց ձեզ համար է ասում, որ Աստված յուրահատուկ ձեռով է վերաբերվում ձեզ՝ Հիսուսի մեջ: Հիմա դուք նույնպես լրջորեն ընդունեք Աստծու առաջարկված խաղաղությունը Հիսուսի մեջ: Տեսնո՞ւմ եք, թե ինչպես եմ անում, եկեղեցուն ինչ-որ հարկեր եք տալիս, սակայն Աստծու հետ խաղաղություն չունեք: Ես ասում եմ, որ Հիսուսը ձեզ համար է մեռել՝ Իր վրա վերցնելով ձեր մեղքերը, որ-

պեսզի դուք հիմա դիմեք Իրեն ու կարողանաք ասել. «Տե՛ր իմ, Քեզ մոտ է գալիս մի մեռած մեղավոր: Հիմա արդեն ես Քեզ հավատում եմ: Ես Քեզ ընդունում եմ»: Դա ձեզ նորից կյանք կտա ու կհաշտեցնի Աստծու հետ:

բ) Հիսուսը խաղաղեցնում է թո ու շրջապատիդ մարդկանց հարաբերությունները:

Այնտեղ, որտեղ Հիսուսը հանդես է գալիս որպես միջնորդ, հաշտություն է կնքվում ոչ միայն Աստծու, այլև մարդկանց միջև, ու, որ ավելի ուրախալի է, վերջ է տրվում բոլոր գայլաբաններին:

Իսկ իրնա, ուշադրություն. ձեր շարքերում հրաշալի բրիտանկյաններ կան, բայց եթե դուք շարունակում եք գայլաբանա, ուրեմն, վաղ է ամեն ինչ կարգին համարել: Հիմա շատերը կասեք. «Ախ, եթե Դուք ճանաչեիք իմ հարեանուհուն, այդպես չէիք ասի»: Իսկ ես ձեզ ասում եմ. «Մի՞նչն էր դուք նրան չկարողանաք սիրել, ձեզ մոտ կարք ու կանոն չի լինի»: Եթե Հիսուսը թափանցում է մեր կյանք, գայլաբան, ում նկատմամբ էլ լինի, խաղաղ վերանում է: Ինչպես տեսնում եմք, ով Հիսուսին ընդունել է, նա խաղաղություն է գտել ոչ միայն Աստծու, այլև նրա հետ, ով առաջներում գայլաբանում էր իրեն: Եթե կան մարդիկ, ովքեր գայլաբանում են ձեզ, ուրեմն, դուք Հիսուսի կարիքն ունեք: Ուրիշ ոչ մեկ չի կարող ձեզ օգնել: Ձեր նյարդերը այդպիսի կյանքին չեն դիմանա: Դուք կրառնաք Հիսուսի սեփականությունը, եւ Նա ձեզ կհաշտեցնի Աստծու հետ, ու այն ժամանակ մարդկանց կյանքում ամեն ինչ բարեհաջող կընթանա:

Ես մի լավ ընկեր ունեմ: Նա մի շքեղ բնակարան է վարձել, որի տեղը, սակայն, ժլատ ու ստոր մեկն է: Եվ ահա, վերջերս այդ տան տեղը մի նամակ էր գրել ընկերոջս՝ ինչ-ինչ բաներ իր հաշվին վերանորոգելու մասին: Ընկերս պատմում էր. «Նյարդերս իրար էին խառնվել: Նստեցի սեղանի մոտ, որպեսզի պատասխանեմ նամակին, ու հանկարծ իմ առջև երևաց Հիսուսի կերպարը, Որը մեռել է թե՛ իմ, թե՛ տան տիրոջս համար: Ես չկարողացա ստանդորտ պատասխանել նամակին, այլ գնացի նրա մոտ ու ասացի. «Լսե՛ք, մի՞ թե մենք պետք է շարունակենք գայլաբանել միմյանց: Ծե՛ որ մենք կարգապահ մարդիկ ենք: Եկեք ավելի ամփոփ լինենք, եւ քանի որ ես, իրականում, հարցում եմ

Չեզ, պետք չէ ինձ հետ այդպես վարվել»։ Տանտերը խոհն պարտոված է գզում ու այլևս չի փիճաբանում։ Հիմա նրանք մտա բարեկամներ են։ Երկուսն էլ փոխել են իրենց բնավորությունը ու դարձել Հիսուսի հետևորդներից։

Թույլ տվեք ես մի պատմություն պատմեմ. ես ճանաչում եմ Դավիթը անուղի փի մարդու, որը ֆրանսիացի ակետայրուհի է։ Համապեմտումացման ճանքարում նա վեմսեց ճեղքը ու հիմա մորմորով է հիշում այդ պատմությունը։ Ծաշի ժամին նրան կանչում է ճանքարի պետը։ Նա պատմում է, որ իրեն տամում են մի սեմյակ, որտեղ սեղանի վրա մի սպասք կար դրված։ «Ես գայլի պես քարցած էի։ Եկավ ճանքարի պետը, նստեց սեղանի մտ, ու նրա համար բերեցին տարբեր տեսակի համեղ կերակուրներ։ Իսկ ես, թորքս կուլ տարուկ, պիտի կանգնած նայեի, թե ինչպես է նա ուտում։ Ես տղից մեռնում էի, իսկ նրա դեմքի արտահայտությունը, բերանի չփչիտցից երևում էր, թե ինչ համեղ բաներ էր ուտում։ Վերջում տորճ մսատոցեցին, իսկ նա դարձավ ինձ ու սասց. «Քո կիմը Փարիզից թիվածք է ուղարկել քեզ համար»։ Ես գիտեի, որ ընտանիքս բարիքը վիճակում չի սպարում, ու մտածեցի՝ ինչպե՞ս է կինս կարողացել տնտեսել թիվածքի համար։ Եվ ահա, ճանքարի պետը նստած լսվում է այդ թիվածքը։ Ես նրան սասցի. «Գոհե մի կտորը ինձ տվեք, ես չեմ ուտի, այլ կպահեմ՝ որպես հիշատակ»։ Նա, քնծծծաղ տարով, կերակվ մինչև վերջին պատառը։ Դսայնվարի մի պահ էր, երբ մարդու գայրույթը հասնում է ամենաբարձր գագաթնակետին՝ ատերություն։ Դավիթըցուն շարունակում է. «Այդ պահին ինձ համար պարզ դարձավ, թե ինչ է նշանակում. «... Աստված սիրով է լցրել մեր սրտերը»։ Ես կարող էի սիրել այդ մարդուն ու մտածեցի. «Իտեղճ մարդ, մեկը չկա, որ քեզ սիրի, բոլորը քեզ ատում են։ Ինչքան լավ է, որ ես Աստծու երեխան եմ»։ Դուք հասկանո՞ւմ եք, Դավիթըցուն դեռ խոհում էր նրան։ Ծանքարի պետը իր սաստիկ դսմանությամբ չէր կարողանում գայրացնել նրան։ Դավիթըցուն պահվածքը հասկանալով՝ պետը տեղից վեր է ցատկում ու դուրս նետվում սեմյակից։ Պատերազանից հետո Դավիթըցուն այցելում է նրան. «Վրե՛ժ եք ուզում լուծել»։ Դավիթըցուն հանգիստ պատասխանում է. «Այո՛, վրե՛ժ եմ ուզում լուծել, ուզում եմ Չեզ մտա մի բաժնակ տորճ ընծել։ Ես հետա մի

տորք եմ բերել, որպեսզի կիսվեն Չեզ հետ, նստեմք, ուտեմք միասին»։ Այստեղ այս մարդը համկարճ գլխի է ընկնում, որ Հիսուսի իշխանության տակ գտնվող մարդը երբեք ատել չի կարող, նա ազատված է բռնկվելուց, գայրանալու ակտից, բանի որ սիրող Աստծու սիրով է լցված։

Ես մեծ քաղաքի հոգեաոր հովիվ եմ ու շատ հաճախ եմ լսել այսպիսի խոբեր. «Ես անչափ սիսայնակ եմ, ու ոչ ոք ինձ չի սիրում»։ Հիմա նման բաներ այլևս չեմ կարողանում լսել ու պարզապես ուզում եմ ասել. «Իսկ ո՞ր ես դու, ով մարդ, որ մի օր էլ կարողանաս ասել. «Աստված ինձ հայտնեց իր սեղը»։ Երբ մարդիկ անընդհատ գանգատվում են, թե աշխարհում սեր գոյություն չունի, ես դա տգիտություն եմ համարում, մանավանդ, երբ այդ աստիները սառցաբեկորների պես սառն են լինում (կենդեք ինձ կուպիտ արտահայտությանս համար, քանի որ ծննդով ես Ռուրի մարզից եմ, ու այնտեղ մարդիկ հաճախ են կուպիտ արտահայտվում)։ Երբ ես այդ ամենը համկացա, որոշեցի բոլորի նկատմամբ սեր ցուցաբերել։ Մակայն հասկացա նաե, որ մեք ի վիճակի չենք կստարյալ սեր ցուցաբերել, որովհետև աննկարագրելի եսսսեղներ եք։ Այսինքն՝ գոյություն ունեն այնպիսի մարդիկ, որոնց կարելի է սիրել, որովհետև համակարում եք նրանց։ Իսկ ովքեր ազգում են մեր նկարդերի վրա...»։

Ես հիշում եմ իմ գոույցը մի շարքային կոմունիստի հետ, որը պարծեմարով ասում էր. «Ես մասնակցել եմ նույնիսկ Շանհայի Կուլի միտինգին...»։ Ես հարցրեցի. «Դս, իհարկե, հրաշալի է, իսկ հարեմանի հետ ինչպե՞ս եմ ձեր հարաբերությունները»։ «Եթե ես նրան տեսնեմ, պիտի...»,- դուրս բռավ նրա բերանից։ Հիմա դուք ինձ համկանո՞ւմ եք։ Մեզ հետ չառնչվող մարդուն սիրելը այնքան էլ դժվար չէ, իսկ ում հետ հաճախ եմք ընդհարվում, նրան սիրելը հեշտ չէ։

Եվ այսպես, ես գտնում եմ, որ մենք արմատապես կստոր եմք փոխվել միայն այն ժամանակ, երբ կարողանանք սիրել մեր կրկառար հարեմանին, ինչքան էլ նա ծանր ու անտանելի բնավորություն ունենա։ Այդ կարողությունը Աստծուց է սորվում։

Բարեկամներ, ես գիտեմ, որ դա այդքան էլ իեշտ չէ, սակայն եթե մեր մեզ բնակվում է Հիսուսը ու մեզ խաղարություն է տալիս Աստծու հետ, ապա իմացեք, որ Նա այդ նույն խաղարությունը տալիս է նաե մեզ շրջապատող

մարդկանց: Մի կողմից դա նույնիսկ ցավալի է, քանզի դրանով Հիտուալը ցույց է տալիս, որ մենք ուրիշներին ավելի շատ ենք զայրացնում, քան նրանք մեզ, եւ որ ուրիշներին տանել չենք կարողանում: Այն օրվանից, ինչ եւ ճանաչում եմ Հիտուսին, Նա ցույց է տալիս իմ զանգացմբները մարդկանց նկատմամբ, եւ այդ ժամանակ պարզվում է, որ Փրիկիչը, մեռնելով խաչի վրա, բողոքել է տալիս մեր մեղքերին, դուք դա հասկանո՞ւ՞մ եք: Ուրեմն, աշխարհի ամենամեծ հեղափոխությունը կատարում է Հիտուալը, եւ Նրա՛ն է հարկափոր ընթրանել: Դրա համար էլ եւ խնդրում եմ, որ դուք ոչ միայն լսեք, այլ ամբողջ սրտով ընթրանեք Հիտուսին: Եւ շատ կցանկանայի լսել ձեզանից. «Եւ գտա Հիտուսին, Հիտուսն էլ ինձ գտավ»:

ԼՍԵՆ ԻՆՉ ՊԻՏԻ ՓՈԽՎԻ, ԲԱՅՅ ԻՆՉՊԵՄ

Իմ պատանեկության տարիներին շատերն էին հաճույքով կարդում Մաքս Էլքի վեպերը, որոնք այսօր արդեն մոռացվել են: Մասնագիտությամբ նա ինժեճնը էր եւ իր թեմաները վերցնում էր տեխնիկայի դարի աղբյուրներից: Վեպերից մեկը կոչվում էր. «Ողբերգության հակում»: Այնտեղ ներկայացվում է մի երիտասարդ ինժեճեր, որը անտիդո հանգամանքներում մի մեծ պատասխանատու հանճանաբարություն է ստանում: Նա պիտի կամուրջ կառուցեր այնպիսի մի գետի վրայով, որն ավելի շատ ծովախորշի էր նմանվում: Դա շատ բարդ առաջադրանք է, որովհետեւ այդպիսի կամուրջների վրա ներգործում են ծովային մակընթացություններն ու տեղատվությունները: Դարասկզբին չկային այն միջոցները, որոնք գոյություն ունեն այսօր: Այնուամենայնիվ, երիտասարդը մի վիթխարի կամուրջ է կառուցում: Երբ արդեն կամուրջը պատրաստ էր, երաժշտութայնք, դրոշներով եւ լրագրողների մասնակցությամբ կազմակերպվում է շահագործման հանճներու արարությունը: Բոլոր թերթերը գրեցին այդ երիտասարդի մասին: Հիմա նա արդեն հասարակության մեջ մեծ մարդ է համարվում: Լոնդոնում բացում է մի մեծ ճարտարապետական գրասենյակ եւ ամուսնանում մի հայրուստ կնոջ հետ: Մի խոսքով, նա ուներ այն ամենը, ինչ կարող էր երազել, մինչդեռ ուրեքում կար մի տարօրինակ, մռայլ գաղտնիք, որի մասին գիտեր միայն նրա կինը, ամեն տարի, աշնանամուտին, նա գնում էր իր կառուցած կամուրջի մոտ: Գիշերները, երբ ուժեղ քամի ու անճրեւ էր տեղում, անճրեւանոցով փաթաթված, կանգնում էր կամուրջին ու ակից դուրս: Կարծես թե գզում էր փոթորկի ուժը, որը կարող էր փլել կամուրջի հենակները: Նա նորից ու նորից է հաշվարկներ անում, արդյո՞ք ճիշտ է հաշվել քամու ուժը, որն ազդում է հենակների վրա: Երբ փոթորիկներն ավարտվում էին, նա նորից Անգլիա էր վերադարձնում: Միայն այդ ժամանակ էր նա իրեն պատկապիր ու հարգարժան քաղաքացի համարում, չնայած ոչ ոք չէր նկատում նրա ներքին վախը: «Արդյո՞ք ճիշտ է կառուցվել կամուրջը, կոյնանա՞ հաջորդ փոթորկին»: Այդ տանջալի հարցերը

դարձել էին նրա կյանքի մշայլ գաղտնիքները: Մաքս Էյթիդ հրաշալի է նկարագրում ինժեներին, որը հերթական փոքրիկ ժամանակ կանգնել ու ահով նայում էր իր կանիջին: Նա տեսնում է, որ կանիջի վրայով գնացք է գալիս: Դեռ երեսուն էին վերջին վագոնների լույսերը, որոնք մոեզման՝ փոքրիկ պատճառով անսպասելիորեն մաքում են: Նա իսկույն մտածում է, թե կամորջը մեջտեղից փլկել է, ու գնացքը վթարի է ենթարկվել: Երբ դեռ երիտասարդ էի, կարդացի այս պատմվածքը, եւ իմ զվևում մի միտք ծագեց: «Մի՞թե սա մեր մասին չ'է»: Մենք՝ բոլորս, ստեղծում ենք մեր կյանքի կամորջները, իսկ եթե երբեմն անբուն գիշերներ ենք ունենում կամ ինչ-որ բան մեզ հանգիստ չի տալիս, մեզանից անկախ՝ սկսում ենք վախենալ: «Արդո՞ք ճիշտ են կառուցել իմ կյանքի կամորջը, կղինանա՞՞ այն ապագայում ապավելիք փոքրիկներին»:

Այսբանից հետո համոզվում ենք, որ մեր կյանքում ամեն ինչ չէ, որ կարգին է, ու կամորջը, որ կառուցել ենք, այնքան էլ ղինացվում չ'է:

1. Անեն ինչ չէ, որ կարգին է

Լինելով մեծ քաղաքի հոգեւոր հովիվ՝ ես այս թեման շատ են շոշափել եւ հաճախ են հարցրել. «Ասացե՛ք, Ձեր կյանքում ամեն բան կարգի՞ն է»: Ինձ դեռ չի հանդիպել մեկը, որ խոստովանի, թե իր կյանքում ամեն ինչ կարգին է: Ոչ: Շատ բան այլ կերպ պիտի լիներ: Ես, իհարկե, չեմ կարող ասել, թե մեր կյանքի կամորջի որ մասն է խարխուլել, քայց ինքնեղ էլ գիտեք, որ շատ բաներ այլ կերպ պիտի լինեին: Այսպիսի իրավիճակներում շտապում ենք որոշումներ ընդունել. «Ես պետք է փոխվեմ դեպի լավը»: Դուք իսկապես հավատաո՞ւմ եք, որ մարդը կարող է փոխվել: Ո՛չ, Էոբայանք մարդ երբեք չի փոխվում: Աստվածաշունչը այդ հարցին այսպես է պատասխանում. «Կարո՞ղ է եթովպիացին փոխել իր մաշկը, իսկ հովևազը՝ հետքը: Այդպես էլ դուք, մի՞թե կարող եք բարիք գործել, երբ միշտ չարիք եք գործել»: Աշխարհը լի է բարոյական լուրնգներով ու ճառերով, սա-կայն ոչ որ ինքն իրեն չի կարողանում փոխել: Ես հաճախ եմ հանդիպում մարդկանց, որոնց կյանքի կամորջները

շատ հեռու են կարգին լինելուց: Երբեմն ինձ հարցնում են. «Ի՞նչ կարելի է անել, չէ՞ որ մենք չենք կարող մեզ փոխել»: Այո՛, դա այդպես է: Անառակ մարդը չի կարող մաքրել իր սիրտը: Խարբեբաները չեն կարող արդար լինել: Եսասեր մարդը սիրո համար երբեք իրեն չի գոհաբերի, թեպետ կարող է ճեռացնել, թե ցանկացած պահի պատրաստ է գոհաբերության: Այլ, միայն իմանալի, թե ճեր կյանքի կամորջի որ մասն է խաղիտը: Բայց, դժբախտաբար, չգիտեմ, իսկ Աստված կարող է ճեզ մատնացույց անել, եւ դա մի գարնանակի ճշմարտություն է: Ես իմ սեփական կարծիքները չեմ հարողում, այլ հայտնում եմ ճեզ Աստծու Խոսքը, Որը ասում է, որ Աստված աշխարհ ողորկեց Ավետաբերին, Ով կարող է փոխել ճեր կյանքը: Եվ դա Բոլ Որդին է՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսը:

2. Անեն ինչ կարող է փոխվել

Բարեկամներ, մի՞թե եկեղեցին մեղավոր է, երբ մարդիկ քրիստոնեությունը ճանճրալի են համարում: Ես գտնում եմ, ամենակարեւորը լուրն է այն մասին, որ մեզ փրկելու համար Աստված Բոլ Որդուն մեր աշխարհ է ողորկել: Հիսուսը գարնանակի խոսքեր է ասում. «Անեն բան ճոր եղալ»: Նա եւ միայն Նա կարող է փոխել մարդկանց:

Ես հանդիպել եմ հարբեցողների, որոնք կարողացել են ընդմիշտ թողնել խնեը: Ինքնատեր պատավները հանկարծ փոխվել ու սկսել են նկատել նաեւ ուրիշներին: Կեղտով պատված՝ բազմաթիվ տղամարդիկ Հիսուսով մաքրվել են: Հիսուսը գալիս է ու ամեն ինչ նորում, ճեռափոխում է: Սա հեքիաթ չէ, ես կարող եմ շատ օրինակներ բերել: Քաջ գիտակցելով, որ մեր կյանքի կամորջը կարգին չէ, մենք փրկվելու կարիք ենք զգում: Իսկ փրկվելու համար մեզ անհրաճեալ է ոչ միայն քրիստոնեությունը, այլ Ինքը՝ Տեր Հիսուս Քրիստոսը: Շատ կարեւոր է, որ դուք այստեղ ինձ ճիշտ հասկանաք. մեզ ոչ թե կրոնն է հարկավար կամ հոգե-որականությունը, այլ՝ կենդանի Փրկիչը: Նա այստեղ է, որք այստեղ եմք կարող եք Նրան կանչել ու պատմել ճեր աղետալի վիճակի մասին: Հենց սա է այն ամենահարաշալի լուրը, որ հայտնում եմ ձեզ:

Թույլ տվեք սավաճը բացատրել օրինակով: Վերջերս մի շաբաթով մեկնել էի Մյունխեն: Այստեղի հրաշալի փայրերից մեկը «Անգլիական» կոչվող այգին է: Իմ հյուրամեջը հետո չէր գրասայցուց, եւ ես ամեն առաւիտա գրասնում էի այնտեղ: Մուտքի մտտ մի փայտե, փոքր կամիջակ կար, որի ձախ կողմից գեղի ջուրը բալիվում էր անբարտակի մեջ: Մի անգամ ես նկատեցի, որ այնտեղ, որտեղ բալիվում է ջուրը, մի մեծ փայտի կտոր է պտտոփում: Այդ օրը ժամանակ շատ ումեի եւ սկսեցի հետեւել փայտի կտորին: Հաճախ այնպես էր թվում, թե ուր որ է հիմա այն դուրս կգա ջրապտույտից ու կշարժվի ջրի հոսանքով, սակայն փայտակտորը դարձյալ նույն տեղում էր: Օրերով ես գալիս կանգնում էի նույն տեղում ու նայում այդ բնական խաղին:

Այսպիսին է նաեւ մարդկանց մեծ մասի կյանքը, ամեն ինչը նույն շրջանում է պտտոփում՝ նույն մեղքերը, նույն կարիքները, սրտի խոքորում նույն հուսահատությունը եւ նույն ձանձրակի օրերը: Բայց ոչ հեռվում մի հոսանք կա, որ գալիս է Աստծու Որդուց՝ Հիսուսից: Այդ Հիսուսը մեզ համար է մեռել խաչի վրա: Ի՞նչ եք կարծում, եթէ Աստված թույլ է տալիս, որ Իր Որդին տանջալից ցավերով մեռնի խաչի վրա, մի՞թե դա յուրահատուկ նշան չէ, թե՞ այդ մասին դուք մի՞նչեւ հիմա չեք էլ մտածել: Մտափ բարձրացրեք ձեր հասցըրդ դեպի Նա ու իրավիճակը ճիշտ հասկանալու համար կենտրոնացրեք ձեր բոլոր ուժերը: Հիսուսից է գալիս ազատության հուպը, իսկ մենք այն փայտի կտորի պես պտտոփում ենք նույն շրջանում: Մենք փայտի կտորներ չենք, եւ հին շրջանի այդ հավերժական պտույտից դուրս գալու համար մեզ հարկավոր է միայն մի քայլ անել: Դեպի փրկության հոսանքը արժող քայլը, որն առաջանում է Աստծու Որդուց, մենք ինքներս պիտի սկսենք: Իսկ հետո մենք կհամոզվենք, որ Աստված Ինքն է մեզ դուրս բերել: Ես հիմա ձեզ ասում եմ. «Այդ քայլը դուք ինքներդ պիտի անեք»: Կան մարդիկ, ովքեր հաստատ համոզված են, որ Աստված ուզում է իրենց դուրս բերել հավերժական ջրատույտից, որպեսզի առաջին քայլը անենք դեպի փրկություն, իսկ փրկությունը, ինչպես գիտեք, արդիւմ է Հիսուսով:

3. Այսպես թե՛ այնպես

Ես կցանկանայի այս բեռնան պարզաբանել Աստվածաշնչի մի քանի պատմությունների միջոցով: Պողոս առաքյալին, որպես բռնակոր, բերել էին Կեսարիա, որտեղ գտնվում էին հռոմեացի դեկավիւրները: Մի անգամ հռոմեացի կուսակալ Փեստոսին այցի է գալիս հրեական արքա Ագրիպպայալը իր կնոջը՝ Բեռենիկեի հետ: Նրանք ցանկացել էին լսել բռնակոր Պողոսին: Եվ, ահա, երբ Փեստոսը, Ագրիպպայան ու կինը՝ փառավոր հանդերձով, քաղաքի պատկաժոր մարդկանց եւ հազարապետների հետ ատյան են մտնում ու զբարեցնում իրենց տեղերը, Փեստոսը իրանմայրում է բերել Պողոսին: Մի քանի րոպեից պատկերը փոխվում է, այսինքն, արդեն ոչ թե Պողոսն է մեղարկում, այլ՝ նրան շրջապատող հասարակությունը: Պողոսը նրանք քարոզում է Ավետարանի մասին եւ լսողներին ներկայացնում է Հիսուսին: Այս անգամ նա խոսում է ոչ թե ներկաների մեղքերի մասին, այլ նրանց հոգեւոր հայացքը դարձնում է դեպի Հիսուսի խոսքը. «Ով հիմա ծարավ է, թող գա Ինձ մտա եւ խնի կենդանի ջուրը»: «Իսկ դուք, որ ասքրում եք ջրավարարված կյանքով ու ծափաբեռնված խղճով, որ վախենում եք մեռնելուց, իրաւ ծարավ ու քաղց եք գզում անդնդիտա, Աստծու գիրկն եք ձգտում, լսե՛ք. Հիսուսը նաեւ ձեզ է ձեռք մեկնում՝ առելով. «Ինձ մտտեցեք բոլոր հոգնածներդ ու ծափաբեռնվածներդ»: Պողոսը քարոզեց եւ բոլորին ներկայացրեց Հիսուսի մեծությունը, Որը անձամբ իրեն էր երեսացել: Քարոզը վերջացնելուց հետո Փեստոս կուսակալն ասում է. «Ցնորփում ես, Պողոս, քո մեծ հնտությունը քեզ խելացնորոթյան է տանում»: Փեստոսը այդպես էլ ոչինչ չի չիտակցում: Աստվածաշունչն ասում է, որ մարդկանցից շատերի սրտերն են քարացած: Այդ՛, այդպես պատահում է, այդպիսի սրտերը շատ քան չեն ընդունում: Հնարավոր է, որ ձեր մեջ էլ քարացած սրտերով մարդիկ լինեն: Այդպիսին էր նաեւ Փեստոսը, մինչդեռ Ագրիպպայալ արքան, հոգեպետ ցնցվելով, ասում է. «Պողոս, քիչ է մնում ինձ էլ համոզես, որ քրիստոնյա դարձնամ»: Ու այդ «քիչ է մնում»-ը անցնում է ամեն քան թողնելով նույնը, ինչպես անգլիական այգու փայտի կտորը, որը պտտոփում է նույն ջրահոսքում հին, միօրինակ կյանքի օրերի պես՝ մինչեւ մահ ուղարկվելով ուրիշ դժոխք. ահա մեղքի ու

արդարացան մախկին երգը (Կարդա՛ Գործք 25 և 26 գրովիները)։

Չեզ մե՞տ էլ ամեն բան առաջվա նման է։ Այդ դեպքում Հիսուսը իզուր է ձեզ համար մեռել։ Ուրեմն, ձեզ ներում չկա, չկա ազատում, եւ դուք խաղաղություն չունեք Աստծու հետ։ Միայն մի բայ է պակասում։ «Քիչ է մնում, որ ես էլ քրիստոնյա դառնամ»։ Չարմանալին այն է, որ մարդիկ իրենք իրենց քրիստոնյա են անվանում, բայց Աստծու երեխաներ չեն։ Քրիստոնյա կոչվող մարդը գնում է դեպի կողծանում։ Քրիստոնյա անվանվող մարդիկ չեն ուզում հաշտվել Աստծու հետ։

Բսկ իրմա ես ուզում եմ ցույց տալ հակառակը։ Մի անգամ Պողոս առաքյալը այցելում է եվրոպական Փիլիպպե քաղաքը, որտեղ գործում էին զվարճանքի բոլոր այն վայրերը, որ կային ժամանակի շատ զարգացած քաղաքներում։ Ինչպես բոլոր քաղաքներում, այստեղ նաեւ բանտ կար։ Բանտապետը հռոմեացի մախկին սպա էր, որ ստացել էր այդ հանգիստ պաշտոնը, հնարավոր է, ինչ-որ հին վիրավորվածության արդյունքում։ Մի անգամ այս բանտապետի մոտ են բերում երկու հանցագործի, ինչպիսիք նա երբեք չէր տեսել։ Բանտարկյալները Պողոս առաքյալն էին ցուցնում, որ իրենք չէին հարցնում, թե բանտապետը ինչ կրոն էր դասվանում, կառատապիստների. «Այն կրոնը, որ դավանում են ձեզվնց շատերը։ Նա հավատում էր Աստծուն կամ մի քանի աստվածների»։ Այն օրերին մարդիկ Հռոմում այնպիսի կրոններ էին դավանում, որոնք իրենք էլ լքողներն չէին ընդունում, բայց անտուրի մի դեպք է տեղի ունենում, որը հնարավոր չէ բացատրել։ Կեսովիներին Պողոսը սկսում է երգելով փառաբանել Հիսուսին։ Ես կարծում եմ, որ նրանք միջին կենցաղի հոգում էին պատահա՞ծի մասին։ Նրանց ժամանակ էր հարկավոր, որպեսզի կարողանային հաշտվել այն մարդկանց հետ, ովքեր անգործն գանահարել ու

բանտ էին նետել իրենց։ Հետո նրանց զվարճում մի միտք է ծագում։ «Չե՞ որ Հիսուսը՝ Աստծու Որդին, մեզ համար վճարել է Իր արյունով, չե՞ որ մենք հաշտված ենք Աստծու հետ։ Այստեղ բանտում էլ մենք Նրա ձեռքերի մեջ ենք»։ Նրանք սկսում են հիմներ երգել։ Հրաշալի պատկեր է։ Եվ այդ երգերը լսում են նաև մյուս բանտարկյալները։ Այդպիսի մեղերի մրանք երբեք չէին լսել։ Լրիվով բանտարկյալ՝ ես լսվ ծանոթ եմ բանտային կյանքին։ Այստեղ բազմակրոն են վայնատունն ու անձեռները, հուսահատությունն ու պահպանելի գոռոցը։ Երբ ես մի անգամ ուզում էի երգելով փառաբանել Աստծուն, ինձ անմիջապես արգելեցին։ Հավանաբար, ժամանակակից բանտային պահակները հասկանում են, որ Աստծուն փառաբանելու մեջ ինչ-որ գաղտնիք կա պահված։ Բայց հին ժամանակներում դա չէին հասկանում, եւ առաքյալները ազատ կարող էին երգել։ Դա, ինչպիսի, գարնացնում է պահակներին։ Նրանք երեւի ականց էին դնում, թե ինչի մասին են երգում Պողոսն ու Շիլան։ Նրանք հոգեւոր հիմներ էին երգում։ Մի՞թե մարդիկ այդքան լքողներ են ընդունում իրենց Աստծուն, այն էլ, մանավանդ, բանտում։ Թվում է, թե բանտում պիտի վատ տրամադրություն տիրեր, բայց նրանք շարունակում են գովելով Աստծուն։ Այդ ընթացքում բանտապետը հոգնում է ու պաշտում ընդուն, բայց համարժեք Աստծու կանքով մի ասրապիտի երկրաշարժ է տեղի ունենում։ Բանտի դռները բացվում են, բանտարկյալների կրճղերը՝ թուլանում։ Բանտապետը ուժեղ երկրաժարժից վախեցած՝ ցատկում է մահճակալից եւ վազում դեպի բանտ։ Տեսներով, որ բանտի դռները բաց են ու կարծելով, թե բանտարկյալները փախել են, փորձում է հնքնապսպան լինել, բայց Պողոսը բարձր ձայնով ասում է. «Դու քեզ վնաս մի՛ հասցրու, մենք բոլորս էլ այստեղ ենք»։ Աստվածաշունչը մանրամասն չի նկարագրում նրա ներքին ահն ու սարսափը, բայց վերջինիս համար հանկարծ պարզ է դառնում, որ գոյություն ունի կենդանի Աստված, Որը պաշտպանում է Իր հետեւորդներին։ Կա մի կենդանի Աստված, Որին նա հայտնի էր անտեսել էր։ Կա կենդանի Աստված, Որին հայտնի են նրա բոլոր մեղքերը եւ կեղտոտ արարքները։ Կա կենդանի Աստված, Որի առաջ ինքը ընդամենը մի մեռած մեղավոր է։ Նա հեռավոր մտնում է առաքյալների խցիկը ու ասում. «Տիարք իմ, ի՞նչ պիտի անեն, որ փրկվեն»։ Գոցե Նա

չեն ունեցել կենդանի Աստծու մասին, Որը Հիստաի միջոցով մեզ մտա էր եկել ու ամեն ինչ արել էր մեզ համար:

Եվ այսպես, յոջորէն ընդունեք Հիստաի մե Նրա կանգն: Հիստաը մի անգամ այսպիսի մի առակ պատմեց. « Մի բազմալոր իր որդու հարսանիքին մեծ սերուն է բացում: Նա որսորդու է իր ծառաներին կանչելու հրավիրվածներին. «Մեք, արդեն ամեն ինչ պատրաստ է»: Բայց բոլորը սկսում են արդարանալ: Մեկը ասում է. «Ես հաճոյքով կգամ», Բայց շատ գործ ունեմ, հիմա գբարկված եմ, չեմ կարող»: Պատկերացնում եք. ինձ էլ են շատերն այսպիսի բաներ ասում. «Դուք հոգեւոր հովիվ եք, ժամանակ շատ ունեք, իսկ բիզնեսմենները ժամանակ չեն ունենում ընդհանրապես »:

Հրավիրվածներից մեկ ուրիշն ասում է. « Ես շատ շնորհակալ եմ, բայց նոր եմ անուսնացել, ու հիմա մեղրամիսի մեջ եմք, ճիշտ հասկացեք: Ժամանակ չունեմ»: Եվ այսպես, հրավիրվածներից ոչ մեկը չի գալիս: Ես բազմիցս փորձել եմ պատկերացնել, թե ինչ են նրանք հետո մտածել. «Ես կուզեի մասնակցել բազմալորի որդու հարսանիքին, բայց իրավիճակը թույլ չտվեց»: Ձեզանից շատերն են այսպես մտածում. «Ընդհանրապես, ես ուզում եմ Աստծու երեսնան դառնալ, բայց առայժմ դրա ժամանակը չունեմ»: Ես խնդրում եմ ձեզ՝ միայն հավատով ընդունեք Հիստաի: Ըստեղն ասում են, որ իրենք էլ հավատա ունեն: Ինչին ասես, որ գերմանացիները չեն հավատացել երրորդ ռեյխի ժամանակաշրջանում՝ Ֆյուրերին, Գերմանիայի վերջնական հարթանակին, հրաշքներ գործող գեներլին...: Մենք արդեն ամեն բանի հավատացել ենք, բայց դա դեռ բավական չէ, որ ես ինչ-որ հավատ ունենամ: Ես պիտի խարդարություն գտնեմ Աստծու հետ, իսկ դրան կարելի է հասնել Հիստաի միջոցով:

Հիմա ես ուզում եմ ձեզ պատմել, թե ինչ բան է հավատը: Բացատրեմ մի բանի օրինակով. դեռ երիտասարդ հոգեւորական էի, երբ վտանգավոր մի շրջանում տներ էի այցելում: Ում տուն էլ փորձում էի մտնել, իմ առաջ փակում էին դռները՝ ասելով. «Մենք ոչինչ չենք ուզում գնել»: Ես, սակայն, հասցնում էի ոտքս դռան արանքին դնել ու ասել. «Ես առեւտրական չեմ, պարզապես ուզում եմ մի կարեւոր բան նվիրել ձեզ: Ես պատվեմի եմ»: «Մեզ պատվեմի հարկավոր չէ», - պատասխանում էին նրանք:

Մի անգամ էլ, բացելով մուտքի դուռը, իսկույն հայտնվե-

ցի խոհանոցում: Մի երիտասարդ բարկացած ետ ու առաջ էր քայլում սեւյակում: «Բարի՛ օր», - ասացի ես: Նա ինչ-որ բան փնեքեքաց, իսկ ես շարունակեցի. «Ես պիտեալարանիչ եմ»: Նա կանգ առավ ու գոռալով դարձավ ինձ. «Ի՞նչ: Ավետարանի՞: Այդ էր միայն ինձ պակասում: Դու՛րս եկեք իսկույն: Ես այնու ոչ մի բանի չեմ հավատում, ես կորցրել եմ իմ հավատը մարդկանց նկատմամբ»: Երեսում էր, որ նա ծանր ասքրումների մեջ է: Ես պատասխանեցի. «Երիտասարդ, արի գրկեմք իրար, ես էլ եմ հավատա կորցրել մարդկանց նկատմամբ: Մենք լավ էլ իրար գտել ենք»: «Ինչպե՞ս, գարնացավ մա, -չէ՞ որ Դուք հոգեւոր հովիվ եք ես պարտավոր եք հավատա ներշնչել մարդկանց»: « Մի՞թե, -հարցրի ես,- շատ ափսոս, բայց ես կորցրել եմ իմ հավատը: Ես մասնակցել եմ պատերազմին եւ երբ հիշում եմ բոլոր անարդարությունները ու անմարդկայնությունները, զգում եմ, թե ինչպես է մահաւոր հավատա մարդկանց նկատմամբ»: « Այո՛, -խոստովանեց մա, -այդ դեպքում ես չեմ հասկանում, թե ինչու՞ եք Դուք ավետարանիչ»: « Օ, -ասացի ես, -ես ստացել եմ մի նոր հավատ, որը երբեք չի կորչում»: Երիտասարդը քնծիծաղ տվեց. «Կուզենայի իմանալ, թե ի՞նչ հավատ է դա»: Ես նրան պատմեցի Ավետարանի մասին: «Հավատալ, նշանակում է վստահել Հիստա Բրիտանոսին եւ ընդունել, որ Նա աշխարհ է եկել որպէս միակ Փրկարար»: « Հիստա՞ս, -գարնացավ երիտասարդը, -չէ՞ որ դա քրիստոնեություն է: Ես կարծում եմ, թե դրան վերջ է տրվել»: «Ընդհանրապես, -ասացի, -այդ հավատը սկսվում է այն ժամանակ, երբ մարդու մեջ կործանվում են բոլոր մյուս հավատները»: Ինչքան կցամկանայի, որ դուք էլ թողնեք ամեն մի հավատ եւ վստահություն գտնեիք Հիստաի մտա:

Պատերազմից անմիջապես հետո ես մի հին մեքենա ձեռք բերեցի, որովհետեւ որոշել էիք ճանփորդել: Երբ առաջին անգամ դռռաչաներով բշտում էի մեքենան, ընկերներիցս մեկը բացակայանչեց. «Դեկին պատվեմի է, հիմա անհրաժեշտ է բոլոր ծառերին փակուկ շոտեր փարսաթել»: «Ի՞նչ է, կարծում ես, թե ես չե՞մ կարող մեքենա վարել», - ներկայած հարցրի ես: «Իհարկե, կարող ես, չէ՞ որ դու նույնիսկ վարողական իրավունք ունես»: «Դե՛, որ այդպես է, նստիդ, գնանք», - առաջարկեցի ես: «Չէ՛, չէ՛, շնորհակալ եմ, ես դեռ իմ ունեցվածքը չեմ կտակել», -առարկեց ընկերս:

Այդ պահին մեզ մտնեցավ կինս: «Նստի՛ր, գնացի՛նք», - դիմեցի կնոջս: Նա առանց վարանելու նստեց, եւ մինչեւ օրս էլ կենդանի է: Այն պահին, երբ կինս նստեց մեքենաւ, ինձ վստահեց իր կյանքը: Այդպէս էլ դուք պիտի վարվէք Հիսուսի հետ: Վստահե՛ք Նրան ձեր ամբողջ կյանքը:

Վերջերս մի հետաքրքիր հոդված կարդացի երկրորդ համաշխարհային պատերազմի մասին: Երբ Ստալինգրադի «կաթսան» բոլոր կողմերից շրջապատված էր կարմիր բանակով, գերմանական մի ինքնաթիռի հաջողիկ էր «թափանցել» քաղաք: Ինքնաթիռը Լցրել էին վիրավորներով: Անս ինքնաթիռին են մտնում թեթիւ վիրավորներ եւ ցրտահարված զինվորներ, որոնք նույնպէս ցանկանում էին հայրենիք վերադառնալ, բայց արդեն տեղ ու դարպար չկար: Նրանք բռնվում են ինքնաթիռի ամրիկներից, դբների բռնակներից... եւ ինքնաթիռը օդ է բարձրանում, իսկ երբ վայրէջք է կատարում, այդ զինվորներից ոչ մեկն այլեւս չի կնում, քանի՛ն գրանց բշում, տանում է: Փրկվել էին միայն գրանց, ովքեր գտնվում էին ինքնաթիռի ներսում: Այս հոդվածը կարդալուց հետո ակամսա մտածեցի Աստծու Որդու` Հիսուսի մասին, Որը մեզ համար մեռել ու հարություն է առել այդ փրկարար ինքնաթիռի նման: Այդ ինքնաթիռով կարելի է կործանել «կաթսայի» միջից դուրս պրծնել: Այնտեղ բոլորի համար էլ տեղ կգտնվի: Բայց ինչքան շատ են այնպիսիները, որոնք դեռ ներս չեն մտել, այլ կախված են դռների բռնակներից, այսինքն, եկեղեցի են հանձնվում միայն Սուրբ Ծննդին կամ Չատիկին: Կնքված են, բայց հավատում են ամեն մի հիմնարդության, իսկ երբ մեռնում են, սգո արարություն անմահացի քահանան պիտի հաստատի, որ գրանցք բարի ու կարգապահ մարդիկ են եղել:

Դուք համկանու՞ճ եք, թե ինչ են ուզում ասել: Շատերը միայն ինքնաթիռի ամրիկներից են կախված: Համոզված եղե՛ք, որ նրանց բոլորին էլ քանին կբշի, կտանի: Կզիրկվի միայն նա, ով ներսում է:

Դուք ներսու՞ճ եք:

Դժոխքը պիտի Լցվի այնպիսի մարդկանցով, ովքեր իմացել են Հիսուսի մասին, բայց չեն մտել Նրա ներսը: Հասկանու՞ճ եք: Հիսուսին հավատալ՝ նշանակում է մտնել Նրա մեջ: Նա այն միակն է, Որին դուք առանց երկմտելու կարող եք վստահել ձեր կյանքը: Վերջ է վերջո, ես ուզում եմ

եսս մեկ անգամ ձեր ուշադրությունը հրավիրել Հիսուսի խաչի վրա: Եկեք մտքով գնանք Գողգոթա՝ Երուսաղեմի դարպասներից ոչ հեռու գտնվող այն բլուրը, որտեղ խաչին է գանձված Աստծու Որդին: Աշխարհում դա միակ տեղն է, որտեղ մարդը մեղքերի ներում կարող է ստանալ, եւ որտեղ ամեն բան կարող է փոխվել:

Լյուբեք քաղաքում մի հին եկեղեցի կա, որը կոչվում է «Լյուբեքի Մայր տաճար»: Տաճարի ներսի պատին պատկերված է Հիսուսի խաչելության պատկերը, որը 15-րդ դարում նկարել է գլանավոր նկարիչ Հանս Մեյնինգը: 1942 թվականին եկեղեցին հրդեհվում է ոչբրկի զորքերից: Այդ ժամանակ մի զինվոր, սեփական կյանքը վտանգի տակ դներով, մտել էր այրվող եկեղեցին ու փրկել պատմական նկարը: Պատերազմից հետո, երբ ես դասախոսություն էի կարդում Լյուբեքում, տեղի արվեստի թանգարանի տնօրենն ինձ ասաց. «Թանգարանի նմուդում պահպանվում է նկարիչ Մեյնինգի հրաշալի նկարը: Եթե կուզեք, ես հաճույքով կարող եմ ցույց տալ ձեզ»: Ես, ինտրիկ, այդպիսի հնարավորությունից հրաժարվել չէի կարող: Եվ մենք իջանք նկար՝ նկարը տեսնելու: Դա մի հիւսնակ ստեղծագործություն էր: Հռոմեական զինվորները վիճակ էին գցում, իսկ չորս կորմում պատկերված էր խառնիճարանց անբրկը՝ լացող կանայք ու քնծիծաղ տիկո փարիսեցիներ: Այդ ամենի դիմաց երեք խաչ էր նկարված: Եվ, հանկարծ, ես այնտեղ մի գարմանակի բան են նկատում: Հիսուսի խաչի տակ պարզ երեւում էր խոտածածիոցի մի բիծ, այսինքն, ազատ տեղ: Հետաքրքիր է, թե նկարիչը դրանով ի՞նչ է ուզեցել ասել: Միջնարդարան նկարիչները իրենց գործերում միշտ գաղտնագրի նման մի բան են ունեցել: Ինձ բացատրեցին այդ ազատ տեղի իմաստը. «Այստեղ, Հիսուսի խաչի տակ, մահը կորցնում է իր խայթոցի իմաստը, այսինքն, Բրիստոսի խոր վերքերի մեջ մարդ տեսնում է իր փրկությունը: Նրա ձեռքերը, որոնք պարզված են մեզ, աշխարհին ազատություն ու փրկություն են բերում...»:

Այո՛, ես ուրախ եմ, որ Աստծու Որդու` Հիսուս Բրիստոսի խաչի տակ ինձ համար մի տեղ կա պահված: Այդ տեղը նաեւ ձեզ համար է:

Մի՞թե դուք կարող եք ընդդիշտ թափուր թողնել այդ տեղը:

Յուրաքանչյուր ժամանակաշրջան իրեն հատուկ աստված ու ասացվածքն է ստեղծում, որոնք գործածվում են բոլոր իրադրություններում՝ հարմար կամ անհարմար առիթներով: Մեզմանո՞ւ այրօրինակ տարածում ունի «առանց ինձ» կապակցությունը: Ասելով ընդամենը այս երկու բառը՝ ամեն բան շուտ ենք տալիս ուրիշների վրա՝ սպանելով ինքներս մեզ: Այդ «առանց ինձ»ը դարձել է մեր կյանքի ամենավտանգավոր խոսքերից մեկը, քեպետ այն ունի մահւ որոշ դրական կողմեր: Եփեք միասին բննարկենք դրանք:

1. Այդ մասին շատ քիչ ենք արտահայտվում, մինչդեռ պիտի հավատալը լինէր

Աստվածաշունչը ներկայացնում է մի հին պատմություն, որն այսօր էլ չի կորցրել իր իմաստն ու նշանակությունը: Դուք, հավանաբար, լսել եք Աբրահամի մասին: Աստվածաշունչը մեզ պատմում է. «Աբրահամը հավատաց Աստծուն, եւ այդ հավատը իր համար արդարություն համարվեց» (Ծն. 15:6): Աբրահամը գիտակցեց իր մեղքերը Աստծու առաջ, խոստովանեց ու հավատարով՝ ներում ստացավ:

Մի անգամ մա իր եղբորորդու՝ Դովտի հետ միասին հայտնվում է դժվար իրավիճակում: Աստվածաշունչը մեզ ասում է, որ Աբրահամը մեծաթիվ ամատուններ ուներ, իսկ Դովտը՝ ոչ, ու այս պատճառով նրանց հովիվների միջև վիճարկություն է ծագում: Վեճն այնքան է քեժանում, որ քվում է, ուր որ է՝ կվերածվի ծեծիչտուքի ու կռվի: Նրանք ավելի հաճախ էին վազում իրենց տեղերի մոտ ու բորբոքված պատմում կատարի վեճերի մասին: Դրությունը գնալով ավելի էր սրվում:

Բարեկամներ, եթե դուք Աբրահամի տեղը լինեիք (մա տարիքով բավական մեծ էր Դովտից), ինչպե՞ս կվարվեիք այդ իրավիճակում: Ես, անձանք, նրա փոխարեն Դովտին

կասեի. «Ինչո՞ւ են քո հովիվները վիճարկում իմ հովիվների հետ, կորի՞ր այքիցս»: Դովտը, գուցե, ինձ պատասխաներ. «Ոչ մի դեպքում: Ես պահանջում եմ այն, ինչը օրենքով է ինձ հասնում, ինքը կորի՞ր»: Այս վեճը կարող էր անվերջ շարունակվել ու հետո, բնակամարդ, պիտի դառնար արեւո ու դժբախտություն: Մակայն, ահա, բարեպաշտ Աբրահամը կանգնում է Աստծու առաջ, մայրո՞ւ իր եղբորորդուն ու մտածում. «Վիճարկություն, բշնամություն: Ոչ, ոչ, առանց ինձ, ոչ ինձ հետ»: Հետո մա ձեռքը դնում է Դովտի ուսին ու ասում. «Թանկագինս, բող մեր միջև վիճարկություններ չլինեն, քանի որ մեզք հարազատներ եմք»: Նա Դովտին առաջարկում է խաղաղությամբ դուրս գալ այդ դժվար իրավիճակից եւ մնալ բարեկամներ՝ քեկուզ որոշ վնասներ կրելով: Համոզված եմ՝ երբեք են պահեղ, երբ ուրիշների պատճառով դուք էլ եք սկսել վիճել ու արմիչել: Բայց պատասխանեք, ինդրե՞ս, այդ պահին մտածե՞լ եք. «Վիճարկե՞լ: Ոչ: Միայն քե առանց ինձ»: Վարվե՞լ եք այնպես, ինչպես ժամանակին Աբրահամը վարվեց: Դժվար քե: Հավանաբար, դուք հաճուքով կվիճարկեիք կամ էլ դեռ մտքում վիճարկում եք, ասենք, տիկին Շուլցի ու նրա հարեւանի հետ: Իսկ նկատո՞ւմ եք, քե որքան հաճախ ենք գործածում այս բառերը. «Վիսյն քե առանց ինձ»: Տեղ չիտուր ասել է. «Երանի իսրայրարարներին, որովհետեւ նրանք Աստծու որդիներ պիտի կոչվեն» (Մատթ. 5:9): Մեր օրերում, քրիստոնեությունը, որպես հավատք, այնքան է հեղինակագրկվել, որ հարկ եղած դեպքում չի կարողանում մեզ ետ պահել վիճարկությունից: Այդպիսի պահերին կրոն ենք ցավալի պարտություն:

Ուզում եմ անդրադառնալ աստվածաշնչյան եւս մի պատմության, որը շատ եմ սիրում: Հեղուղ Հովսեփ անունով մի երիտասարդ է, որին եղբայրները վաճառել էին եգիպտացի առետորականներին: Դարեր առաջ՝ Եգիպտոսը ժամանակի ամենագարգազած երկիրն էր, որտեղ սպրոն էին հարուստ ու գործունյա մարդիկ: Հովսեփին գնել էր Պետափրես անունով այդպիսի հարուստ մեկը: Նա ուներ բազմաթիվ ստրուկներ ու մեծ տներ: Հովսեփը, դեռեսս պատանեկության տարիներից պաշտում էր Աստծուն: Այդպիսի էլ է պատահում: Պատանին Աստծուն խոստացել էր. «Ես Քեզ եմ պատկանելու»: Եվ ահա մա Եգիպտոսում բողոքիմն մեմակ է: Հովսեփը տեսնում է, քե ինչպես են

մյուս ծառաները գողանում ու ստում, իսկ ինքը շարունակում է ծառայել հավկասարածորեն: Դրա համար նրան, ինչպիսիք, ծաղրում էին, սակայն տիրոջ տանը Հովսեփին սիրում էին ու վստահում:

Այդպես է նաև ժամանակակից կյանքում: քրիստոնյաներին հաճախ են ծաղրում, բայց, սիեհույն ժամանակ, նրանց վստահում են, որովհետև մարդիկ համոզված են, որ իսկական քրիստոնյաները ոչ գողանում են, ոչ էլ ստում: Շատ շատով Պետափրեայը Հովսեփին է համձնում իր տնտեսության ղեկավարումը: Նշենք նաև, որ նա գեղեցիկ էր եւ կազմակերպիչ, եւ ղեկավար, այդ պատճառով էլ արժանացավ Պետափրեայի կնոջ ուշադրությանը: Վերջինս անբարոյական ու վտրի սի կին էր եւ իր տրամադրության տակ բազմաթիվ ստրկուհիներ ունեւ: Այստեղ տեղին է հիշել հետեւյալ ասացվածքը. «Անբանությունը արատների մայրն է»: Տեսնելով Հովսեփին կինը փորձում է գայթակղեցնել նրան, բայց Հովսեփը ցույց է տալիս, թէ ոչինչ չի նկատում: Այնուամենայնիւ, կատարվում է անսպասելի. սիրայնակ մնալով Հովսեփի հետ՝ Պետափրեայի կինը նրան ստիպում է կենսակցել, սակայն Հովսեփը որոս է պրծնում՝ կնոջ ձեռքում բռնելով իր շապիկը: «Շնորհաբա՛ն: Միայն թէ առանց ինձ: Միայն թէ ես մերը չգործեմ»: Նրանք, ովքեր գրել են Աստվածաշունչը, ավելի հրաշալի բառերով են նկարագրում այս պահը. «Ինչպե՞ս կարող եմ անել այդ չար եւ սուկալի բանը եւ մերանչեւ Աստծու առաջ» (Ծն. 39.9): Հենց սա է «միայն թէ առանց ինձ»-ի նշանակությունը:

Մեծահասակների շրջանում դժվար թէ գտնվի մեկը, որը թեկուզ սի անգամ հայտնված չլինի նման իրավիճակում, այլ բան է, որ նրանք չեն ուզում դա որպես մեղք ընդունել: Դուք ինքներդ եղե՞լ եք նման իրավիճակներում: Եթէ այո, անկեղծորեն ասե՛ք՝ քանի՞ անգամ եք մտածել. «Աստված տեսնում է ինձ: Միայն թէ առանց ինձ»: Ի՞նչ եք զգում Հովսեփի այս պատմությունը լսելիս: Մե՛նք, գուցե, նույնիսկ չստեղծե՛ք: «Միայն թէ առանց ինձ», որովհետև հաճախ ենք մոռանում Աստծու պատկերն այն մասին, որ պետք է հեռու մնալ պոռնիկությունից եւ բոլոր պիղծ բաներից՝ թե՛ խոսքով, թե՛ գործով: Նման իրավիճակներում շատ հազվադեպ ենք մտաբերում այս հրաշալի խոսքերը՝ «Միայն թէ առանց ինձ»: Հավատացե՛ք, որ դրանք շատ կարեւոր են հատկապես

պես փորձության ժամին: Երբ խախտում ենք Աստծու որեւէ պատվիրան, հիշենք այս խոսքերն ու մտածենք դրանց մասին: Ես պետք է ձեզ ասեմ, որ Աստված չի մոռանում մեր ամենօրյա մեղքերը: Այսօրվա ժամանակները անցյալից տարբերվում են նրանով, որ մենք ավելի հաճախ ենք խախտում Աստծու պատվիրանները:

Մի անգամ Հանովկերի հոգեւոր հովիվների առաջ գեկուցում կարդալու առիթ ունեցա: Թե՛ման բավական հետաքրքիր էր. «Ի՞նչ է պետք մեզ՝ հոգեւոր հովիվներիս եւ մեր եկեղեցիներին»: Չեկուցում սպում էր. «Կասեմ սի-այն, որ մեզ՝ բողոքիս պակասում է վախի գեգացումը: Մենք կարող ենք դժոխքի բաժին դառնալ, որովհետև Աստված, իրականում, խստապահանջ է եւ չի մոռանում Բր տված պատվիրանները»:

Երբ զգում ենք, որ մարդ արարածի հոգին ոտնահարում է Աստծու պատվիրանները, պետք է ուժ ունենանք եւ հստմարձակորեն ասենք. «Միայն թէ առանց ինձ»:

Աստվածաշնչում սի այսպիսի հուզիչ պատմություն կա. Աստծու Որդին կանգնած է լեռան վրա, իսկ Նրա կողքին՝ սատանան, որը ցույց է տալիս Տիրոջը աշխարհի բոլոր երկրները եւ ասում. «Այս բոլորը քեզ կտան, եթէ գետին ընկներով ինձ պաշտես» (Մատթ. 4.9): Աստծու Որդին նրան պատասխանում է. «Միայն թէ առանց ինձ: Անբողք աշխարհը կարող է խոնարհվել քո առաջ, բայց ոչ Ես»: Ես այս սիրտը ձեռակերպեցի մեր բառերով, իսկ Աստվածաշնչում կարդում ենք. «Ետե՛րս գնա, սատանա՛, որովհետև գրված է՝ պիտի երկրպագես քո տեր Աստծու՛ն եւ միայն նրա՛ն պիտի պաշտես» (Մատթ. 4.10):

Այս, եթէ կարողանայինք բոլոր անիրածեշտ դեպքերում հիշենք այս «Միայն թէ առանց ինձ» նախադրատությունը: Այդ դեպքում մեզ համար շատ ավելի լավ կլինե՛ր: Իսկ ի՞նչ է կատարվում իրականում. անհպի կարեւոր այս սիրտը արտասանում ենք այնպիսի պահերի, երբ դրա կարիքը չկա ընդհանրապես:

2. Մենք արտահայտվում ենք այն դեպքում, երբ դրա կարիքը չկա

Միտելի՝ բարեկամներ, մեզանից շատերը «Միայն առանց ինձ» արտահայտությունը շատ հաճախ անտեղի են գործածում: Ինձ ծանոթ մի երկտասարդի մի անգամ ասացի. «Լսի՛ր, դու կյանքում ավելի շատ բանի փաստելի, եթե նվիրաբերվելիք կենդանի Աստծուն»: Նա առարկեց. «Չէ՛, չէ՛, միայն թե առանց ինձ»:

Մենք Աստծոն վերաբերվում ենք այնպես, ինչպես հին բազմոցին: Այս համեմատությունը հիշեցի ինձ հետ կապված մի պատմությունից:

Տարիներ առաջ առողջությունս վերականգնելու համար բժիշկը ինձ ամենօրյա զբոսանքներ էր նշանակել: Սովորական մի օր, քայլելիս, տեսա փողոց նետված մի հին բազմոց: Հազվադեպ էր, այն այլևս մարդկանց հարկավոր չէր, եւ, հավանաբար, ուշ երեկոյան տեղեղը հանել ու դրել էին արքարիկի մոտ: Մտովի պատկերացրի այդ բազմոցի պատմությունը: Հավանաբար բազմոցը ժառանգություն էր ստացել տատիկից, որը վերջերս էր մահացել: Նրա թռռները ժամանակակից երիտասարդներ էին, ունեին նոր բնակարան ու կահույք եւ, գուցե, մտածել են. «Ինչնեղի՞ս է պետք այս հին բազմոցը: Այն մեր կահույքին բոլորովին չի սագում, բացի այդ, ո՞վ գիտի, թե ինչ միջատներ կան ներսում, ավելի լավ է դուրս շարտենք»: Ճիշտ այդպես էլ մարդիկ վարվում են կենդանի Աստծու հետ: Աստված ուղղակի չի սագում ժամանակակից կյանքին, Նա տեղ չուր մեղօրյա հասարակության մեջ: Ի՞նչ պետք է անենք Աստծու հետ, եկեղեցում դենք այդ «հին բազմոցը»: Միեւնույնն է, եկեղեցին շարքավա մեջ ընդամենը մեկ անգամ է քայց լինում:

Բայց, սիրելի՛ բարեկամներ, Աստված հին բազմոց չէ, դուք հասկանում եք: Կենդանի Աստված հին կահույք չէ՝ մեր կյանքով այն դուրս շարտելու իրավունք չունենք, հետեւաբար, սխալ է կարծել, թե Նա դուրս է եկել մորթալից: Պատկերասցումը՝ մ եք, թե ինչ է Իրենից ներկայացնում Աստված: Գուցե եկեղեցի՞ն է մեղավոր, որ Աստված մեր օրերում դարձել է անհասկանալի մի բարդ խնդիր: Աստծու անունը տալիս՝ մեր մարմնով պետք է սարսռա անցնի: Աստծու նկատմամբ մեր թեթեւամիտ վերաբերմունքը արտահայտ-

վում է այսպես. «Ախ, միայն թե առանց ինձ»:

Իսկ հիմա ես կուզեի ավելի առաջ անցնել: Ամենորեք խոսվում է, որ մեզ մոտ՝ արեւմտյան երկրներում համաճարակի պես տարածված են ոչ միայն ֆիզիկական հիվանդությունները, ինչպես օրինակ, ինֆարկտը կամ քաղցկեղը, այլև հոգեկան խանգարումները: Ու գիտե՞ք, սարսպիեին այն է, որ մենք բոլորս հոգեկան հիվանդներ ենք: Գլխտե՞ք, որ այդ չարագուշակ իրկանությունը տառապողների թիվը օր-օրի աճում է: Մեր երկրի խելացի մարդիկ ուզում են հասկանալ, թե ինչնակամում ինչի՞ց են առաջ գալիս հոգեկան աղետները: Ըվեյցարացի մի բժիշկ այդ առիթով մի շատ խելացի կարծիք է հայտնել. «Ժամանակակից աշխարհը իրվանդ է անաստվածությունը»: Ուշադրություն դարձրեք, սրանից դեռ մի դար առաջ մարդիկ Աստծոն հաշիվ էին տալիս: Այս մտածել են վկայում մեր եկեղեցիները: Իսկ հետո որոշեցին տեխնիկական անաստվածացման ճանապարհով ազատվել Աստծուց: Որպեսզի ապացուցեին, որ Աստված, իբր թե, գոյություն չունի, գիտնականները այգբան շատ էին գրում այդ մտածել, որ մատները կոշտացել էին: Անբոխն աղաղակվում է. «Կրոնը ժողովրդի համար թնրանյութ է»: Նույնիսկ անխեղ երեխաները հարցնում են. «Արտե՞ղ է Աստված, ես Նորան դեռ չեմ տեսել, ուրեմն, չկա», եւ շարունակում են ծծել փոքրիկ մատիկները: Մարդիկ բազմաթիվ փորձեր են կատարել, որպեսզի ազատվեն Աստծուց, սակայն մինչեւ հիմա դեռ ոչ մեկի դա չի հաջողվել: Ժամանակակից ափսոսանքներից մեկն է նախապես հիմնարկը Մաքս Պլանկը մահվանից առաջ «Կրոնը եւ բնագիտությունը» վերնագրով մի գրքույկ էր հրատարակել: Այստեղ նա գրում է. «Բնագիտական փորձարարներին համար ինքնընտանջյան պարզ է, որ մեզ շրջապատող ամեն մարդին կարող է ճիշտ հիռք ունենալ, եթե ունի Մտեղծոր»: Տեսնու՞մ եք, մենք ոչ մի կերպ չենք կարող ազատվել Աստծուց:

Վերջերս լեռնային մի փոքր քաղաքում դասախոսություն էի կարդում: Երբ երեկոյան դուրս եկա եկեղեցուց, տեսա պատրի տակ կանգնած մի քանի տղաների: Փողճեցի ճշտել, թե ինչու՞ եկեղեցի չեն մտնում: Պատասխանի փոխարեն նրանք ինչ-որ բան փնթփնթացին: «Դա պատասխան չէ՞»,՝ ասում եմ,՝ «Ի՞նչ եք կարծում, Աստված կենդանու՞մ է թե՞ ոչ»: Նրանք թոթովեցին ուսերը, իսկ ես շարունա-

կեցի. «Լսե՞ք, եթե Աստված կենդանի է, ապա դուք Նրան պիտի պատկանեք, իսկ եթե կենդանի չէ, ապա կարող եք եկեղեցու ամրամասնում չհամարվել»։ Հետո դիմեցի նրանցից մի-այն մեկին. «Դուք ի՞նչ եք կարծում, Աստված կենդանի է»։ Նա պատասխանեց. «Այո, ես հավատում եմ»։ «Իսկ Նրա պատվիրանները պահո՞ւմ եք»։ «Ո՛չ»։ Ահա այսպիսի գրույց ունեցա տղաների հետ։ Նրանցից ոչ մեկը չէր հերքում Աստծուն, բայց եւ չկար մեկը, ով լքջրեմ ցանկանալ պատկանել Նրան։ Նույն վիճակն է ամենուր։

Եւ շատ ընտանցիքների եմ այցելում, եւ տղանադրիկ ինձ հաճախ եմ ասում. «Աստծուն ես հավատում եմ, բայց եկեղեցի բող հաճախեմ ուրիշները»։ Այսինքն, ոչ հրաժարվում եմ Աստծուց, ոչ էլ ուզում եմ պատկանել Նրան։

Աստծու հայրը շատերի համար է անորոշ։ Հետո այդ չլուծված խնդիրները աստիճանաբար կուտակվում եմ, վերածվում հոգեկան իրվանդության, իսկ վերջում կործանում մարդկանց։ Մե՞նք կործանվում ենք, որովհետեւ չենք կարողու-նում հարթել մեր հարաբերությունները Աստծու հետ։ Եկեղեցի հաճախուրդեղից տաաղ կին եմ եւ միայն մեկը՝ տղանադր։ Իսկ ո՞ր եմ տղանադրիկ։ Ես հավատացնում եմ, որ նրանք կոր-ծանվելու եմ մինչեւ դժոխք ընկնելը, որովհետեւ չեմ համար-ճակվում պատկանել Աստծուն կամ ազատվել Նրանից։

Այսպիսի ահապիոր իրավիճակում ենք գտնվում մե՞նք՝ քրիստոնյա կոչվածներս, ու այս այն դեպքում, երբ գոյու-թյուն ունի հրաշալի լուրը այն մասին, որ Աստված, ճեղքե-լով մեզ իրարից բաժանող պատը, Հիսուսի միջոցով երկիր է իջել։ Աստված՝ Փրկիչը, ոչ միայն մեր աշխարհն էր եկել, այլ մեր փոխարեն գամվել խաչափայտին։ Դրանից ավերի ի՞նչ պետք է ամեր Աստված մարդու համար։ Հետո Նա Իր գորոթյանը քանդեց մասի կապանքները՝ ճանապարհ բա-ցելով դեպի հավիտենական կյանք։ Իսկ մե՞նք կանգնել ու ասում ենք. «Այդ ամենը հրաշալի է, բայց ես դա հետո էլ կարող եմ լսել», մինչդեռ վերջը գալիս է շատ անապականի-որեն եւ հանկարծակի։

Երբ երիտասարդ պատվելի էի, իմ շնջանում մի աշխա-տակիր մարդ միշտ դեմ էր խոսում ինձ, նույնիսկ մեկ-մեկ էլ ծիծաղում էր վրաս, երբ խոսում էի Հիսուսի մասին։ Իմ այն հարցին, թե ինչպե՞ս եք պատրաստվում մեռնել, նա պա-տասխանեց. «Դուք՝ հոգեւորականներս, միշտ էլ մահով եք

մարդկանց վախեցնում»։ Եվ, սիւս, մի օր էլ հասավ նրա մեռնելու ժամը, եւ նրա կինը գիշերով գանգախարեց ինձ։ Ես խնդրեց գնացի նրանց տուն ու ասացի. «Մտաեղել է ժամը, երբ Հիսուսը վերջին անգամ է քեզ կանչում»։ Նա ուրեց արդթել, բայց չկարողացավ։ Եւ Աստվածաշնչից մեջբե-րումներ էի կարդում, շնորիի խաբեր ասում, սակայն նա այլեւս չէր կարողանում ընթրնել։ Նա հրաժարվում էր Աստ-ծուց։ Հրնա էլ Աստված էր հրաժարվել նրանից, եւ այդպես, դառը հուսալքեման սարապիով, Նա հրաժեշտ տվեց կյան-քին՝ չհաշտվելով Աստծու հետ։

Ես խնդրում եմ լրջորեմ ընթրնել այդ հրաշալի լուրը, որ ընդգրկում է մեր հոգիները. «Քանի որ աստված այնպես սիրեց աշխարիը, որ մինչեւ իսկ իր միածին Որդուն տվեց, որպեագի, ով Նրան հավատում է, չկորչի, այլ ընդունի հա-վիտենական կյանքը» (Հովի. 3.16)։ Հիսուսը դեռ ավելին է անում, Նա տագնալով ասում է. «Ահապարիչ ես դրան առաջ եմ եւ բախում եմ...» (Հայտ. 3. 20)։

Քարեկանների, գոյություն ունեմ տարբեր քրիստոնյաներ։ Կան այնպիսիները, որոնք միայն եկեղեցու հարկերը վճա-րողներ են։ Դա շատ սիրալի է եւ, միաժամանակ, ահապիոր տակալի։ Կան քրիստոնյաներ, որոնք միայն Սուրբ Ծննդի օրն են եկեղեցի հաճախում։ Կան քրիստոնյաներ, որ կա-նանց թույլ են տալիս գնալ եկեղեցի, իսկ իրենք մնում են տա-նը։ Կան քրիստոնյաներ, որ ասում են, թե կնքված են։ Դա նույնպես հրաշալի է, բայց կնքված լինելը շատ քիչ է։ Կան քրիստոնյաներ, որ լսել են Տիրոջ խոսքը. «Ահապարիչ, ես դրան առաջ եմ եւ բախում եմ. եթե մեկը ակամց դնի իմ ճայ-գին եւ բացի դուռը, կսնունճ նրա մտա եւ կընթրեմ նրա հետ, եւ նա՝ ինձ հետ» (Հայտ. 3.20), իսկ նրան ժիտական պա-տակիան են տալիս. «Տեր Հիսուս, քրիստոնեոթյունը, կար-ծես թե, լավ բան է, սակայն Քեզ հետ լինելուն մե՞նք չենք հա-վատում, այնպես որ, ավելի լավ է՝ «առանց մե՞զ»։ Այսպիսուս, մե՞նք՝ Միայն թե առանց ինձ՝ արտահայտությունը շատ հաճախ ենք անտեղի գործածում։

Եթե քրիստոնեոթյունը ձեզ չհետաքրքրեր, դուք այս գիրքը ձեր ձեռքը չէիք վերցնի։ Բայց լսե՞ք, Հիսուսի մեծու-թյունը դուք կարող եք ընկալել միայն այն դեպքում, երբ ոչ-սարոթյուն դարձնեք ձեր սրտի դրան թակեցին, բացեք ու ընդունեք Նրան՝ որպես ձեր Տեր ու Փրկիչ։

3. Միայն Մեկը իրավունք ունի ասել «Առանց Ինձ», բայց չի ասում

Այդ Մեկը Տեր Հիսուսն է: Իրոք, Նա կարող էր ասել, «Միայն թե առանց ինձ», սակայն, փառք Աստծու, որ այդպես չի ասում:

Թույլ տվեք այս առիթով ձեզ փ բան պատմել: Դավիթի բանաստեղծ Յակոբսոնը փ շատ հետաքրքիր նովել է գրել, որը կոչվում է «Բերգամոնի ժանտախաղը»: Բերգամոն փ փոքր քաղաք է, որը գտնվում է Ռավեն Լեռան ստորոտում: Յակոբսոնը գրում է, որ քսաներորդ դարի կեսերին այնտեղ գաբիոլեթի ժանտախաղ էր տարածվել: Գիշեր-ցերեկ դողանցում էին եկեղեցու զանգերը: Մարդիկ ձեռքները վեր էին բարձրացրել եւ Աստծուց օգնություն էին աղերսում, սակայն ապարդյուն: Ժանտախաղ ժամ առ ժամ ավելի էր տարածվում: Հուսալքված՝ նրանք նախ սկսում են արդարակերպ, «Աստված չկա», հետո էլ նկուղներից քուրս են գլորում գինու տակառները, ու սկսվում է հայրերցողությունը: Գիճուկ հարքած՝ օրեր շարունակ նրանք տրվում են սեռական հաճույքների: Հենց պարտադրապահում մարդիկ ընկնում էին ու մեռնում: Նրանք այդպես ընկած էլ մնում էին: Այդ մարդիկ միայն փ նշանաբան ունեին. «Ուտե՛նք, խմե՛նք, քանի որ վաղը պիտի մեռնե՛ք»: Մի օր էլ նրանք հմայիչ փ երգ են լսում: Միտենում են քաղաքի դարպասներին ու տեսնում փ խույր հավատացյալների, որոնք, հոգեոր երգը շրթներին, Լեռնային արահետով վերել են քարճրանում. «Գթա՛, Տե՛ր Աստված, գթա՛»: Առջեից փայտե, սեւ խաչը ձեռքին՝ գնում էր երիտասարդ քահանան: Նրանք անցնում են քաղաքի դարպասներով, իսկ քաղաքի բնակիչները ծարրում ու արդարակերպ են. «Է՛յ, որ՛ք, ապրճե՛ր, դարդարեցրե՛ք ձեր անմիտ քայլերը: Ավելի լավ է՝ եկեք ուտե՛նք, խմե՛նք, քանի որ վաղը բոլորս էլ պիտի մեռնե՛նք»: Խույրը սակայն քահանայի առաջնորդությամբ շարունակում էր քայլերը՝ տանելով փայտե սեւ խաչը: Նրանք գնում են եկեղեցի, բաց դռնով մտնում ներս՝ իրենց ետեւից տանելով կիսախեղձագայ, մասի հետ հաշտված անբուխին: Այդուհանդիպում աչքերով մտագործը բարճրանում է սեղանին ու ոսկե գավաթը ձեռքին՝ արդարակերպ. «Խո՛նք, թե՛ Ֆ արեք, Աստված չկա»: Եվ, ահա, ամբիոնին է մոտենում

քահանան. «Ուզում եմ ասել, որ այն ժամանակ էլ ամբողջ ծաղրում էր խաչին գանձված Աստծու Որդուն: Նրա վրա ծիծաղում էին նույնիսկ երկու կողմերում կախված ավազակները: Այդ ժամանակ Աստծու Որդին մտածում էր. «Եվ այս մարդկանց համար, որոնք արժանի չեն, Ես մեռնում եմ»: Հետո Նա որոշում է. «Միայն թե առանց ինձ»: Աստվածային ուժով Հիսուսը ազատվում է սեղանից, իջնում խաչից ու Իրեն խաչորների զգեստները այնպես է պատառոտում, որ նույնիսկ վիճակ զցողների գառերը զլորվում են Գողթբայի բլուրից: Նա վերցնում է Իր շորերը, համբարճվում երկից ու ասում. «Միայն առանց Ինձ»: Եվ խաչը պարսպ է մնում: Այդ պատճառով էլ հիմա ո՛չ փրկություն կա եւ ո՛չ էլ գթություն. մեզ մնացել են միայն մահն ու դժոխքը»: Սրանով քահանան ավարտում է իր քարոզը, իսկ եկեղեցում քար լռություն է տիրում: Մտագործը վարուց արդեն իջել էր սեղանից ու կանգնել անբիոնից թիչ հեռու: Հանկարծ նա երեք քայլ առաջ է գալիս, ձեռքը մեկնում դեպի քահանան ու խոսքով ձայնով գոռում. «Է՛յ, որ՛, լսո՛՛մ ես, Փրկչին նորից գանձիր խաչին, նորից գանձիր»:

Միթե՛ր բարեկամներ, ինչպիսի, այստեղ քահանան վրալ է քարոզում Փրկչի պատմությունը: Սակայն անենաազդեցիկն այն է, որ Աստծու Որդին չի ասում. «Միայն թե առանց Ինձ»: Մինչեւ հիմա էլ Նա ցավում է մեզ համար, չմայած մարդիկ ասում են. «Այս կյանքի զվարճությունները մեզ համար ավելի կարեւոր են, քան հոգու փրկությունը»: Նա, Ով հիմա էլ ուզում է մեզ փրկել, իրավունք ունի ասելու. «Արե՛ք, ինչ ուզում եք, միայն թե առանց Ինձ»: Եթե ես Հիսուսի տեղը լինեի, կթողնեի, որ ամբողջ աշխարհը կործանվեր: Սակայն Հիսուսը՝ Աստծու Որդին չի ասել. «Միայն առանց Ինձ»: Նա համբերատարությամբ փնտրում է մեզ: Վերջապես, ե՛րբ են բացվելու ձեր աչքերը, որ տեսնեք, թե ինչպես է Փրկիչը ուզում ձեզ Իր սեփականությունը դարճնել, եւ կարողանաք ամբողջ սրտով ասել. «Ի՛ն՝ Փրկիչ, ի՛ն՝ Տեր»:

4. «Առանց Ինձ՝ ոչինչ անել չեք կարող»

Ուշադրություն դարճրեք. մենք երբեմն բացակայանչելով ենք ասում «առանց ինձ», բայց մի անգամ Հիսուսը առանց

բացակայանչելու եւ շատ հստակորեմ է ստեղ այդ «առանց Ինձ»-ը, իսկ հետո շարունակել է. «Առանց Ինձ ոչինչ անել չեք կարող» (Հովհ. 15.5): Կարող եք համոզված լինել. այն ամենը, ինչը անում եք առանց Հիսուսի՝ հավիտեանակյանության մեջ ոչ մի արժեք չունի:

Վերջերս փորոցում մի քանի կռիոյ տղաներ տեսա: Նրանց մեջ կար փոքրիկ մեկը, որին երեւի ամենաշատ հարկածներն էին բաժին ընկել: Նա արցունքներն աչքերին հազվի դուրս պրծալ կռվի միջից, մի հինգ քայլ հեռու վազեց ու շրջվելով դեպի տղաները՝ սպառնալով բացակայանչեց. «Սպասեք, հիմա ես կգնամ ու կկանչեմ ավագ երբոյս»: Նա մի ավագ եղբայր ուներ, որին կարող էր ամեն ինչ պատմել ու օգնության կանչել: Այդ ժամանակ ես մտածեցի. «Փոքրիկս, ինչքան լավ է, որ դու քեզանից մեծ եղբայր ունես»: Ես խելոյն ուրախացա, որ ի դեմս Հիսուսի՝ ես էլ ավագ եղբայր ունեմ, ու Նա միշտ կարող է օգնության հասնել ինձ: Ինչ հրաշալի է, որ իմ ավագ եղբայրը պաշտպանում է յուրայիններին եւ նույնիսկ ատում. «Առանց Ինձ ոչինչ անել չեք կարող»:

Բանաստեղծ Հավերժալը գրել է. «Տեր իմ Հիսուս, վերցրու՛ կյանքս, ես այն Քեզ եմ նվիրում, վերցրու՛ օրերս, քեզ կո՞ւմ՝ ժամերս եւ լսի՛ր Քեզ անվերջ գովաբանող երգերս...»: Ես ուզում եմ, որ դուք այսպես դիմեք Փրկչին. «Տեր իմ Հիսուս, ես առանց Քեզ՝ ոչինչ անել չեմ կարող»:

ԿԱՐՈ՞Ղ ԵՆՔ ՊԱՐԶԵՅՆԵԼ ԿՐՈՆԱԿԱՆՆԻ ՀԱՐՑՅՈՒՆ

Միանգամից պատասխանեմ՝ ոչ: Կրոն՝ նշանակում է անկեղ ղորնել Աստծուն, եւ դս մարդուն զցում է տազնապալի իրավիճակների մեջ: Մինչդեռ Ավետարանը մեզ հակառակն է ասում. «Աստված փնտրում է մեզ»:¹ Հեռուաբար, ավելի լավ կլինեի հարցը դեմ այսպես. «Գոյություն ունի՞, արդոք, փրկություն՝ բրիտանեակյան հավատքի մեջ»:

1. Մեր եւ Աստծու հարաբերություններում որոշակի- ություն չկա

Սկզբից եւեթ պետք է ստեմ, որ մեք՝ ժամանակակից մարդիկ, չափազանց ծիծաղելի էակներ եք: Եթե մարդ մի փոքր հիվանդանում է, խնդրյն բժշկի մոտ է վազում. «Պարոն բժիշկ, սա ի՞նչ բան է, ահափոք ցավեր ունեմ»: Այսինքն, մեք ուզում եք իմանալ, քե մեզ հետ ինչ է կատարվում: Կամ մի ուրիշ օրինակ, ասե՛ք՝ մի ընտանիք արվելին է փնտրում եւ, ահա, գտնում է: Տանտիրոհին ըրան ցույց է տալիս իր սեմյակը, որտեղ կա տաք եւ սառը ջուր, հեռուտացույց, եւ բացատրում է, որ շաքաթիկս մի օրը կարող է հանգստանալ: Արվելինն ասում է. «Դա շատ լավ է, բայց ես կուզեի իմանալ իմ աշխատավարձի չափը»:² Տանտիրոհին պատասխանում է. «Այդ մասին մեք դեռ կպայմանավորվե՛ք, սկզբում ես կուզեի տեսնել, քե ինչպես եք կատարում ձեր պարտականությունները»: Արվելինն առարկում է. «Ո՛չ, ո՛չ, ես այդպես համաձայն չեմ, ես կուզեի առաջին հերթին իմանալ, քե ինչքա՞ն եք դուք ինձ վճարելու»:

Ի՞նչ եք կարծում, ճի՞շտ է, արդոք, արվելիին: Իհարկե՛, ճիշտ է: Երբ մեք ընդունվում եք աշխատանքի, առաջին հերթին մեզ հետաքրքրում է մեր աշխատավարձի չափը: Մեք չե՛ք ուզում այս հարցում անորոշություն լինի: Վատն այն է, որ այդ անորոշության մեջ համակերպվում ենք Աստծու հետ մեր հարաբերություններում նույնպես:

Տարիներ առաջ Աուգբուրդ քաղաքի հրապարակի վրաններից մեկում ես մասնակցում էի մի ժողովի: Կազմա-

կերպիչների գլխում սի հիանալի սիտք էր ծագել. քամի որ շաբաբ երեկոյան քաղաքի բոլոր ռեստորաններում աշխուժութիւն է տիրում, հազարաւորը կազմակերպել էին կեզելիշերիւն: Այդ մասին նախօրոք չէր հայտարարուիլ, որովհետեւ կարող էին ներկայանալ նաեւ հետաքրքրատեղ քրիստոնյաները, ում ներկայութիւնը, քերեւ, ցանկալի չէր լինի: Իս՛ ըմբերները, ավտոներեմաներով շրջելով քաղաքի փողոցներով, հազարամեկ էին գլխարկին զվարճանքներին, մատուցողներին, բարոյագոյրի արջիկներին, որոնք բռուն զկարծութիւնները ինտ վերադառնում էին իրենց տները: Շատերը ակնհոռի ազդեցութեան տակ էին: Նրանցից մեկը, որը սի հաստիկ տղամարդ էր, նստել էր իմ դիմաց, գլխարկը՝ գլխին, ծիսախոտը՝ բերանին: Ես սկսեցի իմ ճառը: Երբ առաջին անգամ տվեցի Աստծու անունը, այդ հաստիկը բացահայնեց. «Բայց չէ՞ որ Աստիված գոյութիւն չունի»: Բոլորը ծիծաղեցին: Ես, դառնալով նրան, հարցրի. «Իսկ որք համոզուած եք դրանում»: Նա այնպէս քրեց ծոծրակը, որ գլխարկին ընկալ աչքերին, եւ վերջապէս պատասխանեց. «Այդ մասին ոչ մեկը հաստատա չգիտի»: Նայելով ուղիղ հաստիկի աչքերին՝ ես ծիծաղելով ասացի. «Այնուամենայնիվ, ես ստույգ գիտեմ»: Նա դարձալ ստարիւն. «Որտեղի՞ց գիտեք, որ Աստիված գոյութիւն ունի»: Բացատրեցի, որ իմացել եմ Հիսուսի սիրոյով: Հավաքվածները լռեցին: Ես հարցա ուրիցի քրիստոնյաներին. «Հավատա՞ւմ եք Աստծու գոյութեանը: Հանողուած եք, որ ձեր մեղքերը ներված են: Տիրը երբեմն գործի կիշի՞՞ ձեր մեղքերի մասին քե՞ որանց համար բարձր գին է վճարված»: Եվ ի՞նչ են ինձ պատասխանում. «Այդ, ես հոտով եմ»: Խնդրում եմ՝ ինձ հիշտ հասկացե՛ք, չէ՞ որ ծիծաղելի է, երբ քրիստոնյաները հեքանումների նման բավարարվում են անորոշութեանը ու չեն ուզում հատակեցնել իրենց հարաբերութիւնները Աստծու հետ: Եթե ես հիմա փողոցով քայլող ցանկացած անցորդի հարցնեմ. «Հավատա՞ւմ եք Աստծու գոյութեանը», նա ինձ կպատասխանի. «Այո՛, Աստիված, երեւի, գոյութիւն ունի»: Իսկ եթե ես շարունակեի. «Դոր պատկանո՞ւմ ես Աստծուն»: Նրանք, հավանաբար, ինձ կպատասխանեն. «Չգիտեմ»: Որքան էլ զարմանալի է՝ անորոշութեան մեջ են նույնիսկ պատահառելի ու պատկառածան մարդիկ:

Ահա թե վերջերս ինչ անախորժութիւնների մեջ ընկալ

իմ ընկերները մեկը: Նա ուսանող էր եւ դրան էր վստատալիւն արձակարդներին շինարարութեան վրա աշխատելով: Աշխատանքային ընկերները իմացել էին, որ նա ակետաբանելու համար ինչ-որ գումար է տրամադրել, եւ սկսել էին ծաղրել ու նախատել. «Է՛յ, դու է՛լ ես պատկելի Բուշի երիտասարդները»: «Այո՛»: «Եվ կիրակի օրերին եկեղեցի՞ ես հաճախում»: «Իհարկէ՛»: «Անեն կիրակի՞, ի՞նչ է, խեղդ բացել է՞ ես»: «Ո՛չ, դեռ շաբաթվա կեներին էլ Աստիվածաշունչն ենք ուսումնասիրում»: «Այո, դու, իրոք, խեղդ բացած մարդ ես»: Անեն կողմից նրան ծաղրել էին՝ ասելով, որ հոգեւորականները իմարացնում են մարդկանց, որ քրիստոնեութիւնը, երկու հազար տարվա պատմութիւն ունենալով հանդերձ, իրեն չի արդարացնում, որ Աստիվածաշունչը տուտ է եւ այլն: Մակայն, ինչպէս ասում են, նա փոխ ումեր ու հանքերութեան տարել էր անբողջ ծաղր ու ծանաղը: Երբ տրամեղը սի թիչ արդեն «փակիկել» էին, նա ասել էր. «Այո, եթե դուք քրիստոնեութեան մասին այդ կարծիքն եք, ուրեմն, ձեզանց ոչ մեկը եկեղեցու անցած չէ»: Հանկարծ շուրջ բոլորը լռութիւն է տիրել: Հետո սի մեծախառն մարդ առարկել է. «Դրանով ի՞նչ ես ուզում ասել: Ես նույնպէս հավատում եմ Տիր Աստծուն: Կարծում ես, թե սիրայն դո՞ւ ես քրիստոնյա: Ես էլ եմ քրիստոնյա, ես էլ եմ Աստծուն հավատում»: Հետո մյուսներն են սկսել այդ տուրով խոսել. «Եվ, ընդհանրապէս, այդ ի՞նչ բնափոխութեան ումեւ, ինչո՞ւ ես քեզ մեզանց ակելի բարձր դատում: Մեներ էլ ենք քրիստոնյա, մենք էլ ենք Աստծուն հավատում»: Բոլորը կտրով փոխել էին խոսելու տոնը ու սիւնայն բացականում էին. «Մենք էլ ենք Աստծուն հավատում, մենք էլ ենք քրիստոնյա»: Նրանց խարարկելուց հետո ընկերս հարցրել է. «Ուրեմն, ինչո՞ւ էիք ինձ ծաղրում»: Պատասխանել են. «Ա՛յդ, դու մեզ հիմար դրութեան մեջ ես գցում, քեզ հետ անհմար է խոսել»:

Հասկանո՞ւմ եք, պատկառելի շինարարները, որոնք քրոնաջան աշխատանքից հետո կարող են առանց դժվարութեան սի քանի շիշ գարեջուր ընկել, սկզբից մեծ արդունով ծաղրում են քրիստոնեութիւնը, հետո անմիջապէս փոխում իրենց մտածելակերպը. «Հապա, սպասի՛ր, բայց չէ՞ որ մենք էլ ենք քրիստոնյաներ»: Եվ սի՛ թե ասպեցուցիչ չէ, որ մարդիկ այսպիսի անորոշ վերաբերմունք ունեն Աստծու

նկատանամբ: Բաճկից պարզվում է, որ մենք եւ՝ հեթանոսներ ենք, եւ՝ քրիստոնյաներ: Մի՞թե ես ճիշտ չեմ: Ես համոզված եմ, որ ձեզանկից շատերը նույնպես գտնվում են այս անորոշ վիճակում:

2. Աստվածաշունչը խոսում է լուսավիայի համոզվածության մասին

Հնարավոր է՝ դուք հիմա զարմացած հարցնեք ինձ. «Պատվեի՞ր Բուշ, մի՞թե քրիստոնեական հավատը որեւէ ընդհանուր բան ունի համոզվածության հետ: ՉԻ՞ որ նրա մեջ որոշակի ոչինչ չկա, այլ ամեն բան տրվում է միայն հավատով»:

Վերջերս ինձ ես մեկ անգամ մի աքսիոնա հիշեցրին, որը շատ հաճախ եմ լսել իմ կյանքում. «Այն, որ երկու անգամ երկու հավասար է չորսի, մենք դա ստույգ գիտենք, իսկ քրիստոնեության մեջ, միեւնույն է, ստույգ ոչինչ չես կարող իմանալ, քանի որ ամեն ինչ հիմնվում է հավատի վրա»: Ի վերջո, մենք համզում ենք այն եզրակացության, որ քրիստոնեական ճշմարտության նկատմամբ ունեցած մեր բացակամությունը պետք դնենք ճանաչողի մեջ, պահե՞նք պահպանում եւ ուրեցիվենք անհավատության սկզբունքով: Շատերն են այսպես մտածում: Երբեմն ինձ ասում են. «Դուք, քրիստոնյաներդ, նույնիսկ ներքին միաբանություն չունեք, ձեր մեջ կան կաթոլիկներ, ազետարանականներ եւ այլն: Իսկ ազետարանականների մեջ կան յուրթրականներ, բարեմորոգիչներ...: Ո՞րն է դրանցից ճշմարիտը»:

Բարեկամներ, դա մեծ շփոթություն է: Պատասխանն այն հարցի, թե քրիստոնեությունը իրենից ի՞նչ է ներկայացնում, մենք կարող ենք իմանալ միայն Նոր Կտակարանից, որտեղ ամեն մի տողը գրված է լուսավիայի համոզվածությամբ: Ազատություն ինձ, որ դա այդպես չէ:

Այս է պատճառը, որ ինձ համար անհավանաբար է, թե ինչո՞ւ են քրիստոնյաները այսքան տարբերվում իրարից: Այստեղ բանը քրիստոնեության մեջ չէ: Ոչ: Որք Նոր Կտակարանը լի է լուսավիայի համոզվածությամբ: Ես հիմա ձեզ համառատակի կզարգաբանեմ. Նոր Կտակարանը լիովին հաստատում է, որ Աստված կենդանի է: Ո՛չ թե բարձրյալ մի

արարած, ոչ թե ինչ-որ տեսիլք, ոչ թե ճակատագիր, այլ Աստված՝ Հիսուս Քրիստոսի Հայրը, կենդանի է: Որտեղի՞ց մենք դա գիտենք: Նա բացահայտվել է Հիսուսի մեջ եւ հիմա մեզ ամեն ինչ պարզ է: Բացեք Աստվածաշունչի ցանկացած էջ եւ կտեսնեք, որ այնտեղ ամենեւին էլ կրոնական խնդիրներ չեն լուծվում, այլ հաստատվում է, որ Աստված կենդանի է, եւ որ Նա բացահայտվել է Հիսուսի մեջ: Իսկ առանց Աստծու ապրող մարդը՝ ապրում է անմտորեն, թյուրիմացությամբ ու ոչ ճիշտ կյանքով:

Այնտեղ նաեւ հատուկ ասվում է, որ Աստված, Որը կարող է ժողովուրդների ոչնչացնել եւ Որը պետք է դատի մարդկանց, անասնիման սիրով սիրում է ինձ: Ելո՞ւ մասին գրված է Հռոմեացիների թղթի ութերորդ գլխում. «... Ես վստահ եմ», - ուշադրություն դարձրե՞ք՝ «վստահ եմ, թե ոչ մահը, ոչ կյանքը... չի կարող մեզ բաժանել Աստծու այդ սիրուց, որ կա մեր Տեղ Քրիստոս Հիսուսով» (Հռոմ. 8:38): Աստծու սերը մեզ հայտնվել է Հիսուսի մեջ, մենք դա ոչ թե ենթադրում, այլ տեսնում ենք: Ինչպե՞ս է բացահայտվում Աստծու սերը: Աստված մեզ սիրել է Հիսուսի մեջ: Հիսուսի աշակերտները երգում են. «Փա՛ռք Աստծու տղո՞ր սիրուն, որ Քրիստոսով մեզ սիրեց»: Իսկ դուք որեւէ պատկերացում ունե՞ք այդ սիրո մասին:

Աստվածաշունչը մեզ հայտնում է նաեւ այն մարդկանց մասին, ովքեր համոզված են եղել, որ պատկանում են Աստծուն: 48-րդ սաղմոսում Դավիթն ասում է. «Աստված իմ անձը կիրիկի գերեզմանի ձեռքից, որովհետեւ Նա ընդունում է ինձ»: Այնտեղ գրված չէ, թե իույտով եմ, որ Աստված կիրիկի, այլ համոզվածությամբ ասվում է. «Աստված իմ անձը կիրիկի...»: Կամ՝ «Աստված մեզ ազատեց իսրայրի իշխանությունից, եւ տարավ Իր սիրելի Որդու Թագավորությունը»: Հիսուսի աշակերտները վերապիտիւել էին իրենց անձը, նրանք վերածնվել էին Հիսուսով, դրա համար էլ համոզված ասում էին. «Մենք գիտենք, որ մասից կյանք ենք անցել»: Իսկ դուք կարո՞ղ եք այդպես ասել: Կամ՝ «Նրա Հոգին վկայում է մեզ, որ մենք համարվում ենք Աստծու երեխաները»: Այդպես էլ գրված է՝ «համարվում ենք»:

Աստվածաշունչում ամեն ինչ պարզ է: Եվ որտեղի՞ց են մեր ժողովրդի մեջ հայտնվել այդ անմիտ խոսքերը. «Քրիստոնեության մեջ որոշակի ոչինչ չկա, այլ ամեն ինչ հիմն-

փում է հավատի վրա»: Այն, որ երկու անգամ երկու հավատար է չորսի, ես էլ գիտեմ, սակայն ստույգ գիտեմ նաև, որ Աստված կենդանի է: Իսկ այն մարդիկ, ովքեր ապաշխարել են, հաստատ գիտեն, որ իրենք Աստծու երեխաներ են:

Իսկ ինչու ես ձեզ հարցնում եմ: «Ասացեք խնդրեմ, ժամանակակից քրիստոնեության մեջ որտե՞ր կարելի է համոզիպել այդպիսի լուսափայլ համոզվածությամբ: Որտե՞ր: Սա նշանակում է, որ մենք զգալիորեն հեռացել ենք Աստվածաշնչից, ես մեզ անհրաժեշտ է նորից մտոենալ Նրան: Ես ձեզ կոչ եմ անում չթավարարվել քրիստոնեության մասնիկներով, քանի որ դա ոչ մի նշանակություն չունի: Իմաստուն մի միայն մաքրող աստվածաշնչյան քրիստոնեությունը: Միայն Աստվածաշնչի քրիստոնեությունը իսկական գին ունի: Համոզված լինել, որ Աստված կենդանի է, որ Նա ինձ շատ է սիրում, որ ես կարող եմ պատկանել Նրան. ահա թե ինչն է արժեքավորը: Մնացած բաները կարեւոր չեն:

Այդ լուսափայլ համոզվածության հոգեւոր երգերից մեկում ասվում է. «Աստված մեր վահանն է և ու մեր ապավենը, մեր ժայռն ու մեր ամրոցը: Նա արդար է, Նա մեզ խաղաղություն է տվել: Նա ներել է մեր մեղքերն ու անօրինությունները»: Կամ՝ «Ես գիտեմ, այո՛, ես գիտեմ, որ կենդանի է իմ Փրկիչը, որ Նա ինձ հավերժական կյանք է նվիրում»: Կամ՝ «Ես գիտեմ, թե Ում եմ հավատում, ինձ ոչ մի բան չի կարող բաժանել Բրիստոսից: Երբ Նա նորից կգա, այն օրը ինձ փրկություն կտա»:

Թույլ տվեք դա ձեզ բացատրել մի այլ տեսանկյունից: «Բրիստոնեական համոզվածություն»՝ նշանակում է ստույգ իմանալ, որ Աստված կենդանի է, եւ որ Հիսուսի մեջ Նրա բացահայտվելը ճշմարտություն է: Եթե նույնիսկ ամբողջ աշխարհը չընդունի, որ Հիսուսը մեզ հաշտեցնելու համար մեռավ եւ հարություն առավ, եւ Նրա նպատակը մեղավորներին փրկելն էր, միեւնոյն է, ոչինչ դրանից չի փոխվում: «Բրիստոնեական համոզվածություն»՝ նշանակում է, որ վերևում սակածը ընդունում եմ ամուր հավատով:

Եվ եթե նույնիսկ 10.000 պրոֆեսորներ փորձեն ինձ համոզել, որ Հիսուսը հարություն չի առել, ես նրանց այսպես կպատասխանեմ. «Հարգելիներդ, ես ստույգ գիտեմ, որ իմ Փրկիչը կենդանի է: Եթե անգամ ամբողջ աշխարհը դա ժխտի, իմ հավատը պիտի կանգուն մնա: «Ես գիտեմ, թե

Ում եմ հավատում»: Եվ եթե դուք իմ առջև դնեիք գիտական հերքումների մի ամբողջ կույտ, ես, միեւնոյնն է, այսպես կասեմ. «Ես այդ մասին ավելի լավ գիտեմ, ես համոզված եմ»:

Մի երեւի՝ բարեկամներ, ահա թե որքանով է որոշակի այն քրիստոնեական հավատը, որը մենք ստանում ենք Աստվածաշնչից:

3. Իսկ դուք դրանում համոզվա՞ծ եք

Իսկ ինչու ես ձեզ հարց եմ տալիս. «Դուք վերջնականապես համոզվե՞լ եք թե՞ դեռ ոչ»: Եթե ինչն էլ դուք ասեք. «Ես ինձ համարում եմ քրիստոնյա, բայց դեռ քրիստոնյա չեմ, քանի որ շատ բաներ ինձ անհավանալի են մնում», ապա ես կիմանամ, որ իմ ճառերը անտեղի չէ:

Մի ժամանակ Հոլանդիայում, երբ դասախոսությունից հետո հանգստանում էի իմ առանձնատնակում, գիշերվա ժամը երկուսին բախեցին դուռս: Երբ դուռը բացեցի, տեսա ննջազգեստների կանգնած մի խումբ երիտասարդների: «Ի՞նչ եք ուզում», - հարցրի նրանց: Մեկը պատասխանեց. «Մենք մեզ քրիստոնյա էինք համարում, սակայն հանկարծ նկատեցինք, որ դեռ դրան չենք հասել»: Եվ դա նրանց մեջ մի այնպիսի տագնապ էր առաջացրել, որ որոշել էին գիշերվա ժամը երկուսին պարզաբանել՝ չալսաելով լուսաբացին: Անշափ գնահատելի է, երբ մենք գիտակցում ենք, որ մեր քրիստոնեական իրավիճակը դեռևս շատ հեռու է այն ճշմարտությունից, որը մեզ ներկայացնում է Աստվածաշունչը:

Անգլիացի նշանավոր ավետարանիչ Սպեյթսենը այդ մասին այսպես է ասել. «Հավատը մարդու վեցերորդ զգայարանն է»: Գիտե՞ք, որ, բնականում, մենք միայն ինձ կարեւոր գզայարաններ ունենք. տեսողություն, լսողություն, զգացողություն, համ, իտառություն: Այս ինձ զգայարանները շնորհիվ մենք կարող ենք ճանաչել մեզ շրջապատող աշխարհը: Այն մարդը, ով ապրում է միայն զգայարանների օգնությամբ, ինքնընտրիմբյան հարցնում է. «Իսկ ո՞ր է Աստված, եւ Նրան չեմ տեսնում: Ես Հիսուսին էլ չեմ տեսնում: Ես Նրան չեմ հավատում»: Սակայն, երբ Աստված մեզ լուսավորում է Մուրը Հոգով, մենք ստանում ենք մեր վե-

ցերտորդ զգայալարանը: Այդ ժանանակ մենք կարողանում ենք ոչ միայն տեսնել, լսել, զգալ, ճանաչել համն ու հոտը, այլևս սկսում ենք ճանաչել մի նոր աշխարհ: Աստվածաշունչն ասում է. «Կյանքը հավիտենական է, եթե մարդիկ ճանաչում են Քեզ՝ միակ ճշմարիտ Աստծուն եւ Նրան, Ուժ Դու որպրդել ես՝ Տեր Հիսուս Քրիստոսին»: Նրանց հմարավոր է ճանաչել միայն վեցերորդ զգայալարանով:

Վերջերս Էստեն քաղաքում մի խոշոր ձեռնարկության գլխավոր տնօրեննի մտա էի գնացել: Նրա նստավայրը գտնվում էր մի բարձրահարկ շենքի ամենավերևի հարկում, որտեղից կարելի էր տեսնել քաղաքի կեսը: Անցնելով մի քանի ընդունարանների միջով՝ վերջապես հասա նրան: Սիւս նստած եմ նրան դեմ դիմաց: Արագ ավարտելով ձեռքի կիսատ գործը՝ նա դարձավ դեպի ինձ. «Ինձ համար շատ հետաքրքիր է ընդունել հոգեւոր հովիվի: Պատերազմից հետո երբեք ես էլ եմ հաճախել կրոնական դասերի, բայց իմ մեջ այնպիսի տպավորություն է ստեղծվել...»: «Շարունակեք, շարունակեք», - փորձեցի օգնել նրան, «Ես ամոր գյարդեր ունեմ»: Նա շարունակեց, «Իմ մեջ այնպիսի տպավորություն է ստեղծվել, որ քրիստոնեությունը այնքան էլ պարզ բան չէ: Մեզ համար դասախոսություններ էին կարդում՝ «Քրիստոսյան եւ Էկոնովիկան», «Քրիստոսյան եւ զինուժը», «Քրիստոսյան եւ զինաթափումը», «Քրիստոսյան եւ փողը», «Քրիստոսյան եւ նրա եկեղեցին»: Սակայն դեռ ոչ մեկը ինձ չի պատմել, թե, այնուամենայնիվ, ի՞նչ է իրենից է ներկայացնում քրիստոսյան: Դրա պատասխանը, հավանաբար, իրենք՝ քրիստոսյաներն էլ չգիտեն: Դուք չէիք կարող պատասխանել այս հարցին»: Եվ, ահա, ես նստած եմ այդ շքեղ առանձնասենյակում ու հանգիստ ընդունում եմ գլխավոր տնօրենի մարտահրավերը: «Այո՛, կսրող եմ,- պատասխանեցի, - ես կփորձեմ պարզ ու համառոտ պատասխանել Ձեր հարցին, այստեղ ամհամակամալի ոչին չկա»: Նա բարձր ծիծաղելով՝ ասաց, «Մեկն ասում է՝ քրիստոսյան նա է, ով ոստիկանության հետ գործ չի ունենում, մյուսներն ասում են, թե քրիստոսյան նա է, ում կնքում եւ մեռնելուց հետո քաղում են եկեղեցում...»: Ես այստեղ չդիմացա, «Պարո՛ն գլխավոր տնօրեն, ես ձեզ կպատմեմ, թե ով է իսկական քրիստոսյան, միայն թե Դուք արժանի ամոր նստեք: Իսկական քրիստոսյան այն մարդն է, ով անբույ

սրտով կարող է սանել. «Ես հավատում եմ, որ Հիսուս Քրիստոսը ճշմարիտ Աստված է, որ Նա ծնվել է հավիտենականության Հորից, որ Նա կատարյալ (ճշմարիտ) Մարդ է՝ կրյս Մարիամից ծնված, որ Նա է իմ միակ Փրկիչը, Տերը, Որը ինձ համար արյան գին է վճարել, որպեսզի ես փրկվեմ մահից, Որը ինձ՝ մեռած մեղավորիս համար չի խնայել Իրեն: Պարո՛ն գլխավոր տնօրեն, Ձեզ՝ մեռած մեղավորի համար նույնպես»: Հաստատելով իմ ասածը՝ նա գլխով համաձայնություն նշան արեց: Ես շարունակեցի. «Պարո՛ն գլխավոր տնօրեն, ոչ թե ոսկով ու արծաթով, այլ Իր սուրբ, բանկազին արյունով, Իր բազմաթիվ, տանջանքներով եւ մահով, որպեսզի ես Նրան պատկանեմ: Լսո՞՞մ եք: Նա, ով կարող է սանել, «Ես պատկանում եմ Հիսուսին, Նա Իր արյանք ինձ գնել է մեղքից, մահից, դժոխքից, եւ ես դրանում համոզված եմ», նա էլ համարվում է իսկական քրիստոսյա, պարո՛ն գլխավոր տնօրեն»: Մի պահ առանձնասենյակում լռություն տիրեց, հետո նա հարցրեց, «Ինչպե՞ս կարող եմ դրան հասնել, ի՞նչ պետք է անել դրա համար»: Ես պատասխանեցի. «Լսե՛ք, ես հենց նոր Ձեր քարոտարարուհուց իմացա, որ Դուք պատրաստվում եք արձակուրդ գնալ: Այսօր երեք ճաշից հետո ես Ձեզ համար Նոր Կտակարան կուրսով եմ: Այն կվերցնեք Ձեզ հետ եւ ամեն օր Հովհաննեսի Ավետարանից մի հատված կկարդաք: Աղոթելով՝ Դուք կսրող եք հասնել դրան»:

Խճորում եմ՝ ինձ ճիշտ հասկանաք: Քրիստոնեությունը (ինչպես ներկայացված է Նոր Կտակարանում), հաստատ համոզված է, որ անաչառ ճշմարտությունները իրականում ճշմարիտ են համարվում, եւ ես կարող եմ փրկություն ստանալ միայն անուսան հավատի միջոցով: Դուք հավատո՞ւմ եք: Օրինակ, ես չէի կարող սարել, եթե համոզված չլինեի, որ Հիսուսը ընդունել է ինձ:

Սի անգամ մի երիտասարդի հարցրի. «Դու սիրո՞ւմ ես Հիսուսին»: «Այո՞», - պատասխանեց նա: «Իսկ դու համոզված եմ ես, որ Նա ընդունել է թեզ: Դու հավատո՞ւմ ես, որ Նրա սեփականությունն ես»: «Ես դրանում համոզված չեմ, դրա համար դեռ շատ պիտի պայքարեմ», - ասաց նա: «Լսի՛ր, - ասում եմ, - ես այրվել եմ կարող սարել, ես պետք է անհասպար ինձնայի՛ արդյո՞ք Տերը ինձ ընդունել է թե՞ ոչ»: Ախ, որոք, կամպածամիտ քրիստոսյաներ, դու՛ք, որ

շատ լավ գիտեք ձեր ֆինանսական իրավիճակը, Աստծու մասին ոչինչ չգիտեք: Դուք ամենի՜ն էլ քրիստոնյաներ չեք: Նոր Կտակարանի համաձայն՝ քրիստոնյաներ համարվում են նրանք, ովքեր կարողանում են ասել. «Ես հավատում եմ, որ Քրիստոսը դարձել է իմ Տերը»:

Այս բեմադրվելու երկուսն էլ սխալ են: Գեներալ Ֆոն Ֆիրսկը պատմել է, որ գորաշարժի ժամանակ, ձիու վրա նստած անտառով անցնելիս՝ ծառի ճյուղը պատռել է զինվորակից համազգեստը: Գեներալի համար այդպես մնալն անվայել բան էր, եւ դեռ գյուղ չհասած, հանդիպելով մի քանի զինվորների՝ նա կանգնեցրել է ձիւն ու հարցրել. «Ձեր մեջ դերձակ կա՞»: Նրանցից մեկը մտա է վազել ու գեհուցել. «Ճիշտ այդպես, պարոն գեներալ, ես եմ Գերձակը»: Գեներալը նրան հրամայում է. «Դե որ այդպես է, եկեք իմ բնակարանը եւ կարեք իմ համազգեստը»: Սակայն, զինվորը պատահաբար է. «Ես չեմ կարող կատարել Ձեր հրամանը»: Գեներալը բարկանում է. «Ինչո՞ւ, չէ՞ որ դերձակ եք»: Ձիւն-փորը պատահաբար է. «Ներեցե՛ք, պարոն գեներալ, իմ ազգանունն է Գերձակ, սակայն ինքս դերձակ չեմ»: Այս պատմությունը վերջացնելուց հետո՝ գեներալ Ֆոն Ֆիրսկը ժպտալով շարունակում է. «Ճիշտ այդպես էլ կարելի է ասել շատ քրիստոնյաների մասին: Հարցաբերիչի հետո՞ «կրոն» բառի տակ հաճախ կարելի է կարդալ «քրիստոնյա, ավետարանիչ»: Իսկ ավելի ճիշտ չէ՞ր լինի այսպես գրել. «Քրիստոնյա եմ անվանվում, բայց քրիստոնյա չեմ»: Ա՛խ, ինչքան վտանգավոր ու խոճալի տեսարան է դա: Ի վերջո՝ սա վկայությունն է այն բանի, որ մարդը փրկված չէ:

4. Ինչպե՞ս հասնել համոզվածության

Եթե այս հարցը ուղղեք ինձ, ես կպատասխանեմ. «Այդ մասին շատ բան կարելի է ասել, սակայն ավելի լավ է՝ դիմել Աստծուն: Մկենք անդրերիստ Աստվածաշունչ կարդալ, գոնե՝ օրական քառորդ ժամ: Բայց այստեղ ես մի կարեւոր բան պիտի ասեմ. հավատքի համոզվածության ճանապարհը անցնում է ո՛չ թե բանականության, այլ խոճի միջով»:

Երբ մարդկանց հետ գրուցում եմ քրիստոնեության բե-

մայով, հաճախ եմ լսում. «Այնուամենայնիվ, պատվելի՛, ես չեմ կարողանում հավատալ, Աստվածաշնչում այնքան իրար հակառակ բաներ կան: Օրինակ, գրված է, որ Ադամն ու Եվան երկու տղա են ունեցել՝ Կայենն ու Աբելը: Կայենն Աբելին սպանել է, գնացել այլ երկիր եւ այնտեղ իր համար կին գտել: Եթե նրանք առաջին մարդկանցից էին, ապա ինչպե՞ս Կայենին հաջողվեց գտնել իր երկրորդ կեանքը»: Այս պատմության միջոցով մեր գերմանացիները փորձում են խուսափել Աստծուց: Ես գարմանքով պատասխանում եմ. «Ի՞նչ հակասություն, ի՞նչ բան, հետաքրքիր պատմություններ եք պատմում: Միս ձեզ Աստվածաշունչը: Յույց տվեք՝ դուե՞ր է գրված, թե Կայենը գնաց մի այլ երկիր եւ այնտեղ իր համար կին գտավ»: Մոլորաբար նրանք կարծում են, իսկ ես շարունակում եմ. «Եթե դուք հերքում եք Աստվածաշունչը, Որի շնորհիվ հազարավոր մարդիկ հավատքի են եկել, դուք ձեզ համարում եք խելացի մարդ, ողբ իբր ավելի լավ է ուսումնասիրել Աստվածաշունչը, ցո՛ւց տվեք, խնդրում եմ, այդ տեղը»: Նրանք ոչինչ չեն կարողանում պատասխանել: Հետո ես վերցնում եմ գիրքը, բացում այդ էջը, իսկ այնտեղ բոլորովին այլ բան է գրված. «Կայենը հեռացավ Աստծու մոտից եւ բնակվեց Նայիդ երկրում՝ Եդեմի դիմաց: Կայենը պտղից իր կնոջ հետ, սա իրիացավ ու ծնեց Ենոքին» (Ճճ. 4.16-17): Նա գնաց ուրիշ երկիր կնոջ հետ միասին: Ո՞վ է եղել նրա կինը: Նրանց մի քիչ առաջ գրված է, որ Ադամն ու Եվան ունեցել են շատ որդիներ եւ դուստրեր: Նշանակում է նա եղել է Կայենի բուրբուրից մեկը: Աստվածաշնչում կարդում ենք նաեւ, որ Աստծու կամքով մարդկության բոլոր ժառանգները ծագել են մեկ սերունդից: Այդ պատճառով էլ առաջներում ամուսնությունները եղել են ներդրումաներ, ինչը, սակայն, ավելի ուշ Աստված արգելել է: Այստեղ պա՞րզ է ամեն ինչ: Կարծում եմ ապացուցեցի, որ այսպիսի հարցերը բոլորովին անիմաստ են եւ անտեղի:

Ի՞նչ եք կարծում, հավատա՞ց այդ մարդը: Ո՛չ: Այդ մասին խոսք անգամ լինել չի կարող: Ընդհակառակը, նա իսկույն մի նոր հարց տվեց. «Պատկե՛վի՛, դե՛, ասե՛ք, խնդրե՛մ...»: Եւ այդպես շարունակ: Պարզվում է, որ եթե ես նրա բոլոր հարցերին էլ պատասխանեի, նա, այնուամենայնիվ, պիտի մնար նույն անհավատը: Այսպիսով, հավատի համոզվածության հասնելու գոյն ոչ թե բանականության, այլ սեփական խոճի միջոցով:

Էստեճում ինձանց առաջ աշխատել է հոգեւոր հովիւի եւ ավետարանիչ Յովիան Դամնանը: Մի անգամ գրան է մտեճում մի երիտասարդ ու դարձյալ հարցնում Կայեճի եւ գրա կնոջ մասին: Դամնանը գրան պատասխանում է. «Երիտասարդ, Հիտու Քրիստոսը այսպիսի քանասրկու հարցերի համար չէ, որ աշխարհ է եկել: Նա մեկ նպատակ ուճեղ՝ փրկել մեղաւորներին: Այնպես որ, երբ զգաք, որ մեղաւոր եք Աստու առաջ, նորից համեցեք ինձ մտո»: Այն մարդ, ուճ տանցում է սեւիական խորճը, հասկանում է, որ իրեն Փրկիչ է հարկաւոր, նա կարող է Հիտուսին հաւատալ: Ակելի ուշ անպայման երեւան կգան նաեւ գիտելիքները:

Մի անգամ ինձ հետ մի դեպք պատահեց, որի մասին հիմա կպատմեմ: Ես այցելել էի մի հիվանդաւանցում, որտեղ վեց տղամարդ էին պառկաճ: Ինձ տեսներով գրանք ուրախ քացաւանչեցին. «Ախ, պատվելի, ինչ լալ է, որ եկաք: Մեճք այնքան հարցեր ունեճք Ձեզ տարո»: Ես հասկացա, որ գրանք ինձ համար քաւարդ եմ պատրաստել: Նրանցից մեկը հարցրեց. «Ասացեք խնորեմ, Դուք հաւատաճ՞ եք, որ Աստուաճ ամենաւարդ է»: «Այո, իհարկեմ»- պատասխանեցի ես: «Այդ ժամանակ հարց է ծագում. կարոճ է Նա այնպիսի մի ծանր քար ստեղծել, որ Ինքն էլ չկարողանա քարճրոսցնել»: Դուք հասկանոճւճ եք այս հարցի իմաստը: Եթե ես պատասխանեի «այո» կամ «ոչ», ապա երկու դեպքում էլ Աստուաճ ամենաւարդ չէր լինելու: Մի պահ մտածեցի՝ պարզաքանեճ լ գրա հարցի իմաստը քեճ ոչ: Մակայն այդ երիտասարդը, ինձ հասկանարու համար քաւական տգետ քուաց ինձ, եւ ես իճ հերթին հարցրի. «Երիտասարդ, քո՛ւլ տվեք Ձեզ հարցնել. Ձեր տվաճ հարցի պատճառով երբեմիցե անքնություն ունեցեճ լ եք»: «Անքնություն: Ո՛չ»: Ես ասացի. «Այ, տեսնոճ՞ եք, ես պետք է ինձայեմ իճ ուճիրը եւ պատասխանեմ միայն այն հարցերին, որոնց պատճառով մարդիկ անքնություն են ունեճում: Իսկ հիմա քարի երեք ու ճիշտն ասացեք, ի՛նչն է Ձեր անքնության քուն պատճառը»: Նա պատասխանեց. «Ընկերուհիս: Նա հորի է, իսկ մեճք դեռ չեճք կարող ամուսնանալ»: «Ահա քե ինչո՛ւ եք Դուք անքնությամբ տառապում, դե, եկեք, ուրեմն, այդ մասին էլ խոսեճք»,- ասացի գրան: «Իսկ մի՛թե այդ հարցը ինչ-որ կապ ուճի քրիստոնեւության հետ», -զարմացաւ նա: «Այո՛, իհարկեմ: Այն ծանր քարը, իրոք, քրիստոնեւության

հետ ոչ մի կապ չուի, իսկ Ձեր ընկերուիս գործը աննիշտ կան կապ ուճի: Տեսնոճ՞ եք՝ այդ աղջկան խաբելով՝ Դուք մեղանչել եք. խախտել եք Աստու պատվիրաճը, եւ հիմա մտածում եք, քե ինչպես դուրս գաք այդ իրավիճակից: Ձեզ կարելի է օգնել միայն այն ժամանակ, երբ Դուք դիմեք կենդանի Աստուին ու խոստովանեք Ձեր մեղքերը: Այն ժամանակ Փրկիչը կօգնի Ձեզ»: Երիտասարդը սկզբից ուշադիր լսում էր ինձ ու հանկարծ հասկացաւ, որ Հիտուը հետաքրքրուճ է իր խոճուկ: Հիտուը գրան կարող է օգնել, Նա մեր կյանքի բոլոր դժկար վիճակները հարթոճ է:

Դուք ինձ ճիշտ եք հասկանում: Այն, ինչի նա ճգտում էր հասնել իր խեքով, անմիտ գույցի վերածվեց, իսկ երբ արդեն հարցը վերաբերուճ էր խոճին, այստեղ հանկարծ նա լուսաւորուեց, հասկանոճ՞ եք: Մեճք գալիս եճք փրկության համոզուճության այն աստիճանին, որ լսելով մեր սեւիական խոճի ճայեղ՝ խոստովանում եճք մեր մեղքերը: Մեճք կարող եճք տեսնել Հիտուսին Գորգոքայի խաչին գաճնվաճ եւ նույնիսկ լսել Նրա խոսքերը. «Քեզ ներկում են քո մեղքերը»: Իսկ հետո համոզուճ եճք, որ Նա ընդունել է մեզ: Այս ճանապարհը անցնում եճք ոչ քե մեր քանականության, այլ մեր սեւիական խոճի շնորհիվ:

Եվ այսպեւ, եթե ուզում ես համոզուճ լինել փրկության մեջ, հարկաւոր է, այսպեւ ասաճ, որոսի դիմել: Շատ եկերեցիներում պատուհանների ապակիները գույզգույզ են ներկուճ: Եթե մեճք նայում եճք դրսի կողմից, քիւում է՝ դրանք սու են, եւ հագով են նշմարուճ գույները: Մակայն երբ մտնում եճք եկեղեցի, ներսից տեսում եճք գրանց վառ գույները: Ճիշտ այսպիսին է քրիստոնեւությունը. երբ մեճք կողքից դիտում եճք, ոչինչ չեճք հասկանում, ամեն ինչ խավար է քիւում: Իսկ երբ դիսկի եճք դիմում, ծանոքանում եճք Հիտուսի հետ, ապա ամեն ինչ պարզ երեւում է: Մեճք պետք է վստահեճք Հիտուսին, որպեսզի ամեն ինչ պարզ դառնա մեզ համար: Որպեսզի քրիստոնեւությունը իր ողջ ծաւակարով մեզ հասկանալի լինի, հարկաւոր է միայն մի քալ անել:

Մի անգամ, երբ Տեր Հիտուը քարոզում էր հազարաւոր մարդկանց, միանգամայն անապասեկի հետեւալ խոսքերն ասաց. «Այնպիսին, ինչպիսին դուք կաք, Աստու Թագաւորություն չեք կարող մտնել: Դուք պետք է վերադիմ ծնունդ առնեք: Ձեր բնությունից նույնիսկ ամենապաղ պիտանի չէ

Լստծու Թագավորության համար»։ Այս խոսքերից հետո մի քանի տղամարդ հեռանում են՝ Հիսուսի ճաշը չափից ավելի դաժան համարելով։ Նրանց հետևում են նաև կսուսանք չէին ուզում լսել Հիսուսին։ Մտնում են միայն Հիսուսի տասներկու հավատարիմ աշակերտները։ Ես դա շատ լավ եմ պատկերացնում։ Ես նույնպես շատ վատ կզգայի, եթե իմ քարոզելու ժամանակ ունեցողները լքեն դահլիճը։ Եթե ես Տեր Հիսուսը լինեի, աշակերտներին կասեի. «Ա՛խ, գո՛նե դուք մնացեք ինձ հետ, չէ՞ որ դուք իմ ընկերներն եք, մի՛ լքեք ինձ»։ Սակայն Հիսուսը այդպես չի վարվում։ Գիտե՞ք, թե ինչ է ասում Նա Իր աշակերտներին։ «Եթե ցանկանում եք, որք էլ կարող եք գնալ»։ Որովհետև Լստծու Թագավորությունը այն եզակի Թագավորությունն է, որտեղ ուտղիվաններ գոյություն չունեն, եւ ոչ ոք ոչ մեկի ոչինչ չի ստիպում։ Այն համարվում է բոլոր Թագավորություններից ամենահամարվողը։ «Դուք էլ կարող եք գնալ, խնդրեմ», ասել է Հիսուսը Իր աշակերտներին։ Եվ աշակերտներն էլ կարող էին գնալ։ Նրանք ուզում էին գնալ։ Եթե հեռացել էր մտա վեց հազար մարդ, մտանք էլ կարող էին գնալու ցանկություն ունենալ, մանավանդ երբ Հիսուսը Ինքն էր ասել. «Դուք էլ կարող եք գնալ, խնդրեմ»։ Նա աշակերտներին ընտրելու ազատություն էր տվել. «Խնդրեմ, դուք նույնպես կարող եք ընկել կործանում գնալ, արե՛ք, ինչպես ինքներդ եք ցանկանում»։ Սակայն այստեղ Պետրոս առաքյալը մտածում է. «Ու՞ր, ու՞ր գնալ, ապրել մեղքերի ու կեղտերի մե՞ջ եւ ի վերջո հայտնվել դժոխքի դռների առջևու՞մ։ Չէ, իմաստ չունի այստեղից հեռանալը»։ Համկարծ մտա հայացքը կանգ է առնում Հիսուսի աչքերին, եւ սլաք է դառնում, որ իմաստ կա միայն մեկ եզակի կյանքի մեջ՝ ապրել Հիսուսի հետ։ Նա ասում է. «Տե՛ր, ո՞ւմ մտա պիտի գնանք։ Դու հավիտենական կյանքի խոսքեր ունես։ Եվ մենք հավատացինք եւ ճանաչեցինք, որ դու ես Քրիստոսսդ՝ Լստծու Որդին» (Հովհ. 6. 69-70)։

Միոելի՛ քարեկաններ, ասեա այսպես եմ հասնում համոզվածությամբ։ Փորձարկելով մեր կյանքի քաղցամաթիկ ճանապարհները, մենք հանգում ենք այն եզրակացության, որ Հիսուսը մեր փրկության միակ Լիդյորն է։ Ես այնքան շատ կցանկանայի, որ դուք նույնպես զայիք այդ եզրակացու-

թյան. «Մենք ճանաչեցինք ու համոզվեցինք, որ Քրիստոսը կենդանի Լստծու Որդին է»։

Վերջում ես կուզեի մի քանի խոսք ասել նրանց, ովքեր հավատի առաջին քայլերն են անում։ Նրանց, ովքեր իրենց սիրող Հիսուսին են հանձնել, բայց, այնուամենայնիվ, փրկության մեջ համոզված չեն եւ չգիտեն, թե ինչպես հասնել դրան, քանի որ նախկինում գործած իրենց մեղքերը անթիվ ու անհամար են։ Այդ հոգիներին, որոնք լըջորեն ընդունել են փրկության լույղ, ես կուզեի ասել. «Մի՛ թե դուք կարծում եք, թե փրկության մեջ կարելի է համոզված լինել միայն կատարյալ անմեղ լինելու դեպքում։ Հիսուս Քրիստոսի անմեղ արյունը մինչեւ մեր վերջին օրը, նույնիսկ վերջին շունչը հարկավոր է մեզ՝ մեր մեղքերին թողություն տալու համար»։

Անտառի որդու պատմությունը ճեզ արդեն ծանոթ է։ Տուն վերադառնալով՝ որդին ասաց. «Հայր, ես մեղավոր եմ»։ Եվ հայրը գոհությամբ ընդունեց նրան։ Իսկ պատկերացրեք, թե այդ նույն անտառի որդին հաջորդ առավոտյան պատահաբար ապակե քաժակը ձեռքից վայր ցցելու ջարդեր։ Դե՛, գուցե, թե նա իր խոզերի մտա հետ էր վարժվել տնական կյանքից։ Լսենք թե քաժակը ջարդերու պահին նա, իրենից անկախ, հայտնում է. Ի՞նչ եք կարծում, արդո՞ք հայրը որդուն դուրս կվիճեր տնից՝ գռալով. «Հեռացի՛ր, կորի՛ր աչքիցս, մողից վերադարձի՛ր քո խոզերի մտա»։ Ի՞նչ եք կարծում, կարո՞ղ էր հայրը այդպես վարվել։ Ընդհակառակը, նա կասեր. «Ով ընդունված է, նա ընդունված է»։ Եվ հետո կբացատրեր. «Որդի՛ս, աշխատիր այլևս նման քաներ չանել։ Նրանից հետո քաժակների հետ զգույշ կլինես, շիայ-հոյես եւ ընդհանրապես կամաց-կամաց ընտելացիր մեր տան սովորություններին»։ Նա ոչ մի դեպքում որդուն չէր վիճեր հայրական տնից։

Իսկ հիմա, ուշադրություն. երբ մարդը հավատով ընդունում է Հիսուսին, շատ շուտ համոզվում է, որ իր հին բնությունը դեռևս գործում է իր մեջ։ Դեռևս պարտություններ են ճկատվում։ Նման դեպքերում հուսահատության մի՛ մատնվե՛ք, այլ ծնկի եկե՛ք ու այսպես արթո՛ք. «Տե՛ր իմ, շնորհակալ եմ Բեզամից, որ դեռևս Բեզ եմ պատկանում»։

Դուք հասկանո՞ւմ եք ինձ։ Փրկված լինելու համոզվածություն ունենալու դեպքում ես ստույգ գիտեմ, որ տուն եմ վերադարձել՝ ոչ թե որպես տնվոր, այլ որպես իմնական

(Հայտն. 13. 1)Նրա լայնադժակ բերանը հայտնում էր Աստծուն»։ Ինչպե՞ս ընկալել այդ վտեմ հերպարաֆը։ Ծովը մարդկությունն է։ Ով երբեմիցե եղել է ծովակիմ, գիտի, որ այն երբեք հանգիստ չի լինում։ Այդպես, ասիս, մարդկությունը շարունակ արեկրծություն մեջ է։ Մարդկության խորքերից դուրս է գալու աշխարհի վերջին «փրկիչը»։ Վերջին տասնամյակներում բազմաթիվ քաղաքական գործիչներ են հանդես եկել աշխարհի փրկիչի դերում։ Նրանք բոլորն էլ ժողովրդական ծագում են ունեցել, ինչպես կորպիկացի Նասյունին, եփրեյտոր Արոլի չիտերը եւ այլք։ Նրանք համարվում են հակաքրիստոսի նախակարգապետները, ու մարդիկ նրանցից յուրաքանչյուրի համար ասում էին. «Նա մեր շարքերից է»։ Իմ Փրկիչը, սակայն, չիտուս Քրիստոսը ոչ թե ժողովրդի շարքերից էր, այլ Աստծու աշխարհից։ Նա կենդանի Աստծու Որդին է։

Հակաքրիստոսը գազան է։ Ի՞նչ է սա նշանակում։ Մարդու մասին Աստվածաշնչում գրված է. «Եվ Աստված մարդուն ստեղծեց Իր պատկերով» (Ծն. 1. 27)։ Ինչքան ես մտնեմ ու եմ Աստծուն, ավելի մարդկային եմ դառնում։ Ինչքան մարդը արհամարհում է Աստծուն, այնքան գազանանում է։ Քրիստոնեության ոլիերին թշնամի Նիցեն ասել է. «Անհնազանդի մարդը շիկանի սատանան է»։ Նա հասկանում էր, որ հակաքրիստոսը պետք է հերքի Աստծուն ու դրա համար էլ միանգամայն արդարացիորեն պետք է գազան կոչվի։

Ի՞նչ է նշանակում բազմազվառանի գազան։ Դա նշանակում է, որ նա հիմար չէ, «առյուծի բերան» ունի ու կարող է պրոպագանդել ամբողջ աշխարհում։ Այս ամենի մասին մենք լսել ենք ամենատարբեր ամբիոններից։ Ես արդեն պատկերացում եմ, թե հակաքրիստոսի հայտնությանը ինչպես է աշխարհը լցվում անմիտ պրոպագանդայով։ Հակաքրիստոսը հաջողություն պետք է ունենա, իսկ մարդը մի վերջին անգամ պիտի փորճի փրկել աշխարհը առանց ճշմարիտ Փրկչի՝ չիտուս Քրիստոսի։ Պետք է փորճեն մարդուն փրկել առանց մեղքերին բողոքում տալու եւ առանց սպառնալարության։

Հակաքրիստոսը կառուցելու է համաշխարհային միափորված պետություն եւ լուծելու է քաղաքական բոլոր պրոբլեմները։ Յուրաքանչյուր անձ կստանա մթերային կտրոն։

Պիտի լուծվեն նաեւ կրոնի պրոբլեմները, ու հակաքրիստոսը պետք է ասի. «Երկրպագե՛ք ինձ, ես եմ աշխարհի փրկիչը»։ Մեր ժամանակը շտապում է այսպիսի վերջաբանի, ու սա սիսակոր է։ Այդ շրջանում ամբողջ աշխարհը պիտի պատկանի հակաքրիստոսին, բացի ճշմարիտ քրիստոնյաներից, որոնք պետք է բացականեն. «Մենք թեզ չենք երկրպագի, մենք երկրպագելու ենք միակ Փրկչին՝ չիտուս Քրիստոսին»։ Եվ կսկսվեն սիսակոր հալածանքները։

Մրամից 150 տարի առաջ նշանակիոր մեկնաբան Աուրբերլենը գրել է. «Այս ամենը դեռ մեզ հասկանալի չէ, սակայն կգա մի ժամանակ, երբ ամենից պարզ կլինի»։ Իսկ մեզ արդեն հասկանալի է։ Արդեն կան պետություններ, որտեղ մարդիկ ոչ բնակվելու տեղ ունեն, ոչ հացի կտրոններ եւ ոչ էլ աշխատանքային գրքույկներ։ Նրանք թող հավատան՝ ում կուզեն, միայն թե ոչ հայրենիք պիտի ունենան, ոչ էլ իրավունքներ։

Երբ ես այսպիսի բաներ եմ լսում, ողորակի ցնցվում եմ՝ մտածելով, որ դեռ կան մարդիկ, ովքեր կարծում են, թե Աստվածաշունչը հնացել է։ Ոչ թե Աստվածաշունչն է հնացել, այլ մեր աշխարհայացքը։ Իսկ Աստվածաշունչը մնում է մեր սպազայի ուղեցույցը։

Հակաքրիստոսը կարող է մարդկանց ամեն բան թույլատրել, բացի ճշմարիտ Փրկչին՝ չիտուս Քրիստոսին երկրպագելուց։ Այդ պատճառով քրիստոնյաների հալածանքները ավելի լայն տարածում են գտնելու։

Երբ ես մի անգամ այս ամենը պատմեցի իմ երեխաներին, փոքրիկ արջիկս լացակունած դիմեց ինձ. «Մի՞թե դա կարող է կատարվել ամեն օր»։ Ես պատասխանեցի. «Այո՛, կարող է»։ Արջիկս, հուզվելով, ասաց. «Իսկ եթե ես չկարողանամ հավատարիմ մնալ իմ Փրկչին, Ի՞նչ կլինի»։ Ես նրան ասացի. «Դա սարսափելի կլինի։ Քեզ հարկավոր է հենց այսօրվանից հատատակել հավատի մեջ»։ Եթե դա համկարծ տեղի ունենա վաղը, ապա դուք այնուս չեք կարող գտնել չիտուսին։ Այն ժամանակ պաշտամունքներ չեն լինի, իսկ եկեղեցիների գանձերը կճուրեն՝ հակաքրիստոսին արձաններ կանգնեցնելու նպատակով։ Եկեղեցիները կվերածվեն բանգարանների, որոնց պատերին կհիսկցվեն հակաքրիստոսի մանկության նկարները։ Մարդիկ միմիկարվելու ծարպակով են տառապելու, սակայն միմիկարող չպիտի

լինի, քանի որ ցրանք արիամարիել են եզակի Մլխիթարի- շին՝ Տեր Հիսուս Քրիստոսին:

Երեմիա մարգարեն հետեւելով միտքն է արտահայտում. «Քանի որ դուք Ինձ արհամարհեցիք, -ասում է Տերը, -ձեզ Մլխիթարիչ չպիտի տրվի»: Լյն ժամանակ չմլխիթարված մարդը պետք է միայն մարդուց կախված լինի: Ես գտնում եմ, որ քրիստոնյաները եղջանիկ են նույնիսկ մահվան ժա- մանա, որովհետև Մլխիթարիչ ունեն:

Հովհաննես առաքյալի Հայտնության մեջ ասվում է, որ հակաքրիստոսը պետք է երաժշտական պրոճե գործիքնե- րով ու դրոշներով լցնի աշխարհը: Ես առաջին անգամ կար- դացի այս մասին, մտածեցի՝ ինչպե՞ս է դա լինելու: Մի կող- մից խոսվում է վախի ու սպառնանքների մասին, մյուս կող- մից՝ ինչեցվում գորավոր արժանիքները: Սակայն սկսած 1933 թվականից՝ ես գիտեմ, որ աշխարհը լցված է պրոճե գործիքների երաժշտությամբ, դրոշներով, նշաննե- րով եւ, միաժամանակ, վախով ու սպառնանքով:

Երբ հակաքրիստոսը հասնի իր փառքի գագաթնակե- տին ու կարծի, թե հարթել է Հիսուսին, իրադարձություննե- րին միջամտելու է Հայր Լստովածը, եւ Հիսուսը հայտնվելու է իր ողջ գործությամբ ու փառքով: Հակաքրիստոսը հավիտ- յան վերանաւոր է աշխարհից:

Ողբան մռայլվում է ժամանակը, այնքան ավելի քացա- հայտ են դառնում անօգնական դրությունն ու հակաքրիս- տոսի կառավարությունը: Իսկ Լստովածաշունչը կարդացող մարդիկ, ծանոթանալով Լստծու խոսքին, անհամբեր սպա- սում են Հիսուսի գալուստին:

3. Ի՞նչ է տեղի ունենալու Հիսուսի գալուց հետո

Լստովածաշունչում նկարագրվում են եւս մի քանի խոշոր իրադարձություններ: Նախ հայտնվում է, որ Հիսուսը պիտի հազար տարի թագավորի մեր երկրում: Դա, հավանաբար, նշանակում է, որ Հիսուսի իշխանությունը շատ երկար է տեւելու: Իրադարձությունների հաջորդականությունը այս- պիսին է. սկզբում մարդկությունը հայտնվելու է ծայրաստի- ճան անօգնական վիճակում: Հետո մարդն իր համառու- թյամբ պիտի վերջին անգամ փորձի փրկել աշխարհը, որից

հետո կգա ին թագավորը: Նա կարողանում է ղեկավարել: Խորհուրդ են տալիս ձեզ այցելել այնպիսի ընտանիքների, որոնց ղեկավարում է Հիսուսը: Լյն, հենց հիմա էլ կան այն- պիսի տներ, որտեղ ղեկավարը Հիսուսն է: Բավական է՝ ոտ- քը շեմից ներս դնել, եւ խկույն կզգաք. թե ինչպիսի մթնո- րոտ է տիրում այդ տներում:

Մի ծանոթ անուանական գույց ունեն: Մի օր անուսինը եկավ ինձ մտա ու ասաց. «Ես անճնատուր եմ լինում Լստ- ծուն: Մի ժամանակ իրապարակայնորեն հեղքում ու արհա- մարում էի Նրան, բայց այլևս չեմ կարողանում այսպես ասլրել»: Պարզվեց, որ եղիտասարդ անուսինների ընտա- նիքում մեծ աղետ է եղել: Նա պատմում էր. «Ես ուզում էի անբոռք աշխարհին ապացուցել, որ ընտանիքում երջանիկ ասլրել կարելի է նաեւ առանց Լստծու»: Հետո ամեն բան շուտ է գալիս: Անուսինները կրվում են իրենց առաջին երե- իսյի դիակի մտա: Նա խոստովանում էր. «Ես հասկացա, որ Լստոված դեմ է մեզ, ու սպիտակ դրոշ եմ քարճրացնում»: Երեխոսյի բարդումը, որին ես նույնպես մասնակցում էի, քա- վական հուգումնալից էր: Կենտրոնում դազարն էր, դիմա- ցը՝ ջահել, գեղեցկաբեմ եւ չափից դուրս նյարդացած կիեղ՝ իր համախոհների հետ միասին: Ծնողները բաժանվել էին երկու բաճակի, իսկ կենտրոնում մեռած երեխան էր: Մի- տավորապես մեկ տարի հետո կիեղ նույնպես հավատաց Տեր Հիսուսին: Ես երբեք չեմ մոռանա, թե ինչպես մի ան- գամ, Ջատկի տոմի առավիտյան, այդ կնոջից մի քացիկ ստացա, որտեղ գրված էր. «Նա հարություն է առել նաեւ իմ սրտում»: Դրանից հետո նրանք նորից անուանացան եւ նոր կյանք սկսեցին: Դարձել էին վերին աստիճանի խեղացի եւ ինքնուրույն մարդիկ: Մի օր էլ անուսինը ինձ ասաց. «Լստաջ մեր համատեր կյանքում ոչինչ չէր ստացվում»: «Իսկ ինչ- պե՞ս եղավ, որ ամեն բան միանգամից հարթվեց»: Նա ուրախացած պատասխանեց. «Որովհետև հիմա մեզ մտա Հիսուսն է թագավորում, եւ կինս այլևս ինձանից չի պա- հանջում կատարել իր կամքը: Ես էլ ին հեղթին չեմ պնդում, թե ինձ է իշխանություն իրավունքը: Հիմա մենք հարդը այս- պես ենք դնում. «Իսկ ինչպե՞ս է հաճելի Հիսուսին», եւ ամեն ինչ հարթվում է»: Լյս գրույցից հետո ես հասկացա, որ եթե Հիսուսը այդքան լավ է ղեկավարում տները, որքան ավելի հրաշալի է լինելու կյանքը, եթե Նա ղեկավարի ամբողջ աշ-

խարիչ: Հազարամյա Թագավորությունը երաշխի պիտի լինի: Պատկերացրե՛ք՝ Հիտուը մեղ Թագավորն է: «Երջանիկ օր, որտե՞ր է քո Արեղ՝ Հիտուը»:

Հիտուսի բազավորությունից հետո երջանիկ մարդկությունը մեկ անգամ ես պետք է փորձվի, որպեսզի պարզ դառնա՝ վերածնվել են մարդկանց ցրտերը թե՞ ոչ: Ստանան ժամանակավոր ազատություն պետք է ստանա ու պիտի պարզվի, որ էությունը մարդիկ չեն փոխվել, եւ մարդկությունը նույնն է մնացել: Աստվածաշնչյուն մշված է, որ դա լինելու է մարդու վերջին խառնությունը Աստծու դեմ, եւ որից հետո գալու է աշխարհի վերջը: Արեգակնային համակարգը կպայթի, իսկ երկինքն ու երկիրը կվերանան: «Եվ տեսա մեռելներ, մեծ ու փոքր, որոնք կանգնել էին գահի առաջ, եւ բաց արվեցին գրքեր. բացվեց նաեւ մի այլ գիրք՝ կյանքի գիրքը: Եվ մեռելները դատվեցին ըստ գրվածքների՝ իրենց գործերի համաձայն» (Հայտն. 20.12):

Մի անգամ ինձ հարցրին. «Իսկ որտե՞ր է լինելու գահը, եթե ամեն ինչ պիտի վերանա»: Ես պատասխանեցի. «Ավելի լավ կլինե՞ր՝ մտածե՛ք այն մասին, թե ի՞նչ վիճակում եք կանգնելու գահի առաջ»: Չէ՞ որ կարելի է կործանվել: Ես կուզեի, որ այդ ահավոր ճշմարտության մասին Աստվածաշնչյուն ընդհանրապես գրված չլինե՛ր: Այնուամենայնիվ, այդ փտանգը գոյություն ունի՝ մե՛նք կարող ենք հավիտյան կործանվել:

Այս առիթով ուզում եմ մի պատմություն պատմել: Շոտլանդական ապարանքներից մեկում բազմություն էր հավաքվել: Վառփող բոլիսարու շուրջը բազմած՝ նրանք խոսում էին քրիստոնեության թեմայով: Եվ ահա պճնագեղ մի պարոն դիմում է տանտիրուհուն. «Ձեր խոսքերից ես հասկացա, որ քրիստոնյա եք: Ասացե՛ք խնդրե՛մ, Դուք, իրո՞ք հավատում եք այն ամենին, ինչ գրված է Աստվածաշնչյուն»: «Այո՞», պատասխանում է տանտիրուհին: Իսկ պատմող շարունակում է. «Եվ բոլոր նրանք, ուն անունը գրված չէ կյանքի գրքում, դժո՞խք պիտի ուղարկվեն»: «Այո՛, ես հավատում եմ դրան»: Պարոնը տեղից վեր է կենում եւ քայքայում դեպի դիմացի պատից կախված վանդակը: Նա վանդակից դուրս է հանում մի բութակ, բերում մտտեցնում բութակարու թե՛մ կրակին եւ ձեռացնում, թե, իբր, ուզում է ցցել կրակը: Տանտիրուհին իսկույն տեղից վեր է ցատկում եւ

բռնում պարոնի ձեռքը. «Ի՛նչ խեղճ թոչնակ: Այդ ի՞նչ եք անում»: Պարոնը, ծիծաղելով, ասում է. «Այ, տեսնու՛մ եք, Դուք խղճում եք այս թոչնակին: Իսկ Ձեր, այսպես կոչված, սիրո Աստվածը միլիոնավոր մարդկանց այսպես կրակն է շարտում: Որքան ծիծաղելի է Ձեր սիրո Աստվածը»: Մի պահ լռություն է տիրում, հետո տանտիրուհին ասում է. «Դուք սխալվում եք: Աստված ոչ ոքի դժոխք չի նետում: Մե՛նք ինքնեղս ենք մեր կամքով այնտեղ շտապում: Աստված ուզում է, որ բոլոր մարդիկ փրկվեն»:

Աստվածաշունչը մեզ ենթակայացնում է սարսափելի դատաստանի պատկերը: Մե՛նք տեսնում ենք Աստծու դատաստանը. «... եւ տեսա մեռելներ, մեծ ու փոքր, որոնք կանգնել էին Աստծու գահի առաջ»: Իսկ մարդը հարձակվում է դատաստանի լուրի վրա. «Դա ճիշտ չէ»:

Իմ երիտասարդ ընկերներից մեկին գործարանում հարցրել էին. «Դու, իրո՞ք, հավատում ես սարսափելի դատաստանին»: «Այո, հավատում եմ»: Նրան սկսել էին ծաղրել. «Լսի՛ր, ինչքա՞ն մարդ է հրմնա ապրում աշխարհում: Իսկ ինչքա՞ն է ապրել մինչեւ հիմա: Այժմ պատկերացրո՛ւ, թե յուրաքանչյուրին առանձին-առանձին դատի առաջ կանգնեցնեն, որքա՞ն ժամանակ է ամերածեշտ դրա համար»: Երիտասարդը պատասխանել էր. «Երբ կգա այդ ժամանակը, բոլորին էլ իեղբը կհասնի, չէ՞ որ այնեւ ուրիշ զբարձուրք չի լինելու»:

Այո, Աստված այդ օրերին նույնպես մեզ համար ժամանակ կգտնի: Եվ այն, որ Նա յուրաքանչյուր մարդու պետք է առանձին դատի, ցույց է տալիս, որ Աստված լքջորեն է տրամադրված մեր հանդեպ: Պատահական չէ, որ Նա Իր Որդուն մահվան մատենց մեր փրկության համար: Եթե ձեր կյանքը անց եք կացնում մեռելի մեջ, Աստված ամենայն լքջությամբ է իրագործելու դատաստանը: Ապագայում իրագործվելիք Աստվածաշնչի պատմությունը այսպես է վերջանում. «Ապա ես տեսա նոր երկինք ու նոր երկիր, որտեղ Թագավորում էր արդարությունը»: Աստվածաշունչը ներկայացնում է նոր աշխարհը, սակայն այդ ամբողջի մեջ ընդգծվում է գլխավոր իմաստը. այն, որ Աստված հասել է Իր նպատակին: Այդ նոր աշխարհում է կատարվելու այն ամենը, ինչ գրված է Կյանքի Գրքում: Դա այնպիսի մի աշխարհի պիտի լինի, որտեղ չկան ո՛չ ոստիկաններ, ո՛չ քան-

տեղ, ո՛չ դատաւարաններ, ո՛չ իրեշնեղ, ո՛չ պատերազմներ, ո՛չ ցավեր, ո՛չ մեղքեր, ո՛չ մահեր: Այս ամենը դուք կարող եք ինքնեղ կարող Հայտնության գրքում: Դրանք պարզ մկարմեր են՝ մեր ուղեղների համար դեռես անընթացների, որովհետև մեզ ծանոթ է միայն մեղքերի, տանջանքների ու մահերի աշխարհը: Ես կուզեմ յի ապրել Աստծու այդ նոր աշխարհում: Իսկ դու՞ք:

4. Կամ, կամ

Ես ուզում եմ անբողջացնել իմ ասածը: Ինչպես տեսնում եք՝ ինչքան շատ եմ խորանում Աստվածաշնչի վերջում մկարագրված պատմությունների մեջ, այնքան շատ եմ հանդգնում, որ, ի վերջո, գոյություն ունեն մարդկության երկու խմբեր՝ փրկվածներ եւ մեռածներ: Եվ եթե դուք ինձ ասեք, որ այս աշխարհում շատ քիչ մարդիկ են Հիսուսով հետաքրքրվում, ես միայն կսահեմ, որ մեռածների թիվը կսորոլ է ավելի շատ լինել: Մեր հայրերը այսպես էին արդարում: «Եթե նույնիսկ ավելի են գրանք, որ Քեզ հետ չեն, թո՛ւյլ տուր ինձ քչերի հետ մտնեմ Քո տուն»:

Հիմա ես դիմում եմ մեռածներին: Իմ ընկեր Պաուլ Հուսնորքը մի անգամ, ահա, թե ինչ պատմեց ինձ. «Մի գիշեր երազում տեսա դատաւարանի օրը եւ ես լսում էի, թե ինչպես էր Հիսուսը մեռածներին ասում. «Հեռացե՛ք ինձանից, անիծյալներ՛ի»: Այսպես գրված է նաեւ Աստվածաշնչում: Ես տեսնում էի, որ գրանք, գրուհները կախ գցած, վախեցած ու հուսահատ՝ հեռանում են Տիրոջից: Հետո լսում էի, թե ինչպես էին հարցնում միմյանց. «Դու տեսա՞ր այն ձեռքը, որ խոցված էր: Այն խոցվել է նաեւ մեզ համար, բայց մենք դրան նշանակություն չենք տվել եւ հիմա արդեն կործանված մարդիկ ենք»: Ուշադրություն դարձրե՛ք. Նա մտել է անձամբ մեզ՝ յուրաքանչյուրիս համար: Նշանակություն չունի՝ մինչեւ հիմա հավատացե՞լ եք Նրան թե՞ ոչ: Դուք պետք է իմանաք, որ Հիսուսը ձեզ համար է մտել: Ուրեմն, մտեցե՛ք Տիրոջը: Իսկ եթե ձեզ մեղավոր եք համարում, ապա ես պետք է ասեմ, որ հենց մեղաւորներին էլ փնտրում է Հիսուսը, քանի որ անմեղ մարդ գոյություն չունի այս աշխարհում ընդհանրապես: Եթե որեւէ մեկը անմեղ է հա-

մարում իրեն, տառ է, եւ նրա մեջ ճշմարտություն չկա: Այդպիսի մարդիկ չարաչար սխալվում են՝ չմկատելով իրենց մեռած վիճակը:

Իսկ հիմա ես դիմում եմ փրկվածներին: Ուշադրություն դարձրե՛ք Աստվածաշնչի այն հատվածներին, որտեղ ապագայի մասին գրված է. Նոր Երուսաղեմը իր հիմքում տաններկու վիթխարի ու թանկարժեք քարեր ունի, որոնց վրա դրված են տանների առաջյալների անունները: Նրանք համարվում են Ավետարանի վկանք: Ես դա այսպես եմ պատկերացնում: Քարերից մեկի վրա գրված է. «Հովհաննես, Պետրոս, Հակոբոս»: Մյուսի վրա՝ «Մատթեոս»: Իսկ դուք գիտե՞ք, թե ով է եղել Մատթեոսը: Նա մի խարդախ առետարական էր, խաբերա ու գող: Մի անգամ, երբ գբարված է եղել իր կեղտոտ գործերով, նրա մտով անցել է Հիսուսը: Տեղը կանգ է առել ու դիմել նրան այսպես. «Հեռե՛իր Ինձ»: Սա էլ, թորներով իր բոլոր գործերը, հետեւել է Հիսուսին: Նա տեսել է, որ Փրկիչը մտել է իր համար, հարություն առել եւ համբարձվելով անտեսանելի աշխարհ՝ երկիր ուղարկել Սուրբ Հոգուն: Ավելի ուշ՝ ընկերները նրան ասել են. « Դու այսքան ժանանակ ապրել ես Հիսուսի հետ, գրի՛ր այն ամենը, ինչ տեսել ես»: Եվ նա գրել է: Այդպես է ծնվել Ավետարանը ըստ Մատթեոսի, որը մենք այսօր կարդում ենք Աստվածաշնչում, եւ որի միջոցով միլիոնավոր մարդիկ գտել են Հիսուսին: Այնպես որ «Մատթեոս» անունը նոր աշխարհում նշանակիր ու հեղինակային տեղ է գբարեցնում: Անցյալում նա ոչ պիտանի մեկն է եղել, սակայն Հիսուսը փրկել է նրան: Այդքան մեծ է Հիսուս Քրիստոսի շնորհը, եւ այդպիսի փրկարար գորություն ունի Նա:

Այդ շնորհը կարող է արտահոսել նաեւ ձեզ վրա: Չհավատակի՛ւք, քանի որ խոսքը ձեր հավիտենական փրկության մասին է:

ԻՆՉ ԵՆՔ ՎԱՍՏԱԿՈՒՄ՝ ՄԵՐ ԿՅՆՆՔԸ ԱՍՏՈՒՆ ՆՎԻՐԱԳՐԵՐԵԼՈՎ

Մա էր պատվելի Բուշի վերջին դասախոսության քե-
ման, որը անցկացվեց 1966 թվականի հունիսի 19-ին, Ույու-
հեն կղզու Ջասկոյն քաղաքում: Այս ավետարանչական
ծառայության հետադարձի ճանապարհին (որա հաջորդ
օրը) Տերը մրան տուն կանչեց:

«Ի՞նչ եմք վաստակում՝ մեր կյանքը Աստծուն գվիրաբերե-
լով». հարցը կարելի է դնել այսպես. «Արժե՞, արդյոք, քրիս-
տոնյա լինել»: Պատասխանելու համար հարկավոր է կար-
ողա Եփեսացիներին հասցեագրված ուղերձը, որտեղ աս-
վում է. «Օրինյալ է Աստված եւ մեր Տեր Հիսուս Քրիստոսի
Հայրը, որ օրինեց մեզ ի Քրիստոս՝ ամենայն հոգեւոր օրի-
նությամբ, երկնային աշխարհում» (Եփես. 1.3): Այս տողե-
րը հրաշալի կերպով վկայում են շնորհի հարստության մա-
սին, որ քրիստոնյաները ունեն Հիսուսի մեջ:

1. Աստծուն գվիրված կյանքը երեսակայության արդյունք չէ

Այո, Աստծուն գվիրված կյանքը ներշնչանք կան երես-
կայության արդյունք չէ: Ես ուզում եմ պարզաբանել այս
միտքը:

Մեծ քաղաքի հոգեւոր հովիվը մարդկանց հետ միշտ էլ
հետաքրքիր հանդիպումներ է ունենում: Վերջերս մի երի-
տասարդի առաջի. «Լսի՛ր, դու կարող էիր ավելի մեծ քանե-
րի հասնել, եթե քո կյանքը պատկաներ Աստծուն»: Նա
առաջիկեց. «Ա՛խ, պատվելի՛ Բուշ, ոտքերդ գետնից մի՛
կտորիր: Աստված ամենեւին էլ գոյություն չունի»: Ես պա-
տասխանեցի. «Այն, ինչ դու հիմա ասում ես, ինձ համար
վերջին լուրերն են»: Նա շարունակեց. «Ուշադիր ինձ լսեք:
Առաջներում մարդիկ իրենց անօգնական էին զգում բնու-
թյան ուժեղի դեմ եւ, հետևաբար, հնարում էին այնպիսի
գործը ուժեր, որոնք կկարողանային օգնել իրենց: Մեկին

անվանել են Ալլահ, մյուսին՝ Աստված, երրորդին՝ Եհովա,
չորրորդին՝ Բուդդա եւ այդպես շարունակ: Այն ինչ պարզ-
վեց, որ այդ բոլորը միայն ներշնչանք էր, եւ երկներում ընդա-
մենը դատարկություն է»: Երբ երիտասարդը վերջացրեց իր
«դասախոսությունը», ես հարցրի. «Ա՛խ, թանկագինս, չէ՞ որ
դու չես ճանաչում Հիսուսին»: «Հիսուս՞», - գարծմացավ նա,-
ինչքան գիտեմ՝ նա էլ է կրոնի հիմնադիր»: «Ո՛չ, դա ճիշտ
չէ,- բացատրեցի նրան, -դու մեծ շփոթության մեջ ես, սիրե-
լիս: Ես բեզ հիմն կպատմեմ, թե ով է Հիսուսը: Այն օրվա-
նից, երբ ես ճանաչեցի Հիսուսին, իմացա, որ գոյություն ու-
նի կենդանի Աստված: Առանց Հիսուսի՝ մեմք ոչինչ չէինք
կարող իմանալ Աստծու մասին»: Հետո ես նրան Հիսուսից
էլի բաներ պատմեցի:

Ո՞վ է Հիսուսը: Ես ուզում եմ դա ձեզ բացատրել իմ կյան-
քի օրինակով: Ինչպես արդեն իմացաք, կյանքում իմ գլխով
շատ բան է անցել: Ինձ բազմիցս բանտարկել են ոչ թե ար-
ծաբյա գրավներ գողանալու, այլ հավատքիս պատճառով:
Երբորը թելիքի ժամանակ նացիոնները ինձ նման հոգեւոր
հովիվներին տանել չէին կարողանում եւ այդ պատճառով էլ
նստեցնում էին ամենաուղիակի բանտերում: Մի անգամ
փակեցին մի այնպիսի սարսափելի բանտում, որը կառույ-
ված էր միայն քետոնից, իսկ պատերը այնքան բարակ էին,
երբ մեկը առաջին հարկում քայլում էր, վերեւներում պարզ
լսում էին: Ես, նստած իմ խցում, լսեցի, թե ինչպես հարեւան
խոց բերեցին մի նորեկի, որին նույնպես ձերբակալել էր
գետտապահ: Այդ մարդը, դատելով ճայնից, գտնվում էր
ծայրահեղ հուսահատության մեջ: Ես լսում էի, թե նա ինչ-
պես է հեկեկալով լացում ու հեծկլտում: Սարսափելի է, երբ
լացում է տղամարդը: Ցերեկը մեզ արգելված էր պառկել
նառի վրա: Ես լսեցի, թե ինչպես է նա ետ ու առաջ քայլում՝
երկուս ու կես քայլ առաջ, երկուս ու կես քայլ ետ: Կարծես
նոր վանդակած գազան լիներ: Երբեմն պարզ լսում էի նրա
տոնրոցը: Իսկ իմ խցում Աստծու խաղաղություն էր, քանի որ
Հիսուսը եղել էր ինձ մոտ: Երբ հասկացա, թե ինչ վիճակի
մեջ է գտնվում հարեւանս, մտածեցի. «Ինձ շտապ հարկա-
վոր է խոսել նրա հետ: Վերջ ի վերջո՞ չէ՞ որ հոգեւորական
եմ»: Բանտապահին կանչեցի. «Լսե՛ք, իմ կողքի խցում
նստած մարդը ծայրահեղ հուսալքության մեջ է: Ես պատ-
վելի եմ, խնդրում եմ, թո՛ւյլ տվե՛ք ինձ մտնել նրա մոտ»: Նա

պատասխանեց. «Դա բացառփում է, չի կարելի»: Եվ այդպես էլ այդ մարդուն չկարողացա տեսնել, մինչդեռ նա այնքան մոտ էր ինձ: Ես չիմացա նրա տարիքը, բայց հասկացա, որ սարսափելի վիճակում է: Հաճախ մեզ բաժանող պատի մոտ կանգնած՝ մտածում էի. «Ախ, եթե ես կարողանայի քանդել այս պատը եւ անցնել նրա մոտ»: Բայց դա իմ ուժերից վեր էր:

Իսկ հիմա ուշադիր լսե՛ք: Այնպիսի իրավիճակում, որի մեջ ես էի գտնվում, ներկա էր կենդանի Աստված՝ երկգլխի ու երկրի Արարիչը: Մենք տեղափոխված ենք տեսանելի եռաչափ աշխարհում: Աստված մեզ շատ մոտ է, սակայն մեր միջև գոյություն ունի մի այլ սահման: Աստված լսում է մեր երկրի բոլոր դժբախտությունների մասին: Նա լսում է անգութների հայտնաբերումը, մեղադրյալն մատնված սրտերի հեծկլտոցը, դագաղի մոտ հավաքված մերձապիղծների վիշտը, անարդարությունից տանջվածների հոգոցները: Այս ամենը թափանցում է Աստծու սիրտը այնպես, ինչպես ինձ էր հասնում հուսահատության մեջ գտնվող իմ հարեւանի խցից: Սակայն Աստծուն հաջողվել է անել այն, ինչ ինձ չի հաջողվել: Աստված մի անգամ քանդել է մեր միջև եղած պատը եւ թափանցել մեր տեսանելի աշխարհը՝ Իր Որդի Հիսուս Քրիստոսի միջոցով: Այն օրվանից, երբ ես ճանաչեցի Հիսուսին, հասկացա, որ Աստված կենդանի է: Ընդհանրապես՝ ես այսպես եմ ասում. «Այն պահից, երբ Հիսուսը աշխարհ է եկել, Աստծուն փխտելը անիմաստ է»:

Իսկ հիմա պետք է խոսեն Հիսուսի մասին: Իմ դասախոսություններում ես հաճույքով միայն Հիսուսի մասին կիտանեի, բայց այդ դեպքում ժամանակը պարզապես չէր հերիքի՝ ուսումնասիրելու համար այդ հրաշալի կերպարը:

Եվ այսպես, Հիսուսը ծնվել է Բեթլեհեմում: Նա մեծացում էր ինչպես բոլոր մանուկները եւ արտաքինից աստվածածախն փառքի ոչ մի նշան չէր երեւում: Այնուամենայնիվ, մարդիկ հետաքրքրվում էին Նրանով: Նրանք զգում էին, որ Հիսուսի մեջ ներդրված են Աստծու սերն ու շնորհը:

Քանանի երկիրը, որտեղ Հիսուսը ապրում էր որպես Իսրայելի ժողովրդի մի անդամ, նվաճել էին հռոմեական զավթիչները: Նրանք բազմաթիվ աստվածներ ունեին, բայց իրականում չէին հավատում ոչ մեկին: Մի անգամ մահաացու հիվանդանում է Կապեթնաում քարվաքի հռոմեացի հայրու-

րապետի քանկագին ծառան: Նա դիմում է տարբեր բժիշկների, սակայն ոչ ոք չի կարողանում օգնել: Երբ հասկանում է, որ ծառան շուտով կարող է մեռնել, հարյուրապետը կիշռում է Հիսուսին: Այլ ելք չգտնելով՝ գնում է Հիսուսի մոտ ու խնդրում «Տե՛ր Հիսուս, իմ ծառան հիվանդ է, խնդրում եմ՝ բժշկես նրան»: «Այո, -պատասխանում է Հիսուսը, -Ես կգամ քեզ հետ»: Սակայն գորպայետն ասում է. «Տե՛ր, ներդրյում մի՛ կրիք, որովհետեւ արժանի չեմ, որ իմ հարկի տակ մտնես, միայն խոսքով ասա, եւ իմ ծառան կբժշկվի»: Այլ բառերով՝ հռոմեացի հարյուրապետի սիրտը կարելի է ձեռնակերպել այսպես. «Դու Աստծու մարմնացումն ես: Դու կաթոլ ես անհնարինը ինարպափոր դարձնել»: Հիսուսը ետ է դառնում ու ասում. «Ծշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, որ Իսրայելի մեջ անգամ այսպիսի հավատ չգտա»: Դա նշանակում է՝ «Այսպիսի հավատ, ինչպիսին այս արեւիտյանն է, Ես չգտա ամբողջ եկեղեցում»: Ինչպես տեսնում ենք՝ հարյուրապետը գլխի էր ընկել, որ Աստված մեզ մոտ էր եկել Հիսուսով (Կարդա՛ Մատթ. 8. 5-13):

Դուք պետք է իմանաք Հիսուս Քրիստոսի պատմությունը: Ես խնդրում ու աղաչում եմ ձեզ՝ ձեռք բերել Նոր Կտակարանը եւ սկսել այն կարդալ Հովհաննեսի Ավետարանից: Հետո կարդացե՛ք Հիսուսի մասին գրված բոլոր հրաշալի պատմությունները: Ես չգիտեմ ուրիշ մի Գիրք, որտեղ այնքան պատկերազարդ պատմություններ լինեն, որքան Նոր Կտակարանում:

Հիսուս Քրիստոսը՝ Աստծու Որդին, աշխարհ էր եկել ոչ միայն ծառաներին բուժելու, այլևս վկայելու եւ ապացուցելու, որ Աստված, իրոք, գոյություն ունի: Նա եկել էր, որպեսզի մարդկանց հաշտեցնի Աստծու հետ:

Բայց մենք պետք է տեսնենք, որ մեր եւ Աստծու միջև կանգնած է մեր իսկ մեղքերի պատը: Երբեմնք ստե՛լ եք: Այո՞: Դրանով արդեն մի քար եք ավելացրել ձեր եւ Աստծու միջև կանգնեցված պատին: Եթե դուք գտնե՛ք մեկ օր ապրել եք առանց Աստծու, առանց արդթի՝ ես մեկ քար: Անմաքոր լինելը, շնորհունը, գործությունը, սուրբ կիրառիկն չպահելը եւ դրա նման հազար ու մի մանրություններ համարվում են Աստծու պատվիրանների խախտում, եւ ամեն անգամ միմի քար է ավելանում մեջտեղի պատին: Մենք բոլորս միասին ենք կառուցել այդ պատը, որպեսզի քանդանվենք Աստ-

ծուց, բայց Աստված Սուրբ է: Հասկանո՞ւմ եք, երբ մենք տալիս ենք «Աստծու» անունը, իսկույն հարց է ծագում մեր մեղքերի ու կատարած հանցանքների մասին, եւ այդ խնդիրը լուծում է պահանջում: Աստված ամենայն խստությամբ է վերաբերվում մեղքին: Եւ ճանաչում եմ մարդկանց, ովքեր գտնում եմ, որ իրենց հավատքի համար Աստված պետք է շատ ուրախ լինի:

Ի՞նչ սիրելիներ, դա դեռ բավական չէ: Ստատման նույն պես հավատում է Աստծուն: Նա ամենեւին էլ արեխտա չէ եւ շատ լավ գիտի, որ Աստված կենդանի է, սակայն խարաղոթքում չունի Աստծու հետ: Աստծու հետ խաղաղություն կարելի է ստանալ միայն այն ժամանակ, երբ հիմնովին քանդվի մեր մեղքերի պատը, որը մեզ բաժանում է նրանից: Հենց դրա համար էլ Հիսուսը եկել էր: Իր այրյունը քափերով խաչի վրա՝ Նա քանդեց մեր մեղքերի պատը: Նա գիտեր, որ մեկն ու մեկը՝ մարդը կամ Ինքը պետք է կրի մեղքերի պատիժը: Դուք լսո՞ւմ եք՝ կամ վիճելիվ՞ թուշը, կամ էլ Հիսուսը: Եվ Նա՝ Աստծու անմեղ Որդին, Իր վրա վերցրեց իմ մեղքը: Ինչպես նաեւ՝ ձերը:

Իսկ հիմա եւ ուզում եմ ձեր ուշադրությունը հրավիրել Հիսուս Քրիստոսի խաչված կերպարի վրա, որն ինձ համար ամենաթանկ դրոշմանկարն է: Եվ ահա խաչին գանձված է Նա, Ուս միջոցով Աստված քանդեց մեր մեղքերի պատը եւ եկավ մեր աշխարհ: Խաչին գանձված է Նա, Ուս մասին Աստվածաշնչում գրված է. «Աստված մեր բոլորի մեղքը դրեց Նրա ուսերին»: Գանձված է Նա, Որը մեր մեղքերի ծանր քարերը կրում է Իր ուսերին: Գանձված է Նա, Ով կատարում է այն, որ մեզանից ոչ մեկը կատարել չէր կարող: Դրանում կարող եք ինքնեղբ համոզվել՝ կարողա՞րով Աստվածաշունչը: Այստեղ՝ խաչի վրա իրավանգանում է Հին Կտակարանի հետեւյալ մարգարեությունը. «Նա մեր մեղքերն էր վերցնում եւ մեզ համար չարչարվում...» (Ես. 53:4):

Թո՛ւյլ տվեք դա այլ կերպ բացատրել: Ես շփեցարացի սիրլավ ընկեր ունեմ, որի հետ շատ ենք ճանաչիրդել: Երբ հերթական ճաշից հետո պետք էր լինում վճարել, եւ, իհարկե, կարող էի ասել. «Ընկե՛ր, այսօր վճարե՛լու քո հերթն է, դո՛ւ պետք է վճարե՛ս», բայց մենք վճարում էին առանց այդ մասին խոսելու, մենք վճարում էինք հերթով: Հասկանո՞ւմ եք, որե՛տ մեկը պետք է անսկայան վճարի: Աստծու առաջ մեր

մեղքերի համար նույնպես անդամեջտ է վճարել: Կամ որք պետք է հավատաք, որ Հիսուսը վճարել է ձեր տեղը, կամ էլ սի՛ր օր ինքնեղբ պետք է վճարեք: Հարկավոր է վարձահատույց լինել ամեն սի՛ մեղքի համար: Հիմա տեսնո՞ւմ եք, թե՛ որքան քանկ է ինձ համար Հիսուսը: Եւ Նրան եմ վստահում իմ կյանքը, որովհետեւ գիտեմ, որ Նա իմ տեղը վարձահատույց է եղել իմ իսկ մեղքերի համար: Սակայն իմ Հիսուսը գերեզմանում չի մնացել: Ո՛չ: Եվ դա հրաշալի է: Հիսուսի մահից երեք օր անց՝ սի՛ մարդ օր ու գիշեր Նրա մասին էր մտածում... «Ի՞նչ կատարեց Հիսուսի հետ: Նա իմնա մեռած է: Եւ տեսել եմ, թե՛ ինչպես Նրան դրեցին ժայռափոր գերեզմանի մեջ ու սի՛ առեկի քարով ծածկեցին մուտքը: Աստծու Որդի՞ն էր Նա թե՛ ոչ»: Այդ մարդը Թովմասն էր: Մի՞նչ նա մտորում էր կատարվածի մասին, մտեցան ընկերները, եւ ուրախացած սասցին. «Լսի՛ր, Հիսուսը կենդանի է: Դու չպետք է այլեւս սուգ պահես: Նա ապրում է»: «Չի կարող պատահել, սրտներդած պատարկանում է Թովմասը»: «Ինչպե՞ս թե՛ չի կարող պատահել, իսանառքեն պնդում եմ ընկերները, - կարող եմք նույնիսկ երդվել, որ հանդիպել ենք Նրան»: «Մի՞թե՛ հնարափոր բան է, որ որեւէ մեկը հարություն առնի, - մտածում էր Թովմասը, - եթե ընկերներս չեն ստում, ուրեմն, իրոք, Հիսուսը Աստծու Որդին է»: Թովմասը պատկանում էր այն մարդկանց թվին, ովքեր սինչեւ սեփական աչքերով չեն տեսնում, չեն հավատում: Եվ նա դիմեց ընկերներին. «Եթե չտեսնեմ Նրա ձեռքերի վրայի մեխերի նշանը եւ իմ մատները մեխերի տեղը չդնեմ ու իմ ձեռքերը Նրա կողը չիտրեմ, չեմ հավատա»: Հիսուսի սյուս աշակերտները, ինչքան ասես, կարող էին համոզվել Թովմասին, սակայն, սի՛տեմոյնն է, նա չէր հավատում: Ուր օր անց՝ նա կանգնած էր ընկերների հետ, երբ հայտնվեց Հիսուսը. «Խաղաղություն՞ ձեզ»: Դիմե՛րով Թովմասին՝ սասց. «Բե՛ր քո մատները եւ դի՛ր այստեղ ու տես իմ ձեռքերը. թե՛ր ձեռքը ու մտքո՛ւ իմ կողի մեջ. անհավատ սի՛ եղիր, այլ հավատաացյալ»: Այն ժամանակ Թովմասը ծնկի է գալիս ու բացականչում. «Տե՛ր իմ, Աստված իմ» (Կարդա՛ Հովհ. 20. 19-29): Հիմնա արդե՛ն ձեզ պետք է պարզ լինի իմ խոսքն այն մասին, որ Աստծուն նվիրված կյանքը երեսակայություն արդյունք չէ: Աստված անորոշություն չէ, ինչպես շատերն են կարծում. «Աստված ինչ-որ տեղ է, սակայն թե՛

ինչպիսի տեսք ունի Նա, ոչ որ չգիտի»։ Ո՛չ։ Դա բնական պայման է։ Աստծու հետ մենք կյանք ունենք հավիտենական, որովհետև Աստծու Որդին աշխարհ եկավ, մեռավ և մեռելներից հարություն առավ մեզ համար։ Ահա քե՛ս ինչու եմ ես համոզված Աստծու գոյության մեջ։ Այս բեման բացահայտելու համար առաջին հերթին պետք էր պարզաբանել, որ Աստծուն նվիրած կյանքը երևակայության կամ մեղմնյաճքի հետևանք չէ։ Իսկ հիմա ես պետք է պատասխանեմ երկրորդ հարցին.

2. Ինչպե՞ս կյանք ունենալ Աստծու հետ

Մարդիկ հաճախ են ինձ ասում. «Պատվելի՛ Քույր, Դուք երջանիկ մարդ եք։ Դուք ունեք մի բան, ինչը մենք չունենք»։ Ես պատասխանում եմ. «Այդ նույնը կարող եք Դուք էլ ունենալ, քանի որ Հիսուսը կենդանի է և ահա Ձեզ համար»։ Հետևում է հաջորդ հարցը. «Իսկ ինչպե՞ս կարելի է կյանք ունենալ Աստծու հետ»։ Այս հարցին Աստվածաշունչը կարճ ու հստակ պատասխան է տալիս. «Հավատացե՛ք Հիսուս Քրիստոսին»։

Ախ, եթե ես կարողանայի ձեզ այդ հավատին բերել...: Դրա համար սկզբից եկեք պարզաբանե՛ք, քե՛ս, ընդհանրապես, ի՞նչ է նշանակում «հավատ»։ Շատերը անորոշ պատկերացում ունեն այս մասին:

Մի անգամ ինձ վիճակից դատախառություն կարդալ Լորդվեզիայի մայրաքաղաք Օսլոյում: Շաքաք առափոխյան ես պետք է ետ վերադառնայի, քանի որ կիրակի օրը քարոզելու էի Վուպերթալ քաղաքում: Մակայն ինձ սկզբից բախտա չբերեց: Մտախոտի պատճառով ինքնաթիռը մեկ ժամ ուշացավ, իսկ երբ ուղորդում վերցրեց դեպի Կոպենհագեն, այստեղ, պարզվեց, պետք էր մեկ այլ ինքնաթիռ տեղափոխվել: Երբ արդեն Կոպենհագենի երկնքում էինք, օդաչուն համկարծ դեկը թեքեց և ուղղվեց դեպի Շվեյցարիա: Ի վերջո մենք վայրէջք կատարեցինք Մալմյայի օդանավակայանում: Ինձ բողոքվին էլ պետք չէր տեսնել Մալմյա քաղաքը, առավել ես, որ այնտեղ գործ էլ չունեի: Ես պետք է քոչնի Դյուսանդերոֆ, որովհետև ինձ ասպանելու էին Վուպերթալում: Մալմյայում ողջ օդանավակայանը լեփ-լեցուն

էր ուղեորներով, իսկ ինքնաթիռները մեկը մյուսի հետևից վայրէջք էին կատարում: Պարզվեց, որ միայն Մալմյայի օդանավակայանում մտախոտը չկար: Բոլոր ինքնաթիռները այստեղ էին իջնում, իսկ մարդկանց համար նույնիսկ մտախոտ տեղ չկար: Ես ծանոթացա մի ավատորհացի վաճառականի հետ: Մեզ երկուսիս էլ նույն հարցն էր հետաքրքրում. «Հետո ի՞նչ է լինելու»։ Հնարավոր էր միմեջ հաջորդ օրը ռաքի վրա մնալ: Բոլորը հայտնում էին, քրքնջում, դժգոհում՝ ինչպես միշտ լինում է նման դեպքերում: Հանկարծ բարձրախոտով հայտարարեցին. «Հարավի ուղիորդայնք մեկ ինքնաթիռ պատրաստվում է բռնիքի: Վայրէջքի ճշգրիտ տեղը դեռ հայտնի չէ՝ Համբուրգ, Դյուսանդերոֆ կամ Ֆրանկֆուրտ»։ Դա, փաստորեն, անորոշ հայտարարություն էր: Մեզանից ոչ հեռու կանգնած մի կին արձագանքեց. «Ես այդ ինքնաթիռը չեմ մտախոտ: Վախենում եմ»։ Ես նրան ասացի. «Տիկին, Դուք կարող եք շքոյել ու մնալ այստեղ»։ Իմ ծանոթ ավատորհացին ավելացրեց. «Այո, այսպիսի եղանակին չարժե միսի դիմել, մասնավոր, երբ ճշգրիտ հայտնի չէ, քե՛ս որտեղ պետք է վայրէջք կատարես»։ Այն ժամանակամիջոցում, երբ ավատորհացին ու այդ կինը իմ մեջ կամկածներ էին առաջացնում, մեր մտավանցավ կապույտ համագեղատղ օդաչուն: Ես նկատեցի, որ նա շատ լուրջ ու կենդանացված դեմք ունի: Նրա անբուրջ կազմվածքը խոտում էր պատասխանատվության մասին: Ես դարձա իմ ավատորհացի ծանոթին. «Այս օդաչուին կարելի է վատահել, սա թեթևամիտ մարդ չէ, եկե՛ք գնանք»։ Եվ մենք գնացինք: Այն պահից, երբ մենք մտանք ինքնաթիռ, ես ինքնաթիռը օդ բարձրացավ, մենք գտնվում էինք օդաչուի իշխանության տակ: Մենք մեր կյանքը վտահեցինք նրան: Վերջապես ինքնաթիռը վայրէջք կատարեց Ֆրանկֆուրտում, ես ես կենսաբանական տուն հասա: Այսպիսով, ես հասա իմ նպատակին: Ահա քե՛ս ինչ է նշանակում «հավատալ»։ Հավատալ նշանակում է վտահել:

Ի՞նչ է մեզ հարկվափոր Աստծու հետ ապրելու համար. հավատալ Տեր Հիսուս Քրիստոսին:

Ես կասեի այսպես. «Մտի՛ր Հիսուսի մեջ»։ Դուք ինձ հասկանա՞մ եք: Ինքնաթիռ մտնելիս՝ ես նկատեցի, որ ավատորհացին շատ կուզեմար մի ուտքով մնալ օդանավակայանում, մյուսով՝ մտնել ինքնաթիռ: Մակայն այդպես լի-

նել չի կարող: Նա պետք է կամ օրհնավակայանում մնար, կամ էլ իր կյանքը վստահե՛ր օրհաշուհ: Ճիշտ այսպես էլ Հիսուսի մեջ ապրելն է: Դուք չեք կարող մի ուղքով ապրել Հիսուսից դուրս, իսկ մյուսով՝ Հիսուսի մեջ: Դա ամենայն է: Հավատալ Հիսուս քրիստոսին, ապրել, ճկիլիվել Աստծուն կարելի է միայն լիովին Նրան վստահելով: Ես պետք է այսպես դիմեմ Աստծուն. «Աստված՝ իմ, վերցրո՛ւ իմ կյանքը, այն լիովին Քեզ է պատկանում»:

Թույլ տվեք հարցնել քացի Աստծու Որդուց, ո՞ւմ կարող եմք վստահել մեր կյանքը: Այս աշխարհում ոչ մեկ ինձ համար այդքան քաղաքություն չի արել, որքան Հիսուսը: Նա ինձ այնքան շատ է սիրել, որ նույնիսկ խաչ է քարծրացել: Նա հարություն է առել մեռելներից: Մի՞թե ես չեմ կարող կյանքս վստահել Նրան, Ով հարություն է առել մեռելներից: Ես մի ամիսեք մարդ կլինեմ, եթե այդպես չվարվեմ: Այն պահից, երբ ես կյանքս Հիսուսին եմ հանձնում, սկսում եմ մի նոր կյանք Աստծու հետ: Ինձ համար շատ բանի արժեն հետևյալ տողերը. «Ի՞նչ Թագավոր, էլ ում կարող եմ ճկիլիվել ինձ տրված միակ կյանքը, եթե ոչ՝ Քեզ: Դու իմ մեղավորնս փոխարեն մեռար խաչի վրա, ես ես Քո հայեցողության փոխարեն մեռում իմ անձը: Ուզում եմ մինչևի վերջ հավատարիմ մնալ Քեզ, քանի որ ես Քո գինվորն եմ ո՛ւ ծառան»: Ա՛խ, եթե դուք նույնպես կարողանալիք այսպես ապել, ինչպիսի՞ կյանք կունենալիք:

Ես պետք է այստեղ մի բան ավելացնեմ: Լսե՛ք. եթե դուք որոշել եք ձեր կյանքը Հիսուսին հանձնել, ապա այդ մասին պետք է ասեք Նրան: Նա շատ մոտ է եւ լսում է ձեզ: Ասե՛ք. «Տե՛ր Հիսուս, Քեզ եմ հանձնում իմ կյանքը»: Երբ ես անսաստված, մեռած մի երիտասարդ էի, Հիսուսին ընթրուհիով՝ դիմեցի Նրան այսպես. «Տե՛ր Հիսուս, ես հիմնա իմ կյանքը Քեզ եմ հանձնում: Ես չեմ կարող Քեզ խոստանալ, որ այստե՛տեղ քարի կլինեմ, դրա համար Դու պետք է ինձ մի նոր սիրտ տաս: Ես ամիսեք բնավորություն ունեմ, սակայն Քեզ մոտ եմ գալիս այնպես, ինչպես կամ: Դու ինչպե՞ս ես ուզում տեսնել ինձ, դարձրո՛ւ ինձ այդպիսին»: Դա այն պահն էր, երբ ես գուց օղորդ մտա Հիսուսի մեջ եւ Նրան, Ով Իդ աղյա՛մք վճարել է ինձ համար, թույլ տվեցի ղեկավարել իմ անձը:

Բայց այդպիսի կյանքում հասակ առնելու համար ան-

հրաժեշտ է ի մկատի ունենալ երեք պարտադիր պայման՝ կարողալ Աստծու Խոսքը, արդթել եւ շփվել Աստծու երեխաների հետ:

Հասկանո՞ւմ եք՝ Հիսուսի մասին ոչինչ չկարդալով եւ չլսելով՝ դուք Նրան պատկանել չեք կարող: Անե՛ն օր կենտրոնանալով արդթի մեջ գոնե մեկ քառորդ ժամ՝ կարդացե՛ք Աստվածաշունչը: Եթե ինչ-որ բան անհասկանալի լինի, մի՛ հուովեք: Ինչքան շատ կարդաք, այնքան շատ հրաշալի ճշմարտություններ կբացվեն ձեզ համար: Սիրտս միշտ ողբալիտայանք է լցվում այն մտքից, որ ես պատկանում եմ իմ հրաշալի Փրկչին եւ կարողանում եմ ավետարանել Նրա մասին: Աստծուն ճկիլիվելով՝ կարելի է ոչ միայն կյանք ունենալ, այլ նաեւ ավետարանել Բարի Լուրդ:

Հաջորդ անհրաժեշտ պայմանը արդթն է: Հիսուսը լսում է ձեզ: Կարիք չկա գեղեցիկ խոսքեր ասելու: Ուղղակի հարկավոր է արդթել այնպես, ինչպես մի տանտիրոսի էր արդթում. «Տե՛ր Հիսուս, այսօր ծանր օր է, անուսինս վատ տրամադրություն ունի, երեխաներս ինձ չեն եթարիվում, այսօր նաեւ լվացքի օր է, եւ այս բոլորի հետ միասին՝ մեզ շատ անհրաժեշտ է տալը մարի: Տե՛ր Հիսուս, Քո ոտքերի առաջ եմ դնում իմ այսօրվա բոլոր հոգեկրը, իմ այս խղճալի իրավիճակը: Ուրախությամբ լցրու իմ սիրտը, քանի որ կյանքս Քեզ եմ հանձնել: Տե՛ր իմ Հիսուս, շնորհակալ եմ, որ կարող եմ ամեն ինչ Քեզ վստահել»: Հավանո՞ւմ եք, ես Հիսուսին կարող եմ ասել այն ամենը, ինչ ունեմ իմ սրտում: Ես կարող եմ նույնիսկ այսպես խնդրել. «Տե՛ր Հիսուս, թույլ տուր ինձ ավելի լավ ճանաչել Քեզ, որպեսզի Քոնը լինեմ ամբողջովին»:

Երրորդ պայմանը՝ շփվել այնպիսի մարդկանց հետ, ովքեր պատկանում են Հիսուսին: Վերջերս մեկը բողոքում էր, թե չի կարողանում աճել հավատի մեջ: Ես նրան խորհուրդ տվեցի շփվել քրիստոնյաների հետ, սակայն նա ինձ առաքիլեց՝ ամերով, որ նրանք առհասարակ իրեն դուր չեն գալիս: Այդ ժամանակ ես պատասխանեցի. «Եթե Դուք չեք ուզում նրանց հետ միասին երկնքում ապրել, ապա ես ի՞նչ կարող եմ անել: Աստված Ձեզ դուր եկող հատուկ քրիստոնյաներ չի ստեղծելու»:

Երիտասարդ ժամանակ դրամադրիտում աշխատող մի ծանոթ ունեի: Դա մի տարիքն առած պարոն էր, որը ինձ

շատ հաճախ էր պատճառում իր երիտասարդ կյանքից: Երբ նա ավարտել էր միջնակարգ դպրոցը, հայրը գուժեղ էր հատկացրել եւ թույլ էր տվել նրան ճանապարհորդել Եզրուպայի բոլոր մայրաքաղաքներով: Պատիվերացրեք՝ տասնութամյա երիտասարդի ուրախության չափը, որին այդպիսի հմարավորություն էր ընձեռնվել: Նրան ամեն մարդ կարող էր նախանձել: Եվ նա պատճառում էր. «Ես գիտեի, որ այդպիսի խոշոր քաղաքներում շատ են գալթակիրությունները ու փորձությունները, այնպես որ կարող էի հեշտությամբ ընկնել մեղքերի ճահիճը: Սակայն ցանկանում էի մնալ Հիսուսի հետ, եւ դրա համար էլ ինձ հետ վերցրի Նոր Կտակարանը: Ամեն անգամ հյուրանոցից դուրս գալիս՝ ես ուզում էի լսել Հիսուսի ձայնը եւ խոսել Նրա հետ: Որ քաղաքն էլ գնում էի, ամենուրեք փնտրում էի քրիստոնյաների ու ամեն տեղ գտնում էի Հիսուսի աշակերտներին՝ Լիսաբոնում, Մադրիդում, Լոնդոնում...: Միայն Փարիզում էր, որ բախտս այդքան չբերեց: Ես այնտեղ շատ փնտրեցի մեկին, ով կպատկաներ Հիսուսին: Վերջապես ինձ պատմեցին մի կոշիկակարի մասին, որը Աստվածաշունչ էր կարող: Երբ ես նրան գտա, հարցրեցի. «Դուք ճանաչո՞ւմ եք Հիսուսին»: Պատասխանի փոխարեն՝ կոշիկակարի աչքերը սկսեցին փայլել եւ ես շարունակեցի. «Կարե՞լի՞ է ամեն առափուտ գալ Ձեզ մոտ՝ միայն տրոփելու»:

Որքան կարեւոր էր նրա համար եղողը պայմանը, շփվել այնպիսի մարդկանց հետ, ովքեր, իրոք, ցանկանում էին ճշմարիտ քրիստոնյա լինել:

Այսպիսով, առաջին հերթին ես ցանկացա պարզաբանել, որ այն օրվանից, երբ Հիսուսը մեր աշխարհ եկավ, Աստծուն ճիշտված կյանքը դարձավ իրականություն: Եվ երկրորդ՝ Աստծու հետ կյանք ձեռք բերելու համար անհրաժեշտ է հավատալ Տեր Հիսուս Բրատարին: Եվ վերջապես, ես մտաճանձ եմ հիմնական հարցին:

3. Ի՞նչ ենք ստանում՝ Աստծու հետ ապրելով

Թանկացա՞նք բարեկամներ, եթե ես փորձեի պատմել այն ամենին մասին, ինչ մենք ստանում ենք Աստծու հետ ապրելով եւ Հիսուսի հետ հարողորակցվելով, պարզապես

ծամանալը չէր բավականացնի, քանի որ հարցը շատ ծավալուն է:

Ես երբեք չեմ մոռանա, թե ինչ ասաց իմ 53-ամյա հայրը՝ իր մահվան շեմին. «Վիլիելմ, իմ բոլոր հարազատներին ու բարեկամներին կպատմեմ, թե որքան է ինձ երջանկացրել Հիսուսը՝ թե՛ կյանքում, թե՛ մահվան ճիղաններում»: Գիտե՞ք, երբ մարդը մեռնում է, նա չի ձգտում գեղեցիկ ճանիք արտասանել: Եվ եթե նա այդ պահին վկայում է, որ Հիսուսը իրեն երջանկացրել է՝ եւ կյանքում, եւ մահվան ճիղաններում, այդ բաները թափանցում են հարազատների ուրեղն ու սիրտը:

Իսկ ինչպիսի՞նք է լինելու ձեր մահը:

Երբ ես դեռ երիտասարդ պատվելի էի, Բուրի մարզում մի հետաքրքիր ղեպք պատահեց: Մի մեծ դահլիճում մի գիտնական մոտ երկու ժամ ապացուցում էր, որ Աստված գոյություն չունի: Դրա համար նա օգտագործում էր իր բոլոր գիտելիքները: Ամբողջ դահլիճը ծափահարում էր. «Ուռա, Աստված չկա, ինչ որ ուզենք, կարող ենք անել»:

Երբ իռեատորը ավարտեց ճառը, հավաքույթի նախագահը կանգնեց ամբողջ առաջ ու ասաց. «Իսկ հիմա եկե՛ք սկսենք վիճաբանել: Ով ցանկանում է վիճաբանել, խնդրում եմ՝ ձեռք բարձրացնի»: Իհարկե, ոչ մեկը չէր ցանկանա վիճաբանել այդ գիտնականի հետ, թեպետ այդտեղ շատ շատերը նրա պես չէին մտածում: Սակայն ո՞վ կհանարձակվեր ամբողջին մոտենալ, երբ հազարավոր մարդիկ նստած՝ ծափահարում էին գիտնականին: Համենայն դեպս՝ մեկը գտնվեց: Դահլիճի վերջում ձեռք էր բարձրացրել տարեց մի կին՝ սեւ գլխաշորը գլխին (որը հաստատում էր նրա իսկական տարեցի լինելը): Նախագահը դիմելով նրան՝ ասաց. «Տատիկ, Դուք ինչ-որ բան եք ուզում ասել»: Տարեց կինը գլխով դրական շարժում արեց, իսկ նախագահը շարունակեց. «Դե, որե՞նք, Դուք պետք է ամբողջին մոտենաք»: Կինը, առաջ գալով, ասաց. «Խնդրե՛նք, ես ոչ մի բանից չեմ վախճնում»: Համարձակ կին էր: Դա, կարծեմ, 1925 թվականին էր: Մոտենալով ամբողջին՝ նա սկսեց. «Պարո՞նք գիտնական, հենց նոր Դուք երկու ժամ ճառեցիք Ձեր անհավատության մասին: Թո՛ղ տվեք ինձ՝ հինգ լույս պատմել իմ հավատի մասին: Ես ուզում եմ պատմել, թե ի՞նչ է արել Տերը՝ իմ Երկնային Հայրը, ինձ համար: Երբ դեռ երիտասարդ

կին էի, ամուսինս հանքում վթարի ենթարկվեց ու մահացավ: Ես մնացի մենակ՝ իմ երեք փոքրիկ երեխաների հետ միասին: Այն ժամանակ սոցիալական հիմնարկությունները դեռ զարգացած չէին: Կանգնած ամուսնու դազարի առջև՝ ես գտնվում էի հուսահատության շեմին: Սակայն Աստված ինձ այնպես մխրեց, որ մարդկանցից ոչ մեկը դա չէր կարող անել: Այն ամենը, ինչ մարդիկ ասում էին ինձ, մի ավանցիս միջոյ մտնում էր, մյուսով՝ դուրս գալիս: Սակայն կենցաղի Աստված մխրեց ինձ: Ես դիմեցի Նրան՝ անելով: «Տե՛ր իմ, հիմա Դու պետք է լինես իմ երեխաների չայրը: Հաճախ ես չգիտեի, թե որտեղից փող ճարեմ, որպեսզի երեխաներին համար կերակուր գտնեմ: Բոլոր առիթներով դիմում էի իմ Փրկչին. «Տե՛ր իմ, Դու գիտես, որ գտնվում եմ դժվարին կացության մեջ, օգնի՛ր ինձ»: Բոլորին ցնցեց տարեց կնոջ պատմությունը, հատկապես, երբ դիմելով գիտնականին՝ ասաց. «Աստված երբեք ինձ չի թողել, երբեք: Երբեմն անտանձելի ժամանակներ էին լինում, սակայն Նա ինձ մենակ չէր թողնում: Աստված ինձ համար ավելին է արել՝ Նա ուղարկել է Իր սիրելի Ուրբուն՝ Տեր Հիսուս Քրիստոսին, Որը մեռավ իմ պատճառով՝ Իր արյունով լվանալով իմ քոտր մեղքերը: Այո, ես հիմա պառավ կին եմ և գիտեմ, որ շուտով պիտի մեռնեմ: Բայց լսե՛ք, Նա ինձ հավիտենական կյանքի ամոռորդը հույս է տվել, եւ եթե մույճիսկ այստեղ փակվեմ իմ աչքերը, ես համոզված եմ, որ պիտի արթնանամ երկնքում, քանի որ պատկանում եմ Հիսուսին: Այո ամենը Աստված արել է ինձ համար: Իսկ հիմա ես Ձեզ հարցնում եմ՝ պարոն գիտնական, Ձեզ ի՞նչ է տվել Ձեր ամուսնու պայմանը»: Գիտնականը տեղից վեր կացավ, ձեռքը դրեց կնոջ ուսին ու ասաց. «Այսպիսի տարեց կնոջից մենք չենք վերցնի իր հավատը: Դու տարեց մարդկանց հաստի վիճակ է»:

Երանքի դուր տեսնելիք, թե այդ պահին ինչպես կնճռուկեց տարեց կնոջ դեմքը: Նա, կարծեք, հարձակվեց գիտնականի վրա. «Ո՛չ, ո՛չ, պարոն՝ գիտնական, Դուք իմ ձեռքից ինձց այնպես չեք պրծնի: Ես Ձեզ հարց տվեցի, եւ Դուք պարտափոր եք պատասխանել իմ հարցին: Ես պատմեցի, թե Աստված ինձ համար ինչ է արել: Իսկ հիմա, քարի եղե՛ք եւ ասե՛ք, թե Ձեզ ի՞նչ է տվել Ձեր ամուսնու պայմանը»: Գիտնականը հայտնվելով ամուսնու դուրս, մեջ՝ լռեց: Տասիկը նրանից խելացի դուրս եկավ:

Եթե այսօր էլ ամեն կողմից մարդիկ կշտամբում են Ավետարանը, ես էլ նույն հարցն եմ տալիս. «Ձեզ ի՞նչ է տվել ձեր ամուսնու պայմանը»: Լսենք դեպքում՝ ես չեմ կարծում, թե դրանով ջերմանում են մարդկանց հոգիները, լցվում խաղաղությամբ, կամ էլ նրանք երջանկանում են: Ո՛չ, սիրելի՛ բարեկամներ:

Այնուամենայնիվ, ի՞նչ ենք ձեռք բերում մենք կյանքում՝ մեզ մկրելով Հիսուսին: Ես կուզեի այս հարցին պատասխանել, իմ սեփական փորձից ելնելով:

Իմ կյանքը ամուսնելի կլինեի, եթե ես Հիսուսի միջոցով խաղաղության շունձնայի Աստծու հետ: Հաճախ այնպես էր պատահում, որ երբեմն քիչ էր մնում սիրտս ճեղքվել: Լսե՛մք՝ դժբախտ պատահար է եղել, եւ երկու ընտանիք սուղ են անում: Չէ՞ որ մեզ հետ էլ կարող է այդպիսի բան պատահել, եւ այն ժամանակ մյուս բոլոր դատարկիտությունները ավելորդ կդառնան, ու ձեռքներս վեր բարձրացնելով՝ կճչամք: «Մի՞թե չկա որեւէ մեկը, որ կարողանա ինձ օգնել»: Գիտե՛ք, կյանքի ծանր պահերին երեսան է գալիս այն, ինչ որ ունես Հիսուսի մեջ: Երբ ես ամուսնացա, կնոջս ասացի. «Սիրելի՛ս, ես կուզեմայի վեց զավակ ունենալ, ու բոլորը կաբողմանային նվազել երաժշտական փողային գործիքների վրա»: Ես մտածում էի, որ հրաշալի կլինեի, եթե իմ տանը փողային նվազախումբ ունենայինք»: Մենք վեց երեխա ունեցանք՝ չորս գեղեցիկ աղջիկ եւ երկու տղա: Սակայն երկու որդիներին էլ Աստված՝ տարավ ինձնից, նախ՝ մեկին, հետո՝ մյուսին: Եվ մինչեւ հիմա ես կատարվածը չեմ կարողանում հավանալ: Իմ ամբողջ կյանքում ես աշխատել եմ որպես երիտասարդների հոգեւոր հովիվ, իսկ իմ արյունակից որդիները...

Ես երբեք չեմ մոռանա, երկրորդ որդու մահվան լուրը իմանալով՝ դեստրեճ էի նետվում մի այնպիսի զգացողությանը, կարծես սրտիս մեջ դանակ խրված լինեի: Մարդիկ զարկա ու մխրեցարության խոսքեր էին ասում, սակայն նրանք խոսքերը սրտիս չէին հասնում եւ ոչ մի ազդեցություն չէին բողմում ինձ վրա: Բայց ես երիտասարդների առաջնորդ էի եւ գիտեի, որ երեկոյան երիտասարդական ակումբում ուրախությամբ պետք է Աստծու Խորաբը քարոզեմ, իսկ սրտովս սեւ արյուն էր հոսում...:

Այն ժամանակ ես փակվեցի իմ սենյակում ու ծնկի գա-

ով՝ սկսեցի արթնել. «Տե՛ր Հիսուս, չե՞ որ Դու կաս: Գթա՛ ինձ՝ ծեղ վարդապետիս»: Ես բացեցի իմ Նոր Կտակարանը ու սկսեցի կարդալ: «Հիսուսը սասց. «Ի՞նչ խաղարությունն է՞նք ձեզ տալիս...»: Ես համոզված էի, որ այն, ինչ Հիսուսը ասել է, անհապարակորեն կատարվի: Ես Նրան խնդրեցի. «Տե՛ր Հիսուս, ես հիմնա չեմ կարողանում հասկանալ, թե ինչու՞ Դու դա թույլ տվեցիր, բայց տո՛ւր ինձ Քն խաղարությունը, իմ սիրտը լցրո՛ւ Քն խաղարությունը»: Եվ Նա հենց այդպես էլ արեց, ու ես հիմնա այստեղ վկայում եմ այդ մասին:

Դուք մի օր անույսյալնան ունենալու եք Նրա կարիքը: Այդ ժամանակ մարդկանցից ոչ ոք չի ուզեցա միտքարել ձեզ: Այն, որքան հրաշալի է ճանաչել Հիսուսին, Որը մեր փրկչության համար վճարեց Իր արյունը ու հարություն առալ: Երբ չկարողանաք միտքարել դիմեք Հիսուսին այսպես. «Տե՛ր ին, տո՛ւր ինձ Քն խաղարությունը»: Այն խաղարությունը, որ տալիս է Տերը, ուժգին հեղեղով հոսում է մեր սրտերում: Իսկ դա կատարվում է մեր կյանքի ամենադժվարին պահերին, երբ մեզ է մոտենում մահը: Պատկերացնո՞ւմ եք ձեր մահը: Այդ ժամանակ մարդկանցից ոչ մեկը չի կարողանալու ձեզ փրկել: Նույնիսկ ձեր սիրելի ձեռքը ստիպված է լինելու ցած իջնել: Դուք պետք է հայտնվեք Աստծու առաջ: Մի՞թե կուզեիք ձեր մեղքերով ներկայանալ Աստծուն: Քանի դեռ չեք ուշացել, ամուր բռնեք Փրկչի Սուրբ ձեռքը ու ասեք. «Դու ինձ գնեցիր Քն բանկազին արյունով ու ներեցիր իմ բոլոր մեղքերը»: Դրանից հետո միայն կարող ես հանգիստ մեկնել դեպի հավիտենականություն: Այնուամենայնիվ, ի՞նչ ենք մենք ստանում՝ մեր կյանքը Աստծուն նվիրաբերելով: Ես ուզում եմ թվարկել՝ խաղարություն Աստծու հետ, խաղարություն սեփական հոգում, սեղ՝ Աստծու եւ մեր մեղճավորի նկատմամբ այնքան, որ կարող ենք սիրել նաև մեր բշխաններին եւ բոլոր նրանց, ովքեր ազդում են մեր նյարդերի վրա: Մեր դժբախտության պահին ստանում ենք այնպիսի միտքարություն, որ թվում է՝ կարելի է տեսնել արեւի շողերի փայլը: Ստանում ենք հավիտենական կյանքի անմար հույս, Սուրբ Հոգի, մեղքերի թողություն, հանրեղություն...: ա՛խ, ես կարող եմ անվերջ շարունակել:

Ես քարոզս վերջացնում եմ բանաստեղծական տողերով, որոնք շատ բանի արժեն ինձ համար:

Արժե Քրիստոսի սեփականությունը լինել

Եվ Նրա կանչին «այդ» ասել.

Չե՞ որ Դու ինն ես, Հիսուս, ու ես՝ քոնը,

Եվ առանց երկմտելու բացականչել՝

Քն՝ հետոնորդն եմ, Քն՝ ծառան, Քն՝ նը, Քն՝ նը, Քն՝ նը...

Արժե Փրկչի սեփականությունը լինել: Ես ձեզ ցանկանում եմ այդպիսի հարստություն եւ այդպիսի երջանկություն: